Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

22-24(345-347)
31.07.2013թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱԿՏԻՎ ՀԱՆԳԻՍՏԸ ՀԱՄԱԴՐԵԼՈՎ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻՆ

Հուլիսի 15-ից կրկին իր դռներն է բացել «Ասպետ» ռազմամարզական ճամբարը: ԼՂՀ պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների հովանու ներքո գործող ճամբարն արդեն վեցերորդ տարին է հյուրընկալում նախազորակոչային տարիքի դպրոցականներին: Հուլիսի 22-ին հանդիսավորությամբ կատարվեց ճամբարի 2013թ. տարեշրջանի բացումը: Ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, Նախագահիի աշխատակազմի ղեկավար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մարատ Մուսայելյանը, Պաշտպանության նախարար Մովսես Հակոբյանը, կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, տարբեր գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանց, հանդիսավոր տողանով, ըստ դասակների շարված, դիմավորեց ճամբարի կազմը՝ նրա ղեկավար, զինղեկ, մայոր Արսեն Հարությունյանի գլխավորությամբ:

ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, ճամբարի աշխատանքները համակարգող Վալերի Գրիգորյանը բացման խոսքում ներկայացրեց երկու նախարարությունների օժանդակությամբ ստեղծված ճամբարային պայմանները՝ պատանիների ամառային հանգիստը բարձր մակարդակով անցկացնելու, ինչպես նաև ուսումնական տարվա ընթացքում նախնական զինվորական պատրաստությունից նրանց ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար. ճամբարականներին տրամադրության տակ են չափորոշիչներին համապատասխանող սպորտային ավանը, ֆուտբոլի, վոլեյբոլի, մեծ թենիսի մարզադաշտերը, լողավազաններ, հրաձգարան՝ ԿԱ ինքնաձիգից կրակելու համար, սեղանի թենիսներ և ռազմամարզական այլ գործիքներ ու հարմարանքներ: Ճամբարում առկա են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ ռազմագիտության հիմունքներին տիրապետելու, ճանաչելու մեր երկիրը, նրա պատմամշակութային արժեքները էքսկուրսիաներ, արշավներ կազմակերպելով, հաղորդակցվել ազգային մշակույթին՝ հյուրընկալած համույթների, ցուցադրված ֆիլմերի, դասախոսությունների միջոցով: Անհրաժեշտ գիտելիքներ և զենքին տիրապետելու հմտություններ, առողջ մարմին, ամուր կամք՝ ահա այն հատկանիշները, որ ճամբարակաները ձեռք են բերում՝ պարտաճանաչորեն կատարելով իրենց հրամանատար-ուսուցիչների հրամանները:

Ճամբարականներին ողջունեց ԼՂՀ ԱԺ նախագահ Ա. Ղուլյանը (ի դեպ, նրա որդին նույնպես «ասպետական» է): Նա մեր օրերի համար հրատապ համարեց այս ճամբարը՝ գտնելով, որ այն շատ լավ հնարավորություն է տալիս, որպեսզի երիտասարդները, որոնց վերապահված է 1-2 տարի հետո լինել մեր ՊԲ զինվորը, պատրաստ լինեն ֆիզիկապես, մտավի, հոգեբանորեն: Իսկ համատեղ անցկացրած օրերը կստեղծեն ամուր ընկերական հարաբերություններ, որոնք շատ կզգացվեն բանակում ծառայելու տարիներին: Աժ խոսնակը վստահեցրեց, որ երկրի իշխանություններն ամեն ինչ անելու են՝ այս կարգի ճամբարների, տարբեր հավաքների, ռազմամարզական դաստիարակության այլ ձևերի միջոցով երիտասարդներին պատրաստելու մեր երկրի պաշտպանությանը: «Այսօր մեր բոլորի ամենակարևոր խնդիրը մեր երկրի անվտանգությունն է, մեր սահմանների պաշտպանությունը, ինչը ձեր ծնողները, մեր ավագ սերունդը փայլուն կերպով իրականացրել են Արցախյան ազատամարտի տարիներին: Այժմ հերթափոխը ձերն է»,- ասաց Ա. Ղուլյանը՝ համոզվածություն հայտնելով, որ ճամբարային օրերին ստացած գիտելիքներն ու հմտությունները լավագույն նախապատրաստվածությունն են, որպեսզի հետագայում նրանց բանակային ծառայությունն անցնի ավելի հեշտ: «Ձեզ մնում է լավ սովորել դպրոցում, նաև դրան զուգահեռ պատրաստվել մեր երկրի պաշտպանությանը, պատրաստվել ֆիզիկապես, պատրաստվել այն գիտելիքների ձեռքբերմամբ, ինչ այսօր դասավանդվում է ձեզ: Իսկ այն, ինչ ստացել եք ձեր ընտանիքներում, նաև ունենալով մեր հազարավոր նահատակ հայրենակիցների, վիրավոր ազատամարտիկների, նաև ձեր կողքին ապրող կենդանի հերոսների անցած ճանապարհը, վստահ եմ, որ դուք այդ դասն ավելի վաղ եք յուրացնելու»:

Այն, որ ռազմամարզական ճամբարը նպաստում է զորակոչվածների բանակային առօրյան հեշտ կազմակերպելուն, վկայեց ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանը՝ ասելով, որ ավանդույթ դարձած «Ասպետ» ռազմամարզական ճամբարը, որը կազմակերպվում է հետախուզական գումարտակի բազայի վրա, իր դրական արդյունքներն է տալիս բանակ զորակոչված և ծառայություն ունեցող անձնակազմի վրա: Արցախում ռազմահայրենասիրական դաստիարակությունը դրված է պատշաճ մակարդակի վրա՝ ինչպես դպրոցներում, այնպես էլ ամառային շրջանում ճամբարների տեսքով, որոնք մի նպատակ են հետապնդում. այսօրվա պատանուն նախապատրաստել բանակային կյանքին: Նախարարը ճամբարը կարևորեց նաև միասնականության դաստիարակության տեսանկյունից. «Ամեն մի անհատի պատրաստվածությունը դեռևս չի նշանակում հաջողություն: Բանակում հաղթում են ոչ թե անհատները, այլ ջոկը, դասակը, գումարտակը, ստորաբաժանումը, զորամասը: Եվ այդ ճանապարհին սա ձեր առաջին քայլն է»:



ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը, կոչ անելով լավ հանգիստը համադրել ռազմական գործնական գիտելիքներ ստանալու հետ և նախապատրաստվելով յուրաքանչյուր երիտասարդի սրբազան պարտքի՝ հայրենիքի ծառայությանը, վստահեցրեց, որ նոր սերունդը ոչնչով հետ չի մնում նախորդներից՝ հայրենասիրությամբ տոգորված լինելով, որ ապագան, իրոք, նրանց ձեռքերում է:

ԼՂՀ զոհված ազատամարտիկների միության նախագահ Գալյա Առստամյանը համոզված է, որ նաև նման հավաքներից է սկսվում մեր հաղթարշավը. նույն այս տեղանքում ժամանակին հանգստացել են Ղարմետաքսկոմբինատի բանվորների երեխաները, որոնք հետագայում՝ Արցախյան պատերազմում սխրանքներ գործեցին: Նա կոչ արեց ճամբարականներին լինել ուժեղ և միշտ առաջինը, քանզի ուժեղին անգամ թշնամին է հարգում, իսկ թույլերին միայն խղճում են, արհամարհում:

Իրենց սրտի խոսքն ասացին ԼՂՀ ԱԱՄ «Հայրենյաց պաշտպան» ԵԿ անդամ Գրիգորի Հակոբյանը, ճամբարական Լևոն Խաչատրյանը:

Փոխանցիկ դրոշակակիր հետախույզները ներկայացրին ցուցադրական համարներ: Վերջում հանդես եկավ «Մենք ենք, մեր սարերը» ազգագրական համույթը:

Ճամբարը երեք հերթափոխով, տասնօրյա ժամկետով կընդունի ինչպես հանրապետության բոլոր շրջանների բարձր դասարանների տղաներին, այնպես էլ ՀՀ-ից և արտերկրից իրենց հասակակիցներին:

Ճամբարում այս տարի մի շարք նորամուծություններ են կատարվել. նախ՝ յուրաքանչյուր ճամբարական հնարավորություն կունենա երկու անգամ կրակել մարտական փամփուշտով: Ի դեպ, մեկ անգամ էլ դպրոցում են կրակում: Այսպիսով, մինչև բանակ զորակոչվելը պատանիները երեք անգամ մարտական փամփուշտով կրակելու փորձ են ունենում: Ճամբարականներին առաջին անգամ կցվել են ԱրՊՀ նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները՝ այդպես գործնական պարապմունք անցնելով, ինչն ուսանելի է:

Յուրաքանչյուր հերթափոխի փակմանը, ինչպես ամեն տարի, տարբեր վարժանքներում և մարզաձևերում լավագույն արդյունքներ ցուցաբերած ճամբարակաները պարգևատրվում են պատվոգրով և արժեքավոր նվերներով:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2013 թվականի հուլիսի 25-ին
պետական գրանցման համարը՝ 10513105
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար՝
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» հուլիսի 2013 թ. N167 – Ն

ք. Ստեփանակերտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 138-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին» N 138-Ն հրամանը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ս. ԱՍՐՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ

Տե՛ս էջ՝ 18-19

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԱՌԱՋԵԼ Է ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

ԼՂՀ պետական և ոչ պետական բուհերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված տեղերի համար առկա ուսուցման 2013թ. ընդունելության արդյունքները հրապարակվել են հուլիսի 15-ին: ՀՀ որոշ բուհերի (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան) մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով, որոնք անցկացրել են ներբուհական և կենտրոնացված քննություններ, արդյունքները հրապարակվել են մի փոքր ավելի ուշ: Ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են թափուր տեղերի մրցույթին: Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատել է հուլիսի 25-ին: Սկսված է հեռակա ուսուցման ընդունելության դիմորդների փաստաթղթերի ընդունումը:

Թե ինչպիսին է 2013-2014 ուսումնական տարվա բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության պատկերը՝ պարզաբանում է ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար, Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Յուրաքանչյուր տարի ԼՂՀ-ում ընդունելության քննությունները կազմակերպվում և անցկացվում են կառավարության կողմից նախօրոք հաստատված՝ ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված տեղերի, ինչպես նաև ԼՂՀ պետական և ոչ պետական բուհերի մասնագիտությունների ընդունելության տեղերի և կանոնների համաձայն: Նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 400 դիմորդով կրճատվել է միասնական քննություններին հայտագրվածների թիվը՝ կապված շրջանավարտների թվի նվազման հետ (անցյալ տարի եղել է շուրջ 1700 շրջանավարտ, այս տարի՝ շուրջ 1300): Գրանցվել է հետևյալ պատկերը.

ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված էր 81 տեղ, որից 60-ը՝ անվճար, 21-ը՝ վճարովի: Եղել է 110 դիմորդ: Ընդունվել է 81 դիմորդ, որից 59-ը՝ անվճար, 22-ը՝ վճարովի համակարգում: Դրանից զատ, բարձր միավորներ ստացած ևս 22 դիմորդներ ընդունվել են ՀՀ տարբեր բուհերի վճարովի համակարգ, որոնցից մի մասի վճարը կփոխհատուցի ԼՂՀ կառավարությունը: Ըստ բուհերի պատկերը հետևյալն է՝

Երևանի պետական համալսարան ընդունվել է 30 դիմորդ, որոնցից 18-ը՝ անվճար,12-ը՝ վճարովի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան՝ 23 դիմորդ, 11-ը՝ անվճար, 12-ը՝ վճարովի, Ճարտարապետության և շինարարության պետական համալսարան՝ 3 դիմորդ՝ բոլորն էլ անվճար, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան՝ 4 դիմորդ՝ բոլորն էլ անվճար, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան՝ 24 դիմորդ, ընդ որում, նրանցից 10-ն ընդունվել է անվճար համակարգ, իսկ 14-ի ուսման վարձը փոխհատուցելու է ԼՂՀ կառավարությունը: (Այդ նույնը վերաբերում է Երևանի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությանը, որտեղ անվճար ընդունվել է 1 հոգի, իսկ մյուս 4-ի ուսման վարձը կփոխհատուցի ԼՂՀ կառավարությունը):

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան ընդունվել է 7 դիմորդ, որոնցից 6-ը՝ անվճար, 1-ը՝ վճարովի ուսուցման համակարգ, Գեղարվեստի պետական ակադեմիա՝ 2 անվճար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա՝ 5 անվճար, ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտ՝ 8 հոգի, որից 3-ը՝ անվճար, 5-ը՝ վճարովի ուսուցման համակարգ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ 1 դիմորդ՝ անվճար ուսուցման համակարգ: Այսպիսով, ՀՀ բուհեր ընդունվել են 107 դիմորդներ:

Ա. Սարգսյանի պարզաբանմամբ՝ այստեղ գործել է հետևյալ սկզբունքը. ՀՀ պետական բուհերի այն դիմորդները, ովքեր երեք քննությունների արդյունքում հավաքել են 44 և բարձր միավորներ, ընդունվել են անվճար ուսուցման համակարգ, իսկ 2 միասնական քննություն հանձնած դիմորդներից անվճար ուսուցման համակարգ ընդունվել են 30-ից բարձր միավորներ ստացած դիմորդները:

Ա. Սարգսյանն առանձնացրեց նաև բարձր միավորներ՝ գերազանց ստացածներին, ովքեր 3 առարկաներից հավաքել են 54 և բարձր միավոր (իսկ 2 առարկայից հանձնելու դեպքում՝ 36 և բարձր միավոր): Այդպիսի դիմորդների թիվը ՀՀ պետական բուհեր ընդունվածների մեջ կազմում է 19 հոգի, որից 9-ը՝ Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան, 1-ը՝ ճարտարագիտական, 1-ը՝ ճարտարապետության և շինարարության համալսարան, 5-ը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան և 3-ը՝ Երևանի պետական համալսարան:

ՀՀ բուհերի՝ Արցախին հատկացված տեղերում ոչ բոլոր մասնագիտություններն են համալրվել. մի շարք մասնագիտություններում դիմորդներ չեն եղել, հիմնականում՝ ճարտարագիտական, ճարտարապետության և շինարարարության համալսարաններում. «Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում», «Կադաստր և կիրառական գեոդեզիա», «Բնապահպանական փորձաքննություն», «Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում», «Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ», «Շրջակա միջավայրի պահպանություն»: Թափուր տեղերը բաշխվել են 44 և բարձր (իսկ 2 քննությունների արդյունքով՝ 30 և բարձր) միավորներ ունեցողների միջև:

ԼՂՀ պետական և ոչ պետական բուհերի 2013-2014 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների պատկերը հետևյալն է.

ԱրՊՀ դիմել է 636 դիմորդ, որից ընդունվել է 422-ը, 161-ը՝ անվճար, 261-ը՝ վճարովի ուսուցման համակարգ: Ա. Սարգսյանը նշեց, որ 3 մասնագիտությունների գծով ընդունելություն չի կատարվել՝ «Քիմիա», «Կենսաբժշկական ճարտարագիտություն», և «Օգտակար հանածոների հետախուզում», չնայած սրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված է եղել 20 տեղ, որից 6-ական՝ անվճար:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ ընդունվել է 51 դիմորդ՝ 4 մասնագիտությունների գծով՝ «Հողաշինարարություն և հողային կադաստր»՝ 10 , «Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում»՝ 19, «Անասնաբուժություն»՝ 9, «Ագրոնոմիա»՝ 13,՝ բոլորն էլ անվճար հիմունքներով: Այստեղ նույնպես մի շարք մասնագիտությունների գծով ընդունելություն չի կատարվել: Ընդհանուր առմամբ, նախատեսված էր 200 տեղ, որից 90-ը՝ պետպատվերի համակարգ:

Հավատարմագրված ոչ պետական բուհեր ընդհանուր հաշվով ընդունվել է 19 դիմորդ:

Բարձր (մեկ քննությունից միջինը՝ 18) միավորներ ստացած դիմորդների թիվը ԱրՊՀ-ում 13 է: Առավել բարձր արդյունքներ գրանցվել են ԱրՊՀ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության գծով, որտեղ նախատեսված էր 50 տեղ, ընդունվել է 55 դիմորդ, ընդ որում, նրանցից 18-ը՝ 45 և բարձր միավորներով: Քանի որ ԱրՊՀ մի շարք մասնագիտություններում ոչ բոլոր նպատակային տեղերն են համալրվել, թափուր և պահուստային տեղերի հաշվին անվճար տեղերի թիվն ավելացել է: Այսպես, «Լրագրություն» ընդունված 11 դիմորդներից 7-ը պետպատվերի համակարգում է, «Ռուսաց լեզու և գրականություն»՝ 8 , «Հայոց լեզու և գրականություն»՝ 10, «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 13, «Ինֆորմատիկա»՝ 7 հոգի:

Մեր այն հարցին, թե բնագիտամաթեմատիկական մասնագիտությունների գծով ինչ մակարդակի դիմորդներ են ընդունվել (այստեղ սովորաբար թույլ գիտելիքներով դիմորդներն են գալիս), Ա. Սարգսյանը պատասխանեց, որ դիմորդների 30-40 տոկոսը համապատասխան առարկաներից ստացել է անբավարար գնահատականներ, այնուամենայնիվ, որոշ մասնագիտություններում գրանցվել են եթե ոչ գոհացուցիչ, համենայն դեպս, բավարար արդյունքներ: Օրինակ, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բաժին ընդունվել է 10 հոգի, որից 7-ը՝ անվճար, «Մաթեմատիկա, համակարգչային գիտելիքներ»՝ 16 հոգի, որից 6-ը՝ անվճար,«Ֆիզիկա»՝ 8 հոգի, որից 6-ը՝ անվճար, «Կենսաբանություն»՝ 14 հոգի, որից 3-ը՝ անվճար: Ըստ նրա, սա նախորդ տարիների համեմատ առաջընթաց է: Լավ արդյունքներ են գրանցվել «Աշխարհագրություն» մասնագիտությունից: Այստեղ ընդունվել է 20 դիմորդ, որից 4-ը՝ անվճար, ինչը նույնպես նախորդ տարիների համեմատ առաջխաղացում է: Համեմատաբար ցածր արդյունքներ են գրանցվել ճարտարագիտական մասնագիտություններում, համեմատաբար բարձր է ցուցանիշը «Կառավարման տեղեկատվական համակարգերում»՝ 10 հոգի, որից 4-ը՝ անվճար: «Էլեկտրաէներգետիկա» մասնագիտությունում ընդամենը 5 հոգի են, «Հեռահաղորդակցություն»՝ 5 , «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն»՝ 14, որից 7-ը՝ անվճար:

Պետք է ասել, որ շատ բարձր միավորներ հավաքած որոշ դիմորդներ նախընտրել են Արցախի պետական համալսարանը և ոչ թե ՀՀ բուհեր: Միայն «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունում 7 հոգի հավաքել են 50 և ավելի միավորներ: Փոխնախարարի տեսակետով, տեղում կրթություն ստանալու դիմորդների ցանկությունը չպիտի բացատրել միայն սոցիալական դրդապատճառներով: ԱրՊՀ-ն մի շարք մասնագիտություններում կադրերի մակարդակով առաջընթաց ունի, ինչպես, օրինակ՝ «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» , «Ռուսաց լեզու և գրականություն», «Պատմություն», «ֆիզիկա», «Մանկավարժություն և հոգեբանություն» և այլն:

Ա. Սարգսյանը վերջում հավելեց, որ 5 դիմորդ ընդունվել է Հայաստանի Ամերիկյան համալսարան:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀԱՐՄԱՆԱՀՐԱՇ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՄԱՐԱՍ

Բերկրանք ու հիացմունք ես զգում, երբ քո շրջապատում տեսնում ես այնպիսի մարդկանց, որոնց անբասիր կենսագրությունը, աշխատանքի ողջ ուղին, կատարածն ու թողածը միայն հպարտանալու տեղիք են տալիս: Նման մարդիկ իրենց ամբողջ էությամբ տարբերվում են բոլորից: Կյանքին նայում են երազկոտ աչքերով, ակնբախ լավատեսությամբ: Ավելի է ուռճանում սերդ ու հարգանքդ այդ անհատների հանդեպ, երբ գիտակցում ես նրանց դժվարին ու անխոնջ աշխատանքը, նրանց մանկավարժական պատվաբեր գործունեությունը:

Լաուրա Աթայան... Շատերին հայտնի իր յուրօրինակ և հարուստ ներաշխարհով ու անսպառ էներգիայով, որին կնախանձեին անգամ երիտասարդները: Ամբողջ կյանքում գործ ունենալով մանուկների հետ և ինքնամոռաց զբաղվելով մատաղ սերնդի դաստիարակության վեհ գործով՝ առայսօր ընկեր Աթայանի ուշադրության կենտրոնում սոսկ երեխաներն են:

Վերջերս նա կազմակերպեց մի հիանալի էքսկուրսիա դեպի պատմական Ամարաս:

Մասնակիցներն Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանցիներն էին: Նրանց ուրախությանը չափ չկար. ուսուցչուհին այնքան էր պատմել Արցախի պատմամշակութային արժեքների՝

եկեղեցիների և վանքերի, խաչքարերի և հուշարձանների, արցախյան գեղատեսիլ և անկրկնելի բնության մասին, որ ոգևորված աշակերտները շտապում էին ժամ առաջ տեսնել դրանցից մեկը՝ Ամարասը:

Աշակերտները զարմանքով ու հիացմունքով էին լսում դասվարի բացատրությունները: Նրանք հպարտ և ուրախ էին, որ գտնվում են Արցախի առաջին դպրոցում: Պահպանված պարիսպներին ու վանքի օժանդակ շինություններին նայում էին որպես սուրբ մասունքներ:

Վանքի բակը, որ ասես երկնային դրախտավայր լիներ, ներկաներին կախարդում էր իր ավանդական թթենիներով, կուսական գեղեցկությամբ: Երեխաներն ու նրանց ծնողներն օրը վայելում էին լիովին՝ զգալով նրա անմոռանալի խորհուրդը:

Աշակերտները, պատասխանելով դասվարի հարցերին, ցույց տվին դպրոցում սովորածը: Նրանց համար ամեն ինչից վեր է Արցախ աշխարհը, նրա անառիկությունը: Երեխաները գիտեին հայրենի բնության, կենդանական աշխարհի մասին, իսկ ամենից լավ նկարագրեցին մարդուն՝ իր ամենաբարի ու վսեմ հատկանիշներով: Այնուհետև արտասանեցին, երգեցին ու պարեցին՝ մեծ խանդաղատանք պարգևելով ուսուցչուհուն և ծնողներին:

- Այն, որ այսօր ընտրել ենք հենց այս պատմական օջախը, մեծ իմաստ է իր մեջ ներառում: Չէ՞ որ այստեղ է հիմնվել Արցախ աշխարհի առաջին դպրոցը: Արցախի ժողովուրդը, որ տանջվել ու չարչարվել է բազմաթիվ ոսոխների կողմից, երբեք չի կորցրել իր հավատքը և սերը գրի ու գիտության հանդեպ: Ձենքն ու գրիչը միշտ անպակաս են եղել հայի ձեռքից: Ահավասիկ, հայը կարողացել է հասնել ամենամեծ բարձունքներին ու ստեղծել այսպիսի հզոր երկիր: Այսօր ես պատգամում եմ ձեզ միշտ ապրել հայավարի, արժանավայել: Համոզված եմ, որ այս տարիների ընթացքում կարողացել եք գիտակցել ամենակարևորը. սիրել Հայրենիքը և ուսումը,- ասաց Լաուրա Աթայանը:

Երեխաներն Արցախի հնամենի այս սրբատեղիում երդվեցին լավ սովորել և իրականացնել դասվարի ու ծնողների հույսերը:

Հիրավի, էքսկուրսիան հասավ իր նպատակին: Այս զարմանահրաշ ուգևորությունը դեռ երկար կմնա 4-րդ դասարանցիների և նրանց ծնողների հիշողության մեջ:

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

ԿԵՆԱՑ ՃԱՆԱՊԱՐՀ

ՕՆՎԱԾ ՑԱՎԻՑ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՀԱՎԱՏԻՑ

Հույս, Հավատ, Սեր: Սրբազան այս խոսքերն ահա քսան տարի առաջ են տանում մի կազմակերպության, որը ստեղծվելով պատերազմական թոհուբոհի ժամանակ, կենաց-մահու սահմանագծում, մեր հայրենիքի ազատությանն իրենց կյանքը զոհաբերած քաջորդիների հիշատակը վառ պահելու, նրանց սխրանքը սերունդներին փոխանցելու, զոհվածների ընտանիքներին նեցուկ կանգնելու առաքելություն է վերցրել: ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միությունը 20 տարեկան է: Ինչպես ասում է նրա հիմնադիր-նախագահ Գալյա Առստամյանը, ուրախ միություն չէ այն, բայց որպես մեր երկրի հասարակական-քաղաքական հատվածի մի կարևորագույն օղակ, ուրախացնում է իր հայրենավեր ձեռնարկումներով: Այսօր Արցախում ոչ մի միջոցառում՝ լինի պետական մակարդակով, թե ընտանեկան, չի անցկացվում առանց հիշատակի խոսք ասելու վասն հայրենյաց անմահ դարձածների մասին: Իսկ միության հուշաթանգարանը, հիրավի, դարձել է մատաղ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու դպրոց: Այն ստեղծվել է, որպեսզի անուն առ անուն բոլորը հիշվեն:

Օրերս հանդիսավորությամբ նշվեց միության ստեղծման 20-րդ տարեդարձը: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, Նախագահի աշխատակազմի ղեկավար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մարատ Մուսայելյանը, ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ, շրջվարչակազմերի ղեկավարներ, բարձրաստիճան զինվորականներ, մտավորականության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, զոհված ազատամարտիկների ծնողներ, հարազատներ, զինծառայողներ, զինվորներ, բարերարներ, հյուրեր Ռուսաստանից և Հայաստանից, ովքեր կազմակերպության ստեղծման օրից կանգնած են նրա կողքին: Հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչներին մի հարկի տակ հավաքելը խորհրդանշական է. արտահայտում է մեր պայքարի այն մասը, որով պարտադրվել էինք վճարել մեր ազատագրական պայքարի շրջանակներում: Դա մեր ազգային-ազատագրական պայքարի մի արտացոլումն է, որտեղ բոլորը տարբեր ձևերով իրենց մասնակցությունն են ունեցել:

Ներկաներին Մեծ մոր իրավունքով ողջունեց ՀԱՀՄ նախագահ Գալյա Առստամյանը, ում մտահղացմամբ հիմնադրվել է միությունը՝ իր շուրջը համախմբելով զոհված ազատամարտիկների հարազատներին և մայրերին՝ առաջին հերթին ստեղծել մի օջախ, որը հայրենական տան ծգողությամբ իր մոտ է բերում Արցախ այցելած արժանապատիվ մարդկանց, որտեղ, ինչպես սուրբ խորանում, ինքնամաքրումի պահեր է ապրում յուրաքանչյուրը, որտեղ ապրելու իմաստը ոգու կողմնորոշում է ստանում:

Միության ղեկավարի խոսքն առաջինն ուղղված էր զինվորներին: Ի դեպ, նրանք զոհված ազատամարտիկների որդիներն էին, ովքեր փոխարինել են իրենց ծնողներին՝ համազգեստ կրելով, փաստելով, որ այսօրվա երիտասարդը պատրաստ է իր հոր կերտածը պահելու, պահպանելու և վերջնակետին հասցնելու:

«Զինվորնե՛ր, ոսոխը չի լռում, բայց դուք չվախենաք»,- դիմելով նրանց՝ ասաց մայր Գալյան, քանզի Արցախյան պատերազմի արշալույսին ոչինչ չունեինք, բայց հիմա ամեն ինչ ունենք, հզոր բանակ և ամենից գլխավորը՝ Ոգի, որը զինվորի ամենամեծ զենքն է»: Միության հոբելյանը առաջինը շնորհավորեց ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը: Նա կարևորեց միջոցառումը մի քանի տեսանկյունից. նախ՝ հիշելու բոլոր այն տղաներին, ովքեր իրենց կյանքն են դրել հայրենիքի ազատության զոհասեղանին, ապա՝ մեկ անգամ ևս երախտագիտություն հայտնելու հերոս զավակներ ծնած մայրերին և երրորդ՝ հավաստիացնելու, որ այն, ինչին հասել ենք, գտնվում է հուսալի ձեռքերում: Պաշտպանության նախարարը նշեց, որ աշխարհի բոլոր երկրներն անկախություն և ազատություն են ձեռք բերել տարբեր ձևով, Արցախի ժողովրդին բախտ է վիճակվել իր անկախությունը սեփական ձեռքերով կերտելու: «Մենք շատ թանկ ենք վճարել այս պատերազմում: Մեր ազգի սերուցքը նահատակվել է Արցախյան գոյապայքարի ժամանակ: Բայց դա այդպես պետք է լիներ, եթե հողը չպարարտացնենք, բերք չի տա»,- ասաց նա՝ ավելացնելով ապա, որ եթե մեր անկախությունը հեշտությամբ ձեռք բերած լինեինք, կարող էինք հեշտությամբ էլ կորցնել: Այդ պատճառով էլ մեր զոհերը մեզ պարտավորեցնում են միշտ զգաստ լինել, մեր նվաճումները պահել ու փայփայել և փոխանցել մեր ապագա սերունդներին:

Միության դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում բարձր գնահատեց ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Ղուլյանը: «Կազմակերպությունն ստեղծվել է ցավից, բայց նաև ապագայի հանդեպ ունեցած հավատից: Անչափ ծանր է ամեն օր շփվել, աշխատել երեք հազար երեք հարյուր զոհվածների լուսանկարներից նայող հայացքների ներքո, լսել նրանց պատգամն ու խորհուրդները, որոնք ստիպում են մեզ միշտ զգոն լինել, քանզի թշնամին այսօր էլ քնած չէ: Այսօր ամեն օր զգում ենք, որ սահմանից այն կողմ հոխորտանքը, հակահայկական քարոզչությունը, ատելությունը մեծանում է»: Ա՛ժ խոսնակը վստահեցրեց, որ երկրի իշխանությունները մեծ տեղ են տալիս նման կառույցներին, և այդ քաղաքականությունը շարունակվելու է:

Ներկաները մեծ խանդավառությամբ ընդունեցին արցախցիների մեծ բարեկամ, բուլղարացի հեռուստալրագրող Ցվետանա Պասկալևայի ելույթը, որը լի էր հայ ժողովրդի և առանձնապես արցախցիների հանդեպ մեծ սիրով ու հարգանքով: Հիրավի, նա հայ ժողովրդի մեծ բարեկամներից է, ով Արցախյան պատերազմի սկզբից մինչ այսօր նրա հետ է ոչ միայն մտքով, այլև ֆիզիկապես, որովհետև այդպես է խոստացել իր զոհված ընկերներին: Ահա արդեն ավելի քան երկու տասնամյակ է, որպես հայ ժողովիդի արժանավոր դուստր, ապրում է Երևանում, կիսում մեր ժողովրդի հոգսերը, իր նպաստը բերում նրա զարգացմանը: Որպես նվեր նա բերել էր իր ստեղծած վավերագրական ֆիլմերն Արցախյան պատերազմի մասին: Դրանք շրջել են աշխարհով մեկ, ցուցադրվել տարբեր երկրներում, շնորհիվ դրանց աշխարհը իմացավ ղարաբաղցիների խիզախության, ոգու ուժի, անկոտրում կամքի մասին:

«Ես գիտեմ, որ ժողովրդի մեջ այդ ուժը կա, քանզի ես տեսել եմ դա մարտի դաշտում: Ես այսօր եկել եմ ձեզ շնորհավորելու և կարծում եմ, որ այսօր ձեզ քիչ է մնացել վերջնական հաղթանակի հասնելու: Ես խոսք եմ տվել զոհված այս տղաների հիշատակի առաջ, որ հաղթանակը կտոնեմ ձեզ հետ միասին: Ես իմ խոսքը պահում եմ արդեն 22 տարի»:

Կազմակերպությանը շնորհավորեցին «Միասնական հայրենիք», «Երկրապահ կամավորականների միություն» կազմակերպությունների ներկայացուցիչները, ազատամարտիկ-գրող Անդրանիկ Արշակյանը: Բարձր գնահատելով միության առաքելությունը, նրանք մասնավորապես արժևորեցին նրա նախագահի տքնաջան, հետևողական աշխատանքը՝ ասելով, որ նրա կատարածը հավասարազոր է մի ամբողջ գիտահետազոտական ինստիտուտի կատարածին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանաստեղծ Սոկրատ Խանյանը միջոցառումը համարեց պատմական՝ ընդգծելով հատկապես Հուշաթանգարանի նշանակությունը՝ որպես ազգային թանգարան: Նա զուգահեռներ անցկացրեց 20-րդ դարի սկզբին ազգագրագետ Երվանդ Լալայանի և, ի դեմս Գալյա Առստամյանի՝ ՀԱՀՄ անդամների այդօրինակ գործունեության միջև. Ե. Լալայանը գնացել էր Արևմտյան Հայաստան և վերադարձել մասունքներով ու Թիֆլիսում բացել ազգագրական թանգարան: Թումանյանը ողջունել է ձեռնարկումը՝ առանձնապես ընդգծելով, որ այդ թանգարանում առկա են նաև մեր ֆիդայիների մասունքները: «Մեր թանգարանը, ով մեծ նվիրումով ու եռանդով ստեղծել է Գ. Առստամյանը, մեծ նվեր է մեր ժողովրդին: Սա սովորական թանգարան չէ, այլ մի դպրոց: Այն գրողներին մղում է ստեղծագործելու»,- ասաց նա և կարդաց իր նոր բանաստեղծությունը՝ նվիրված կազմակերպության 20-ամյակին՝ խոստանալով թանգարանին նվիրել նաև իր տասհատորյակը: Ի դեպ, ասենք, որ Միությունը ստեղծել է նաև հարուստ գրադարան, որից օգտվում են ոչ միայն զոհվածների հարազատները: Միջոցառման ժամանակ «Երկրապահ կամավորականների միության» ղեկավար Մանվել Գրիգորյանի անունից գրքեր և տեսահոլովակ հանձնվեց:

Անշուշտ, մեծ է ցանկացած թանգարանի գոյության իմաստը, բայց ինչպես հյուրերից նկատեց Ա. Արշակյանը, «Տասնյակ թանգարաններ չեն կարող փոքր-ինչ փոխարինել մեր կորուստները: Ամենամեծ թանգարանը մեր հոգում է: Ամենամեծ կոթողը մեր հոգու մեջ եղած կոթողներն են, որոնք մեզ ստիպում են արժանավայել ապրել, արժանավայել՝ տղերքի հիշատակին: Ինչքան մեծ է կորստի ցավը, հպարտության զգացումն ավելի մեծ պետք է լինի մեր մեջ: Որևէ նահանջ մեր հակառակորդի համար վառված փարոս կլինի, իրավունք չունե՛նք»:

Իրենց սրտի խոսքն ասացին զոհված ազատամարտիկների հարազատները՝ բժիշկ Փարավոն Ադամյանը, բանաստեղծ և մշակույթի գործիչ Զոյա Հովհաննիսյանը, ուսուցչուհի Գրետա Գրիգորյանը, Իրա Խաչատրյանը և ուրիշներ: Իսկ հանդիսությունը վարում էր ԼՂՀ ՀԱՀՄ վարչության անդամ Յուրի Ավանեսյանը:

Ամբողջ միջոցառման ընթացքում կարմիր թելի պես անցնում էր հայ ժողովրդի հերոսական ոգու, հայրենասիրության, միասնության պահպանման, մայրերի անկոտրում կամքի և տոկունության գաղափարը:

Միջոցառումն ուղեկցվում էր հայրենասիրական երգերով, որոնք հրաշալի կատարեցին ինչպես ՊՆ «Ասպետ» համույթի մասնակիցները, այնպես էլ մայրերը: «Մենք չենք հավաքվել, որ լացենք, որ մեր տղաները չկան: Մեր տղաները չկան, այո, բայց մեր տղաներն այստեղ նստած են և փոխարինում են նրանց»,- ասաց տիկին Գալյան:

Առանց հուզմունքի և հպարտության անհնար էր տեսնել այդ ամենը: Եվ երիցս համոզվում ես նժդեհյան ճշմարտության մեջ, որ ազգի հաղթանակը նրա մայրերի ձեռքերում է:

Արցախում կան մեր քաջորդիների սխրանքը խորհրդանշող բազմաթիվ հուշարձաններ: Հարկ է, որ ունենանք նաև հուշարձան՝ մայրերին:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ճանաչիր, որ սիրես

ԲՆԱՍԵՐՆԵՐԸ ԽԱՉԻՆՏԱՓՈՒՄ

Խաչինտափը Քաշաթաղի շրջանի հյուսիսային գյուղերից է՝ Վակունիս համայնքի կազմում: Անտառամերձ և գրեթե ալպիական գոտում գտնվող գյուղն ունի գեղատեսիլ բնություն, մաքուր օդ, տարածքում կան պատմամշակութային և բնակերտ հուշարձաններ: Ուստի պատահական չէ, որ արդեն մի քանի տարի այստեղ կայանում է ճամբարը: Հուլիսի 21-ից Համահայկական բնապահպանական ճակատը կազմակերպել էր ճամբարում՝ 10-օրյա տևողությամբ: 22 երիտասարդներ՝ տարբեր մասնագետներ, ուսանողներ Երևանից և ՀՀ այլ մարզերից այստեղ էին եկել՝ ճանաչելու Արցախ աշխարհի այս գողտրիկ անկյունը, ծանոթանալու Քաշաթաղի բնությանը, մարդկանց: Ճամբարականների առօրյային ծանոթանալու նպատակով շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանի հետ այցելեցի Խաչինտափ, զրուցեցի Ճամբարի հրամանատար Արմենակ Աբրահամյանի, պատասխանատու Եղիա Ներսեսյանի և երիտասարդների հետ: Եղիա Ներսեսյանն ասաց, որ իրենց այստեղ գալու նպատակն է՝ մարդ-բնություն ներդաշնակության վերականգնումը, հայրենաճանաչությունը, վայրի բնությունում ապրելուն ընտելանալն ու կարողանալը:

- Կարևոր է, որ հայ երիտասարդներն իմանան, թե ինչպիսին է ազատագրված հայրենիքը, ինչ գնով են հետ բերվել հայրենի տարածքները: Երեկ մենք այցելեցինք Վակունիսի դիմաց գտնվող Սիսիանի ջոկատի նահատակ տղաների հուշարձան. կանգուն է նրանց հիշատակը հավերժացնող խաչքարը, պահպանվում է նրանց պայթած մեքենայի մնացորդը (1993թ. մարտի 31-ին Սիսիանի մի ջոկատի տղաները՝ Վուրգ Ոսկանյանի հրամանատարությամբ, Վակունիս գյուղ մտնելիս ընկան թշնամու չսպասված հրետակոծության ու գնդակոծության տակ. 11 հոգի նահատակվեցին. նաև՝ հրամանատարը.-Զ. Ը.): Զորավար Անդրանիկն ասում էր՝ ճանաչիր, որ սիրես,–շարունակեց Եղիան՝ հավելելով, որ բոլորն էլ առաջին անգամ են եկել Արցախ, և իրենց ճամբարը գործում է խիստ ռեժիմով. բացօթյա է, սննդակարգը՝ բուսական, արթնանում են առավոտյան 5:30-ին, իսկ հինգը երեկոյան 22-ին է: Գիշերը հերթապահները հսկում են ճամբարի հանգիստը: Ծրագրված է՝ ամեն օր արշավ կազմակերպել մոտակա բնական և պատմական հուշարձանները: Այս հարցում նրանց ուղեկցում է Խաչինտափ գյուղից դպրոցական Նարեն:

Ճամբարականներից Տաթևիկ Մայիլյանը Երևանից է, ուսանում է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում: Ասաց, որ հիացած է բնությամբ, գիշերը քնել է հանգիստ: Գտնում է, որ նման պայմաններում մի քանի օր ապրելը կարևոր է: Շողիկ Մելքոնյանը ծնունդով Գյումրիից է, բայց բնակվում է Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղում, ունի հաշվապահական կրթություն:

- Առաջին անգամ եմ Արցախ եկել. շատ սիրեցի այս բնությունը, բուսակերությունն էլ տանելի է: Կարևոր է, որ կազմակերպվում են արշավներ, զբաղվում ենք մարմնամարզությամբ: Հոգնում ենք, բայց հաճելի հոգնածություն է,- ասաց Շողիկը՝ խոստովանելով, որ չգիտեր՝ այսպիսի տեղ կա հայոց երկրում, որտեղ օդն անգամ յուրահատուկ է:

Անին Երևանից է, այս տարի ընդունվել է ԵՊՀ սոցիոլոգիայի բաժին: Ուրախ է Քաշաթաղում լինելու համար, առօրյան էլ հետաքրքիր է. գիշերը հերթապահել է՝ հսկելով ընկերների անդորրը, բացի այդ, պատրաստվում է ինտելեկտուալ մրցույթի: Երիտասարդներն իրենց հետ չեն վերցրել հեռախոս, հագուստը սահմանափակ է, հիմնականում գրքեր են բերել: Անհամբեր սպասել են, թե երբ կհասնեն այստեղ, որոշված է՝ կապ չունենալ ծնողների հետ. փորձում են նմանվել այն զինվորներին, ովքեր շաբաթներով, ամիսներով հեռու են եղել տնից, նույն հագուստն են կրել, սնվել են սահմանափակ: Արմեն Ադամյանը Մասիսից է, ծառայել է ազգային բանակում (Քարվաճառ), այնուհետև՝ խաղաղապահ զորքերում, այժմ զորացրվել է և միացել բնապահպանական ճակատին: Նա էլ է գիշերը հերթապահել, բայց հոգնած չէր. նախկին զինվորը սովոր է նման կյանքի: Այն հարցին՝ ՝ինչ դժվարություններ կան, բոլորը նույնը պատասխանեցին. «Դժվարը Խաչինտափից բաժանվելը կլինի»: Առաջարկեցի՝ գալ և Քաշաթաղում բնակվել:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2012-2013 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներդպրոցական վերահսկողության հիմնական ձևը միշտ եղել և մնում են դասալսումները



ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչությունը 2012-2013 ուստարվա ընթացքում, հավատարիմ մնալով իր սկզբունքներին ու վերցրած կուրսին, նպատակաուղղված ու լայնածավալ աշխատանքներ է իրականացրել «Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենքով և տեսչության կանոնադրությամբ ամրագրված՝ տեսչության խնդիրների ու նպատակների, գործառույթների, ինչպես նաև «Քաղծառայության մասին» ԼՂՀ օրենքով և քաղծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված իրավունքների ու պարտականությունների շրջանակներում:

Անցած ուսումնական տարին տեսչության համար եղել է 6-րդը, որը տեսչությունը անցկացրեց ոչ պակաս եռանդով և ուժերի գերլարումով, ինչպես նախորդ՝ հոբելյանական 5-րդ տարին:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչության կողմից կատարված աշխատանքները ծավալային առումով գերազանցեցին նախորդներին, ինչը տեսչության բոլոր անդամների քրտնաջան աշխատանքի արդյունք է:

2012-2013 ուստարին պետական տեսուչների համար անցավ շատ արագ և աննկատ՝ չնայած տեսչության աշխատանքային պլանների առավել քան գերլարված, հագեցած բնույթին:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչությունը առաջնորդվել է ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված գործունեության հստակ ծրագրով, որը կազմվել է ոչ միայն տվյալ ֆինանսական տարվա, այլև յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:

Հաշվետվությունն ընդգրկում է 2012թ. հուլիսից 2013թ. հուլիսն ընկած ժամանակահատվածը (նախորդ հաշվետվությունն ընդգրկել է 2011թ. հուլիսից 2012թ. հուլիսն ընկած ժամանակահատվածը, տե՛ս «Լուսարար», 2012թ. հուլիսի 25, հ. 21-22):

Տեսչությունը գիտակցում է, թե ինչքանով է իր կատարած աշխատանքը նպաստում յուրաքանչյուր կրթական հաստատության առջև դրված հիմնական խնդիրների ու նպատակների իրականացմանը: Ես, որպես տեսչապետ, ձգտել եմ ամեն ինչ անել բոլորին համախմբելու մի գաղափարի շուրջ, առանձնապես սկսնակ պետական տեսուչներին, այն է՝ անմնացորդ նվիրվել մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության պատվաբեր գործին, անել հնարավոր ամեն ինչ՝ ազնիվ անուն ձեռք բերելու, մանկավարժների սիրուն ու հարգանքին արժանանալու համար: Իսկ այնտեղ, որտեղ կա գաղափար, դրան հասնելու նպատակադրվածություն ու ձգտում, հաջողություններն անխուսափելի են:

Հենց միասնական գաղափարի շուրջ բռունգքվելն օգնեց տեսչությանը հաշվետու ժամանակահատվածում ևս անմնացորդ իրականացնել նախատեսված բոլոր միջոցառումներն ու ստուգումները, ինչպես նաև կյանքի կոչել մի շարք լրացուցիչ հանձնարարականներ՝ տրված ԼՂՀ ԿԳ նախարարի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ցանկացած միջոցառում նախապես համաձայնեցվել է նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ:

Պետական տեսուչները, որպես կանոն, իրենց մասնակցությունն են բերել նախարարության կողմից կազմակերպված յուրաքանչյուր միջոցառման: Տեսչապետը, բաժնի վարիչները, ինչպես նաև «Տարվա լավագույն դպրոց», «Լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների և այլ միջոցառումների անցկացման հանձնաժողովների անդամ հանդիսացող պետական տեսուչներն իրենց մասնակցությունն են բերել նշված մրցույթների անցկացման աշխատանքներին: Բացի դրանից, տեսչությունն իր մասնակցությունն է բերել «Գնահատման ու թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ու անցկացված փորձնական քննությունների համար թեստային առաջադրանքների ստուգման, պետական ավարտական ու միասնական քննությունների անցկացման աշխատանքներին: Բացի վերը նշվածներից, տեսչությունը մասնակցել է ամեն տարի անցկացվող ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություններին, ուսուցիչներին ծանոթացրել ուսումնական պլաններում և գործածության մեջ մտած նոր դասագրքերում առկա նորամուծություններին ու փոփոխություններին:

Տեսչությունը սերտորեն համագործակցել է նախարարության ԿԳ վարչության, «Լեզվի տեսչության» ու մյուս բոլոր բաժինների հետ:

Պետական տեսուչներն ակտիվ մասնակցություն են ունեցել ԼՂՀ դպրոցականների 2013թ. առարկայական օլիմպիադայի կազմակերպման և անցկացման աշխատանքներին՝ կազմել են շրջանային փուլի առաջադրանքները, մասնակցել հանրապետական փուլի աշխատանքների ստուգմանը:

2013թ. նախաշեմին կազմվել ու նախարարի հաստատմանն են ներկայացվել ԿՊ տեսչության 2013թ. աշխատանքային ծրագրի ու դրա հետ կապված տրանսպորտային ծախսերի մասին հաշվարկների նախագծերը: Ս. թ. հուլիսի 15-ի դրությամբ ավարտվել ու նախարարության ֆինանսատնտեսական բաժնին են հանձնվել կրթության պետական տեսչության բարեփոխումների միջնաժամկետ ծրագրերը 2014-2016 թվականների համար՝ համապատասխան տրանսպորտային ծախսերի հաշվարկներով:

Տեսչապետը, ավագ տեսուչներն ու մյուս պետական տեսուչները, բացի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված պարտականությունների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքներից, իրականացրել են նաև այլ բնույթի մեթոդամանկավարժական ու հասարակական գործունեություն: Նրանք ակտիվորեն մասնակցել են ԼՂՀ Անկախության հռչակագրի ընդունման, Շուշիի ազատագրման և ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծման 21-ամյակի կապակցությամբ ձեռնարկված բոլոր միջոցառումներին՝ «Անկախության դաս», «Արիության դաս» և այլն:

2012թ. հոկտեմբեր ամսում Երևան քաղաքում կայացած ԱՊՀ երկրների կրթության համակարգի աշխատողների 2-րդ համագումարին իր մասնակցությունն է բերել ռուսաց լեզվի մասնագետ, պետական տեսուչ Ռ. Օսիպովը:

Բացի սկսնակներից, բոլոր պետական տեսուչները մասնակցել են 2013թ. մարտի 16-23-ը Ստեփանակերտում կազմակերպված ու անցկացված նախաատեստավորման դասընթացներին ու ստացել վկայագրեր:

Տեսչապետը մասնակցել է Շուշիի շրջանի ուսուցիչների փնջային մեթոդմիավորման աշխատանքներին, որը տեղի է ունեցել ս. թ. ապրիլի 21-ին՝ Շուշիի Դանիել Ղազարյանի անվան դպրոցում:

Տեսչության պետը, բաժնի վարիչներն ու մի շարք պետական տեսուչներ ընդգրկված են եղել Արցախի պետական, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանների պետական հանձնաժողովների կազմում՝ որպես նախագահ կամ անդամներ:

Տեսչության պետը կատարել է մի շարք հասարակական պարտականություններ՝ նախարարության լիցենզավորման և ատեստավորման, ուսուցիչների ատեստավորման տարածքային ու հանրապետական հանձնաժողովների, ԱրՊՀ խորհրդի անդամ է, «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահը:

Բացի վերը նշված տարաբնույթ աշխատանքներից, հաշվետու ժամանակահատվածում տեսչության մտահոգության առարկան, ինչպես միշտ, տեսչության՝ օրենքով ամրագրված հիմնական գործառույթների՝ հանրակրթական դպրոցներում, արհեստագործական ուսումնարաններում ու նախադպրոցական հիմնարկներում ստուգումների և ուսումնասիրությունների անցկացումն է: Առանց բացառության բոլոր ստուգումները՝ թեմատիկ թե համակողմանի, ուղեկցվել են անհրաժեշտ մեթոդամանկավարժական ու մասնագիտական օգնության ցուցաբերմամբ:

Որպես կանոն՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ տեսչական հանձնախմբերի կողմից կազմվել են համապատասխան տեղեկանքներ՝ կոնկրետ հանձնարարականներով և առաջարկություններով, ու մեկական օրինակ ուղարկվել է շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժիններ, կրթական հաստատություններ՝ որպես գործողությունների ծրագրեր առաջնորդվելու համար:

Հանրապետության կրթական հաստատությունների ղեկավարման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում նախարարության կողմից իրականացվող բարեփոխումների նկատմամբ համապատասխան վերահսկողություն և անհրաժեշտ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով տեսչության կողմից՝ հարկ եղած դեպքում ԿԳ վարչության և այլ կրթական հաստատությունների ճանաչված մասնագետների ներգրավմամբ իրականացվել են ստուգումներ:

Ստորև բերվում են 2012-2013 ուստարում տեսչավորման ենթարկված բոլոր կրթական հաստատությունների ցուցակները՝ ըստ վարչական շրջանների.

ք. Ստեփանակերտ

1. Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոց (թեմատիկ)
2. Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոց (թեմատիկ)
3. Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոց (թեմատիկ)
4. Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոց /թեմատիկ/
5. Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոց /թեմատիկ/
6. Հ. 6 հիմնական դպրոց /թեմատիկ/
7. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոց /թեմատիկ/
8. Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոց /թեմատիկ, 2 անգամ/
9. Հ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոց /թեմատիկ/
10. Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոց /համակողմանի/
11. Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց /թեմատիկ, 2 անգամ/
12. Հ. 12 հիմնական դպրոց /թեմատիկ/
13. ԵրՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ մասնագիտացված դպրոցի մասնաճյուղ /թեմատիկ/
14. Արհեստագործական ուսումնարան /թեմատիկ/

Ասկերանի շրջան

1. Այգեստանի մանկապարտեզ /համակողմանի/

ՏԵՍՉԱԿԱՆ

2. Ավետարանոցի մանկապարտեզ /համակողմանի/

3. Ակնաղբյուրի միջնակարգ դպրոց /համակողմանի/

4. Զրաղացների մասնաճյուղ /համակողմանի/

5. Մադաթաշենի հիմնական դպրոց /համակողմանի/

6. Մոշխմհատի մասնաճյուղ /համակողմանի/

7. Խաչմաչի Շ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

8. Սզնեքի Գ. Միքայելյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

9. Խնապատի միջնակարգ դպրոց /համակողմանի/

10. Բերքաձորի հիմնական դպրոց /համակողմանի/

11. Սարուշենի Գ. Այվազյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

12. Խրամորթի միջնակարգ դպրոցի Փառուխի և Արմենակավանի մասնաճյուղեր /համակողմանի/

Մարտունու շրջան

1. Գիշու միջնակարգ դպրոց /համակողմանի/

2. Խնուշինակի միջնակարգ դպրոց /համակողմանի/

3. Մաճկալաշենի միջնակարգ դպրոց /համակողմանի/

4. Հերհերի միջնակարգ դպրոց /համակողմանի/

5. Մարտունու Մ. Մաշտոցի անվան հ. 2 հիմնական դպրոց /համակողմանի/

6. Սարգսաշենի Գ. Այվազյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

7. Կոլխոզաշենի Հր. Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

8. Ղուզե Ճարտարի Ա. Ավանեսյանի անվան հիմնական դպրոց /թեմատիկ/

9. Գյունե Ճարտարի Ազատամարտիկների անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոց /թեմատիկ/

Մարտակերտի շրջան

1. Առաջածորի Ա. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

2. Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոց /համակողմանի/

3. Հարգոմերի միջնակարգ դպրոց /համակողմանի/

4. Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոց /համակողմանի/

5. Մատաղիսի Ռ. Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

6. Թալիշի միջնակարգ դպրոց /համակողմանի/

7. Գետավանի Պ. Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

Հադրութի շրջան

1. Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոց /համակողմանի/

2. Տումու Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

3. Մոխրենեսի միջնակարգ դպրոց /համակողմանի/

Քաշաթաղի շրջան

1. Քարեգահի միջնակարգ դպրոց /համակողմանի/

2. Հոչանցի միջնակարգ դպրոց /համակողմանի/

3. Սոնասարի միջնակարգ դպրոց /համակողմանի/

4. Մշենիի միջնակարգ դպրոց /համակողմանի/

5. Արվականի հիմնական դպրոց /համակողմանի/

6. Քարեգահի «Սոսե» մանկապարտեզ /համակողմանի/

Շուշիի շրջան

1. Մեծ Շենի Ս. Դավթյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

2. Հին Շենի Ա. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

3. Քարինտակի միջնակարգ դպրոց /համակողմանի/

Շահումյանի շրջան

1. Չարեքտարի միջնակարգ դպրոց /համակողմանի/

2. Դաղիվանքի միջնակարգ դպրոց /համակողմանի/

3. Նոր Վերինշենի Ջ. Ջլավյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

4. Մանաշիդի Հ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց /համակողմանի/

5. Նոր Էրքեջի միջնակարգ դպրոց /համակողմանի/

Այսպիսով՝ հաշվետու ժամանակահատվածում տեսչության կողմից իրականացված համակողմանի և թեմատիկ ստուգումների քանակը գերազանցել է 6 տասնյակը (62):

Այդ ստուգումների առյուծի բաժինը՝ 45-ը կամ 73 տոկոսը, կազմել են համակողմանի ստուգումները: 45-ից 42-ը եղել են հանրակրթական դպրոցներ, իսկ 3-ը՝ մանկապարտեզներ:

2012-2013 ուստարում տեսչության կողմից իրականացված համակողմանի ստուգումների քանակը 5-ով կամ 11 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշները:

Տեսչությունը, կարևորելով կրթական բարեփոխումների պահանջները, ամեն կերպ ձգտել է ցանկացած ստուգում կամ ստուգայց դարձնել նպատակային և արդյունավետ, հակառակ պարագայում՝ տեսչական ստուգումները կվերածվեին ինքնանպատակ գործողության:

Առանց բացառության՝ բոլոր ստուգումներն ուղեկցվել են մեթոդամանկավարժական ու մասնագիտական օգնության ցուցաբերմամբ, տրվել են անհրաժեշտ ցուցումներ, հանձնարարականներ, արվել առաջարկություններ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներում վեր հանված թերությունների վերացման, սխալների շտկման, ուսուցանման և ուսումնառության դրվածքի բարձրացման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում նորից ուշադրության կենտրոնում են եղել ավագ դպրոցները: Այսպես, հիմք ընդունելով Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 և Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցներում «Գնահատման ու թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված արտաքին ստուգումների ցածր արդյունքները մի շարք առարկաներից, ինչպես նաև տեղերից ստացվող անցանկալի զանգերը, ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանի հատուկ հանձնարարականով տեսչության կողմից ուսումնասիրվել են ավագ դպրոցներում առկա իրավիճակն ու արտաքին ստուգումների ցածր արդյունքների պատճառները և համապատասխան առաջարկություններ ներկայացվել նախարարին: Վերջինիս կողմից ձեռնարկվել են կոնկրետ գործնական քայլեր՝ իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

Նախարարի հատուկ հանձնարարականներով տեսչապետը նպատակային ստուգումներ է իրականացրել Ասկերանի շրջանի Զրաղացների հիմնական (ԼՂՀ ոստիկանության ՏՊՀ ԴՊ բաժնի աշխատողների հետ), Մարտակերտի շրջանի Առաջածորի Արիս Պողոսյանի անվան միջնակարգ, Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի միջնակարգ, Մարտունու շրջանի Մաճկալաշենի միջնակարգ դպրոցներում և Ստեփանակերտի հ. 2 ու Ղուզե Ճարտարի մանկապարտեզներում:

Յուրաքանչյուր հանձնարարականի կատարման վերաբերյալ նախարարին են ներկայացվել կոնկրետ առաջարկություններ, որոնք ընթացքավորվել են համաձայն գործող կարգի:

Ֆինանսական խախտման միայն մեկ դեպք է արձանագրվել Զրաղացների հիմնական դպրոցում (տնօրեն՝ Լ. Գրիգորյան)՝ կապված դպրոցական ցանցի ոչ ճիշտ ներկայացման հետ: Պետությանը հասցված վնասը փոխհատուցվել է գործող օրենքների սահմաններում՝մեղավորի հաշվին, իսկ դպրոցը հիմնական դպրոցի կարգավիճակից դարձել է Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ:

Ուրախալի է, որ մանկավարժական խորհուրդների նիստերին, ստուգումների արդյունքների ամփոփման ժամանակ, որպես կանոն, պարբերաբար մասնակցում են Ստեփանակերտի քաղաքապետարանի, շրջվարչակազմերի և նախարարության ղեկավար ու պատասխանատու աշխատողներ: Ուրախալի է նաև այն հանգամանքը, որ կրթության բաժիններն իրենք են պահանջում, երբ հանկարծ տեղեկանքները ուշ են տեղ հասցվում: Դա խոսում է այն մասին, որ տեսչության կողմից ներկայացված տեղեկանքներն ահագին նյութ են տալիս մտորումների և կրթության ոլորտում առկա խնդիրների լուծման համար: ԿՊ տեսչության կողմից տրված հանձնարարականների կատարման գործընթացը վերահսկելու համար ամեն մի կրթական հաստատության ղեկավար պահանջվող ժամկետներում տեսչություն է ներկայացնում համապատասխան տեղեկանք՝ տեսչական հանձնարարականների և առաջարկությունների կատարման ընթացքի մասին: Բայց պետք է ցավով նշել, որ որոշ տնօրեններ այս պահանջին, մեղմ ասած, մատների արանքով են նայում, ինչն անթույլատրելի է:

Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ էլ ուստարվա սկզբին տեսչության կողմից ստուգվել են բոլոր հանրակրթական դպրոցների տարիֆավորման ցուցակները, ինչը նպաստում է այդ շատ կարևոր աշխատանքն ավելի որակով կատարելուն:

Ներդպրոցական վերահսկողությունը ինքնանպատակ կլիներ՝ առանց տնօրենության կողմից անցկացվող պլանային ներքին ստուգումների: Գաղտնիք չէ նաև այն հանգամանքը, որ ստուգումների հիմնական ձևը եղել և մնում են դասալսումները: Ինչպես առանց որակյալ տեսչական ստուգումների, այնպես էլ առանց որակյալ դասալսումների, անհնարին է դառնում ուսուցչի ատեստավորման կարգի պահանջների ճիշտ կատարումը:

Ահա թե ինչու վերջին տարիների ընթացքում տեսչության կողմից պարբերաբար ստուգվում են հանրակրթական դպրոցների կողմից կատարված դասալսումների քանակն ու որակը:

Մեր կողմից մայիս-հունիս ամիսների ընթացքում ստուգվել են ԼՂՀ գործող 216 հանրակրթական դպրոցների թվով 495 ղեկավարների (տնօրեններ ու տեղակալներ) կողմից 2012-2013 ուստարում կատարված դասալսումների քանակն ու որակը (տե՛ս աղյուսակը):

Պետք է ասել, որ նման կարգի ստուգումները, որոնք կրում են պարբերական բնույթ, անշուշտ, իրենց դրական ներգործությունն են թողնում ղեկավար աշխատողների աշխատատոծի վրա: Եթե առաջին տարիներին դպրոցների տնօրեններն ու փոխտնօրեններն անընդհատ խոսում էին դասալսումների սահմանված նորմաները պակասեցնելու մասին, ապա այժմ նրանք համոզվել են, որ ցանկության ու բարի կամքի դրսևորման դեպքում անհնարին ոչինչ չկա: Ուրախալի է նաև այն հանգամանքը, որ նրանց մեծ մասը ձգտում է ոչ միայն սահմանված պլանը կատարելու, այլև գրառումների որակական կողմն ապահովելու:

Վերլուծելով աղյուսակը և այն համեմատելով նախորդ տարիների ցուցանիշների հետ՝ դժվար չէ համոզվել, որ դրական տեղաշարժերն ակնհայտ են բոլոր վարչատարածքներում, առանձնապես այն ղեկավարների մոտ, որոնց նախորդ տարվա արդյունքները գոհացուցիչ չէին:

Դրա հետ միասին ակնհայտ է, որ դեռևս քիչ չեն նաև անպատասխանատու ղեկավարները, ովքեր, մեղմ ասած, պահանջվող ձևով չեն վերաբերվում իրենց գլխավոր պարտականություններից մեկի՝ դասալսումների իրականացմանը թե՛ քանակական և թե՛ որակական առումով:

Հասկանալի պատճառներով չեմ ուզում հաշվետվությունը ծանրաբեռնել դպրոցների ու ղեկավարների անուններով, քանզի դրանց թիվը բավականաչափ մեծ է, և յուրաքանչյուր շրջան ենթակա է առանձին վերլուծության ու գնահատականի:

Գտնում եմ, որ այդ աշխատանքը նպատակահարմար է թողնել Ստեփանակերտի քաղաքապետարանի ու շրջվարչակազմերի կրթության բաժիններին: Առաջարկվում է կատարված վերլուծությունների մասին խոսք բացել ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունների ժամանակ, որտեղ ներկա կլինեն համակարգի ղեկավար ու պատասխանատու աշխատողներ:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգված հանրակրթական դպրոցներից ուսումնադաստիարակչական աշխատանքների համեմատաբար բարվոք դրվածք է արձանագրվել Ասկերանի շրջանի Խնապատի Ա. Հայրապետյանի անվան (տնօրեն՝ Զավեն Բեգլարյան), Սզնեքի Գ. Միքայելյանի անվան /տնօրեն՝ Մելիքսեթ Սահակյան/, Հադրութի Մ. Մանվելյանի անվան ☞ 6

ՏԵՍՉԱԿԱՆ

5 միջնակարգ հոսքային /տնօրեն՝ Արթուր Մինասյան/, Տումու Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ /տնօրեն՝ Լ. Ավագյան/, Մարտունու շրջանի Հերհերի, Ճարտարի Ազատամարտիկների անվան հ. 1 միջնակարգ հոսքային /տնօրեն՝ Աիդա Հովհաննիսյան/, Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային /տնօրեն՝ Լիդա Պետրոսյան/, Վերին Հոռաթաղի միջնակարգ /տնօրեն՝ Նաիրա Առստամյան/, Շահումյանի շրջանի Նոր էրքեջի միջնակարգ /տնօրեն՝ Արմինե Հովհաննիսյան/, Քաշաթաղի շրջանի Մշենիի միջնակարգ /տնօրեն՝ Աշոտ Ներսիսյան/, Շուշիի շրջանի Քարինտակի Ղ. Ղարախանյանի անվան միջնակարգ /տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան/ դպրոցներում՝ չնայած սովորողների ուսուցման և ուսումնառության դրվածքը նշված դպրոցներում միշտ չէ, որ կարելի է գոհացուցիչ համարել:

Ստուգումների արդյունքում որոշ դպրոցների և մեկ մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր դրվածքը գնահատվել է «անբավարար»: Դրանք են՝ Քաշաթաղի շրջանի Քարեգահի միջնակարգ /տնօրեն՝ Վ. Գալստյան/, Արվականի հիմնական /տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան/, Շահումյանի շրջանի Չարեքտարի միջնակարգ /տնօրեն՝ Լ. Հովհաննիսյան/ դպրոցները և Քարեգահի «Սոսե» մանկապարտեզը /տնօրեն՝ Նաիրուհի Մարգարյան/: Առանձնապես անմխիթար /քաոսային/ վիճակ էր Չարեքտարի միջնակարգ դպրոցում:

Ստեղծված իրավիճակները հաղթահարելու նպատակով տեսչությունն իր իրավունքների շրջանակներում հանդես է եկել կոնկրետ առաջարկությամբ՝ ուժեղացնել տվյալ հաստատությունների ղեկավարությունը:

2012-2013 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբից Չարեքտարի միջնակարգ դպրոցի տնօրեն Լ. Հովհաննիսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Պաշտոնաթող է արվել նաև Արվականի հիմնական դպրոցի տնօրեն Հ. Հովհաննիսյանը:

Հաշվետու ժամանակահատվածում տեսչությունը ստացել է 30 դիմում կամ դիմումբողոք՝ նախորդ ժամանակահատվածի 44-ի փոխարեն: Դիմումների քանակը նվազել է 14-ով կամ 32 տոկոսով: Բոլոր դիմումները, որոնք հասցեագրված են եղել տեսչության պետին, պահանջվող ժամկետներում ընթացքավորվել են, ու տրվել սպառիչ ու հիմնավորված պատասխաններ:

Դիմումների վիճակագրությունն ըստ վարչատարածքային միավորումների այսպիսին է.

1. ք. Ստեփանակերտ - 1 /հ. 2 մանկապարտեզ/

2. Մարտակերտի շրջան - 9 /Առաջածոր - 4, Գետավան - 2, Չլդրան, Վանք, Մաղավուզ՝ 1-ական/

3. Քաշաթաղի շրջան - 8 /կրթության բաժին - 3, Արծվաշեն, Արտաշավի, Քարեգահ, Կումայրի, Ծաղկաբերդ՝ 1-ական/

4. Շահումյանի շրջան - 6 /Չարեքտար - 3, կրթության բաժին, Հավսաթաղ, Նոր Ղարաչինար՝ 1-ական/

5. Շուշիի շրջան - 2 /Շուշի, Եղծահող՝ 1-ական/

6. Մարտունու շրջան - 1 /Ղուզե Ճարտարի մանկապարտեզ/

7. Ասկերանի շրջան - 1 /Դաշուշեն, նախկին տնօրենից/

8. Հադրութի շրջան - 2 /Առաջամուղ - 2/:

Պարզեցինք, որ դասվարները բոլոր առարկաներից ունեն տնօրենության կողմից հաստատված՝ գործող ծրագրերին համապատասխան թեմատիկ պլանավորումներ, մայրենիից՝ մայրենիի բոլոր բաղադրատարրերով՝ ինքնուրույն ընթերցանություն, խոսք և հաղորդակցություն, գրավոր աշխատանքներ: Որոշ ուսուցիչներ կազմել էին նաև նոր գնահատմանն առնչվող ժամանակացույցը՝ բանավոր հարցում, թեմատիկ գրավոր, գործնական, կիսամյակային ամփոփիչ աշխատանք: Ձեռք են բերել օժանդակ ձեռնարկներ: Նախարարությունը ևս բավականին ուսումնաօժանդակ ձեռնարկներ, դիդակտիկ նյութեր և պաստառներ է տրամադրել կրտսեր դպրոցին. ցավոք, ոչ բոլոր դասվարներն են դրանք նպատակային և արդյունավետ օգտագործում դասագործընթացում: Բոլոր դասվարներն էլ կազմում են օրվա դասերի պլան-սեղմագրերը, որոնք, սակայն, մանավանդ համակազմ դասարանների համար, նպատակային և արդյունավետ չեն. դասվարները պլան-սեղմագրերը պետք է կազմեն ոչ թե առանձին-առանձին դասարանների համար, այլ մեկ դասաժամի՝ 45 րոպեի համար. մի դասարանում ուսուցիչը պետք է ինքնուրույն աշխատանք կազմակերպի, մյուսում աշխատի աշակերտների հետ:

Թեմատիկ պլանավորումների նպատակային և ծրագրային պահանջներին համապատասխան կազմման առումով արժևորվում են Ստեփանակերտի հ. 10 հիմնական, Մարտակերտի, Հադրութի միջնակարգ հոսքային, Մարտունու հ. 2 հիմնական, Խնապատի, Սզնեքի /Ասկերանի շրջան/, Վ. Հոռաթաղի /Մարտակերտի շրջան/, Ճարտարի ավագ, Հերհերի /Մարտունու շրջան/ միջնակարգ դպրոցների դասվարների կողմից կազմված պլանավորումները:

Տեսչավորված դպրոցների դասվարները դասարաններում ստեղծել են դասարանական և պետականության անկյուններ: Գրեթե բոլոր դպրոցներում թեմատիկ և առարկայական անկյունները նախ՝ համակարգված չեն, երկրորդ՝ համալրման անհրաժեշտություն ունեն: Ճիշտ ստեղծված թեմատիկ անկյունները հնարավորություն կտան ուսուցչին նպատակային իրականացնելու մանավանդ մայրենիի թեմատիկ բանավոր հարցումները:

Սովորաբար կրտսեր օղակի դասվարներն ավելի պարտաճանաչորեն ու ջանասիրաբար են աշխատում ուսումնական գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար: Սակայն դասալսումներից և տրված գրավորներից պարզվեց, որ որոշ դպրոցներում առաջին իսկ դասարանից սկսած՝ նրանք աշխատում են միայն երեխաներին տառաճանաչ դարձնելու, նրանց՝ պարզագույն թվաբանական գործողություններ կատարելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Դասվարները, ինչպես նաև տարրական դպրոցը վերահսկող օղակը պետք է ուսումնական տարվա սկզբից հանգամանորեն ուսումնասիրեն գնահատման և կրթական առարկայական չափորոշիչները՝ դասագործընթացում իրենց կիրառման բոլոր հիմնադրույթներով /աշխատանք անծանոթ նյութի վրա, հասկանալով կարդալ, ինքնուրույն գրավոր աշխատանք, կարգային անցումներով բանավոր գումարում և հանում՝ 1-ին դասարանից սկսած, արտաաղյուսակային բանավոր բազմապատկում և բաժանում, կապակցված խոսք, ճիշտ հաղորդակցում և շատ այլ նպատակային հարցեր/: Հստակեցվել է արդեն դասամատյաններում քիչ գնահատականներ լինելու հարցը: Բոլորս պետք է հստակ իմանանք, որ դասամատյանում նշանակված գնահատականներն աշակերտների գիտելիքների ամփոփիչ գնահատականներն են, իսկ ամենօրյա՝ ուսուցանող գնահատականները, ըստ կարգի, նշվում են բանավոր՝ բառային բնութագրումներով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ «Լուսարար» պաշտոնաթերթում /2012թ. հ. 1/ նախարար Ս. Ասրյանի հարցազրույցը:

Օրինաչափություն է դարձել մի երևույթ. այն դպրոցը, որը ճիշտ է առաջնորդվում գնահատման գաղափարաբանության դրույթներով, որակական մեծ առաջադիմություն է ապահովվում, անշուշտ:

Պարզվեց նաև, որ ըստ նախարարության պաշտոնական հրահանգի՝ 1-ին դասարանն ավարտած աշակերտների ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ բնութագրերն ու հոգեբանական զարգացման թերթիկները ոչ բոլոր դպրոցներում են լրացվում կամ էլ լրացվում են ձևականորեն: Իսկ դա խոչընդոտում է 2-4-րդ դասարաններում կրթական առարկայական չափորոշիչների նվազագույն չափով իրականացմանը: Տեսչավորված շատ դպրոցների դասվարները դասագործընթացը վարում են ավելի շատ ուսուցչակենտրոն ուսուցման դրույթների կիրառմամբ. ոչ թե աշակերտների միջոցով են վերհանվում դասի բոլոր փուլերում առաջադրված հարցերի պատասխանները, այլ հենց ուսուցիչները հանդես են գալիս միայն հաղորդողի դերում, չեն կիրառում ուղղորդված և ընտրովի ընթերցանության հնարներ, համագործակցային և ժամանակակից այլ մեթոդներ: Հենց այդ դպրոցներում էլ մայրենիի և մաթեմատիկայի որակական առաջադիմությունը չի գերազանցում 30 տոկոսը. դեռ ավելին՝ կա 0 տոկոս, 5 և 6 տոկոս որակական առաջադիմություն /տե՛ս կից աղյուսակը/ :

Դասագործընթացում հետաքրքիր ու արդյունավետ աշխատանքների, աշակերտակենտրոն, չափորոշչահեն ուսուցման դրույթների կիրառմամբ, մանկավարժական սկզբունքների ապահովմամբ աչքի ընկան դասվարներ Մայիլա Ալավերդյանը, Անժելա Գրիգորյանը, Օֆելյա Աթաջանյանը, Ավրորա Գևորգյանը /Ստեփանակերտի հ. 10 հիմն. դպրոց/, Հադրութի շրջանից՝ Լաուրա Եղյանը, Ջեմմա Գասպարյանը, /Հադրութի միջն. հոսքային դպրոց/, Մարտակերտի շրջանից՝ Արմինե Մանուկյանը /Ափանց/, Նորա Մնացականյանը, Մալվինա Հարությունյանը /Մարտակերտի հ. 1 միջն. հոսքային դպրոց/, Իրինա Ասրյանը /Վ. Հոռաթաղի միջն. դպրոց/, Ասկերանի շրջանից՝ Սիլարա Միրզոյանը, Հրանուշ Աղաբեկյանը /Սզնեքի միջն. դպրոց, համակազմ դասարան/, Ալվարդ Ղահրամանյանը /Խնապատի միջն. դպրոց/, Շուշիի շրջանից՝ Էմմա Ավետիսյանը /Մեծ Շենի միջն. դպրոց, համակազմ դասարան/, Ամալյա Ավանեսյանը /Քարինտակի միջն. դպրոց/, Մարտունու շրջանից՝ Էլմիրա Մուսայելյանը, Աիդա Գաբրիելյանը, Գայանե Ոսկանյանը /Մարտունու հ.2 հիմն. դպրոց/, Ռազմելա Ադամյանը /Ճարտարի ավագ դպրոց/, Գալյա Գրիգորյանը Արգենտինա Առաքելյանը (Ստեփ. հ.10 հիմն. դպրոց), Նագրաֆինա Ասրյանը (Մարտակերտի շրջ., Գետավան), Նորվարդ Անտոնյանը, Նորա Գասպարյանը (Մարտակերտի շրջ., Մատաղիս), Նելլի Գևորգյանը (Հադրութի շրջ., Տումի), Տանյա Շահնազարյանը, Սվետլանա Ավշարյանը (Հադրութ): Նրանք զարգացնում են աշակերտների հնչյունային լսողությունը, որն աշակերտի գրավոր և բանավոր խոսքի առանցքն է: Դասերին օգտագործում են խորհրդանշական զննականության տարրեր, գծապատկերներ, տեղին են կիրառում վանկակազմական և բառակազմական աշխատանքները, հետաքրքիր են դարձնում բոլոր դասերը: Կարևորում են աշակերտների բանավոր հաղորդակցմանը, գրավոր խոսքի զարգացմանը, քերականական նախագիտելիքների ձևավորմանը, մաթեմատիկական մտածողության զարգացմանը միտված աշխատանքները: Ճիշտ են կառուցում դասերը, ուսումնասիրել են կրթական առարկայական չափորոշիչները, աշխատում են իրականացնել չափորոշչային միջինը: Մեծ տեղ են տալիս աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը, նրանց մոտ մարդկային բարձր որակների մշակմանը: Դասագործընթացում օգտագործում են տարբեր բնույթի աշխարհաճանաչողական տեղեկություններ, որոնք և հմտորեն կարողանում են աշակերտների ընկալունակությանը հասցնել:

Վերոնշյալ ուսուցիչները զարգացնում են աշակերտների տարածական մտածողությունը, խոսքը: Նրանց դասարաններում ավելի բարձր որակական ցուցանիշներ են արձանագրվել, պարզապես կից աղյուսակում մենք ներկայացրել ենք յուրաքանչյուր դպրոցի ընդհանրացված ցուցանիշները: Նրանց վարած դասերն օրինակելի են, աշխատանքը խրախուսելի է և արժանի է դրվատանքի:

Բավարար հիմքերի վրա է դասավանդման դրվածքը Մարտունու շրջանի Ճարտարի, Հերհերի, Գիշու, Կոլխոզաշենի, Շահումյանի շրջանի Մանաշիդի, Նոր Վերինշենի, Նոր Էրքեջի, Մարտակերտի շրջանի Հար-Գոմերի, Վերին Հոռաթաղի, Գետավանի, Թալիշի, Հադրութի շրջանի Տումու, Շուշիի շրջանի Մեծ Շենի, Քարինտակի, Ասկերանի շրջանի Սզնեքի, Խնապատի դպրոցներում: Երեխաներն ունեն բավարար գիտելիքներ մայրենիից, մաթեմատիկայից: Դասավանդող դասվարները կարողանում են սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել տրամաբանական, լեզվական մտածողություն, մեծ տեղ են տալիս խմբային աշխատանքներին, դիտողականությանը, քերականական գիտելիքների ուսուցմանը, բառային աշխատանքներին, նորարարություններին, քիչ են ուշադրություն դարձնում վայելչագրության ուսուցմանը, երեխաների մեծ մասն ունի տգեղ, անվայելուչ ձեռագիր:

Որոշ սկսնակ դասվարներ /մինչև 5 տարվա աշխատանքի փորձ/՝ Լուսինե Նալբանդյանը, Հերմինե Անդրյանը /Մարտակերտի հ.1 դպրոց/, Մարիա Դավթյանը /Մարտակերտի շրջան, Վ. Հոռաթաղի միջն. դպրոց/, Վարսենիկ Ղավալյանը /Մարտակերտի շրջան, Թալիշի միջն. դպրոց/, Նունե Բալայանը /Մարտունու հ. 2 հիմն. դպրոց/, Արմինե Մուրսալյանը, Ագնեսա Մոսյանը /Մարտունու շրջան, Խնուշինակի միջն. դպրոց/, Գայանե Գրիգորյանը, Ալվինա Գրիգորյանը /Ասկերանի շրջան, Խաչմաչի միջն. դպրոց/, Հայկ Զախարյանը, Լևոն Գաբրիելյանը /մաթեմատիկա են դասավանդում համապատասխանաբար՝ Շուշիի շրջանի Մեծ Շենի միջն. դպրոցում և Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոցում/, ձգտում են հետաքրքիր, մատչելի ու արդյունավետ դարձնել դասագործընթացը: Դասերին կիրառում են բազմազան հնարներ, օգտագործում ինքնաշեն դիտողական և դիդակտիկ նյութեր, նոր նյութին առնչվող հետաքրքիր տեղեկություններ հաղորդում աշակերտներին: Նրանք ունեն լավ ուսուցիչ դառնալու բոլոր հնարավորությունները:

Ճիշտ է, գրավորների արդյունքները նրանց մոտ այնքան էլ գոհացուցիչ չէին, և դա պայմանավորված է և՛ մանկավարժական փորձի բացակայությամբ, և՛ ոչ չափորոշչահեն ուսուցման կազմակերպմամբ:

Տեսչավորված դպրոցներում ունեինք նաև դասվարներ, որոնք չունեն համապատասխան բարձրագույն կրթություն: Սիրանուշ Պետրոսյանը /Հոչանցի միջն. դպրոց/, Անահիտ Գյուլինյանը /Էրքեջի միջն. դպրոց/ պետք է ձեռք բերեն համապատասխան որակավորում:

Պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է: Նշված դպրոցներում աշակերտները դասագրքերի պակաս ունեն, ու նրանց մեծ մասը չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին:

Տեսչավորման ընթացքում բացահայտվել են թերություններ Շահումյանի շրջանի Չարեքտարի, Շուշիի շրջանի Հին Շենի, Ասկերանի շրջանի Բերքաձորի, Արմենակավանի, Մարտունու շրջանի Կարվինի կրտսեր դպրոցներում: Ցածր մակարդակի վրա է դասավանդման դրվածքը, դեռևս պատշաճ ձևով չի կազմակերպվում դասագործընթացը: Այդ դպրոցներում ընդհանուր առմամբ թույլ են սովորողների գրավոր, բանավոր խոսքը, մաթեմատիկական կարողությունները, հմտությունները:

Դասվարները պետք է դասերի ընթացքում ձեռք բերած ավանդականի հետ զուգակցեն նորարարականը, որովհետև 21-րդ դարում ծնված 6-10 տարեկան դպրոցականը նոր ակնկալիքներ ունի ուսուցչից: Դասավանդող ուսուցիչները պետք է փոխեն դասավանդման յուրատիպ ոճը, դասագործընթացը դարձնեն ավելի ճկուն և բազմաբովանդակ, անձնակողմնորոշիչ՝ հատկապես 6 տարեկանից ուսուցումը նպատակային դարձնելու համար: Փորձը ցույց է տվել, որ 6 տարեկան դպրոցականը սեփական ուժերով պետք է գիտելիքներ ձեռք բերի, իսկ երբ ուսուցիչը փորձում է միայն հաղորդել այդ գիտելիքը, ինչպես անում էր 7 տարեկաններով համալրված դասարաններում, նա չի կարող համակարգել աշակերտի ունեցած ձեռքբերումները, բնականաբար. թույլ կլինի նրանց գիտելիքների իմացական, մանավանդ՝ որակական մակարդակը:

Ուսումնական գործընթացում բացասական երևույթներից խուսափելու նպատակով մեր կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, ցուցաբերել ենք մասնագիտական և մեթոդական օգնություն, կազմակերպել ցուցադրական դասեր՝ մանավանդ ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդների, բանավոր հարցման ձևերի կիրառմամբ, համակազմ դասարանների համար նպատակային պլան-սեղմագրերի նմուշօրինակների տրամադրմամբ և այլն:

Հանձնարարվել է.

մեթոդխորհրդի նախագահներին՝

- մեթոդխորհուրդների աշխատանքները դարձնել նպատակային և արդյունավետ. որպես ինքնակրթության թեմաներ՝ դասվարները կարող են մշակել կրթական առարկայական չափորոշիչները, մանկավարժական թեմաներ.

- աշխատել ըստ կանոնակարգի՝ բոլոր ենթակետերի ներառմամբ.

դասվարներին՝

- յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հանգամանորեն ուսումնասիրել կրթական առարկայական և գնահատման չափորոշիչները, մանրամասն տեղեկանալ գործող դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, լրացուցիչ ձեռնարկների նյութերին: Չունենալու դեպքում ձեռք բերել և առաջնորդվել պահանջվող դրույթներով.

- դասագործընթացը կառուցել անձնակողմնորոշիչ ուսուցման դրույթների հիման վրա՝ ուսուցչակենտրոն ուսուցումը փոխարինելով աշակերտակենտրոն ուսուցմամբ.

- դասանպատակներում հստակեցնել դասի ուսուցանող, զարգացնող և դաստիարակող գործառույթները, կիրառել դիտողական պարագաներ, մեծ տեղ տալ աշակերտների վերացական մտածողության զարգացմանը.

- պլան-սեղմագրերում նշել աշակերտակենտրոն ուսուցման դրույթներից բխող այն միջոցներն ու հնարները, որոնք կնպաստեն առաջին հերթին դրանց իրականացմանը և 6 տարեկանից ուսուցումն սկսելու դժվարությունների հաղթահարմանը.

- մայրենիի դասերին հաճախակի կիրառել ուղղորդված և ընտրովի ընթերցանության մեթոդներ, աշակերտների մոտ զարգացնել անծանոթ բնագիրը վարժ, սահուն, արտահայտիչ, հասկանալով և արագ կարդալու, բնագրից հենակետային բառերն ընտրելու, բնագրի պլանը կազմելու, հաղորդակցվելու, կապակցված և ճիշտ խոսելու, հաղորդակցվելու, ինքնուրույն աշխատելու կարողություններ.

☞12

ՏԵՍՉԱԿԱՆ

- մաթեմատիկայից կարևորություն տալ կարգային անցումով բանավոր հաշվումներ, արտաաղյուսակային բազմապատկում կատարելուն, առաջադրանքի պահանջը և խնդիրներն ինքնուրույն կարդալուն, հասկանալուն և լուծելուն.

- դասերն ուսուցանել խաղ-ուսուցումխաղ սկզբունքով, իսկ բոլոր դիդակտիկ խաղերն էլ պետք է լինեն ուսուցչի ստեղծագործության արդյունքը և վերաբերեն բուն թեմային, այլապես կծանրաբեռնեն երեխաներին /հարցի վերաբերյալ տրվել են ցուցադրական դասի դրվագներ/.

- դասերը հաճախակի դարձնել դիտողական, կիրառել դասին ուսուցանված գիտելիքները համակարգող, մարզողական վարժություններով հագեցած քարտեր, դասագործընթացում հաճախակի կիրառել ԿԳ նախարարության կողմից ստացված պաստառները, մանավանդ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ «Բնագիր», «Տեքստ» վենագրերով. դա կնպաստի աշակերտների մոտ տեքստի կամ բնագրի հիմնական մտքի, ենթատեքստի, նպատակների, բախումների և այլ կարևոր գործոնների իմացությանը, որոնց շնորհիվ կհամակարգվեն սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները.

- ուշադրության կենտրոնում պահել վայելուչ գրելու պահանջը.

- գրավոր աշխատանքներում ապահովել տեխնիկական բոլոր պահանջները թե՛ մայրենիից, թե՛ մաթեմատիկայից .

- թեմատիկ պլանավորումներում ընդգրկել նոր գնահատման ժամանակացույցը.

- տարրական դասարաններում կարևորություն տալ որակական առաջադիմության բարձրացմանը /«7», «8», «9», «10»/.

- միջոցներ ձեռնարկել, որ կրտսեր դպրոցականը նոր ուսուցանված դասը դասարանում սովորած գնա տուն.

- ստեղծել թեմատիկ անկյուններ՝ մանավանդ թեմատիկ բանավոր հարցումը մատչելի և նպատակային դարձնելու համար.

- ձևական մոտեցում չցուցաբերել առաջին դասարանցիների ուսումնական ձեռքբերումների գնահատման հանդեպ

- դասերը կազմակերպել ինտերակտիվ մեթոդներով, ճիշտ ուղու վրա դնելով աշակերտների սոցիալական հմտությունների զարգացման խնդրի իրականացումը.

- ուսումնասիրել նորարարությունը, նորացված մեթոդները, հաճախակի դրանք օգտագործել դասագործընթացում,

- մեծ տեղ տալ երեխաների խոսքի զարգացմանը, լեզվական կանոնների յուրացմանը, վայելչագրության և ընթերցանության տեխնիկայի զարգացմանը:

Տեսչավորման ընթացքում դասվարների հետ կազմակերպել ենք սեմինար-պարապմունքներ, ծանոթացրել ծրագրային փոփոխություններին:

2012-2013 ուստարում տեսչավորված դպրոցների 2-4-րդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից տրված գրավոր աշխատանքների արդյունքները

	Մայրենի		Մաթեմ	
Դպրոցի անվանումը	բնի առաք.	դասվ. առաք.	բնի առաք.	դասվ. առաք.
Հոչանց	83	16	83	16
Չրադացներ	100	0	100	50
Չարեքտար	15	5	22	0
Խնուշինակ	50	19	52	24
Մեծ Շեն /Հուշիի շրջ/	75	75	75	0
Քարինտակ	47	8	34	17
Սզնեք	50	25	75	50
Հերհեր	58	42	75	50
Խնասպատ	72	63	67	45
Ստեփանակերտի հ. 10 /3-4-րդ դասարան/	84	52	85	51
Հադրութի միջն.	75	45	85	50
Աշաջաձոր	50	6	56	24
Մարտակերտի հ.1	69	33	64	33
Վերին Հոռաթաղ	50	5	41	14
Մարտունու հ. 2	64	36	63	33
Թալիշ	69	38	65	27
Նոր Վերին շեն	48	0	83	18
Սարգսաշեն	47	12	33	5
Փառուխ	100	0	50	0
Նոր Էրքեջ	50	33	50	10
Քարեգահ	22.2	0	50	38
Ակնաղբյուր	48	22	30	5
Արվական	0	0	50	0
Մշենի	0	0	25	25
Ղադիվանք	40	0	40	0
Գիշի	60	13.3	64	30
Հին-շեն	33	0	50	33
Խաչնաչ	20	0	25	0
Մաճկալաշեն	36	14	29	21.4
Մադաթաշեն	0	0	83.3	0
Բերդաձոր	50	50	25	0
Ստեփ.հ.10	66	42	55	79
Հադրութ	81	54	98	63
Հադ-Գումեր	67	17	93	33
Մարտակերտ	79.4	34	60	25.3
Մատաղիս	76	55	39.3	24.2
Նոր-Մանաշիդ	78	33.3	67	33.3
Տումի	70	52	59.2	41
Սարուշեն	80	60	60	40
Արմենակավան	67	0	33.3	0
Կոլխոզաշեն	77	15.3	82	24
Գետավան	62	23	69.2	31

Աննա Պետրոսյան
Սուսաննա ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԿՊՏ տեսուչներ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2012-2013 ուստարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում շուրջ 4 տասնյակ դպրոցներում իրականացվել է հայոց լեզվի և գրականության դասավանդման դրվածքի ստուգումը: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում, անշուշտ, կան իրենց գործին տիրապետող հմուտ մանկավարժներ, ովքեր մայրենիի դասերը ծառայեցնում են ոչ միայն անաղարտ լեզու սովորեցնելուն, այլև սովորողների բարոյական որակների ձևավորմանը: Նրանց թվում են՝ Լ. Դանիելյան /Ակնաղբյուրի մ.դ./, Ս. Մելքումյան /Մեծ Շենի մ.դ./, Հ. Աղաբեկյան /Սզնեքի մ.դ./, Ջ. Ապրեսյան /Հերհերի մ.դ./, Ս. Ղազարյան /Խնապատի մ.դ./, Ա. Գաբրիելյան, Ջ. Հովսեփյան, Ա. Ինանց, Լ. Սարգսյան /Ստեփանակերտի հ. 10 հիմն. դ./, Ն. Աբահեսյան /Առաջածորի մ.դ./, Լ. Մայիլյան, Լ. Սարգսյան /Հադրութի մ.դ./, Ն. Պողոսյան, Ա. Մնացականյան /Մարտակերտի հ. 1 մ.դ./, Ն. Առստամյան /Վ. Հոռաթաղի մ.դ./, Ի. Ղալայան, Ս. Բալայան /Մարտունու հ. 2 հիմն. դ./, Լ. Աբրահամյան, Ք. Սահակյան /Տումու մ.դ./, Ն. Պետրոսյան /Մոխրենեսի մ. դ./, Ե. Խաչատրյան /Կոլխոզաշենի մ. դ./ և այլք: Ուրախալի է նաև երիտասարդ շնորհալի ուսուցիչների առկայությունը դպրոցներում, այսպես՝ Ա. Հակոբյան /Սզնեքի մ.դ./, Ա. Մարտիրոսյան /Վ. Հոռաթաղի մ.դ./. հատկանշական է Թալիշի միջն. դպրոցի երեք երիտասարդ ուսուցիչների /Հ. Սահակյան, Ա. Հայրապետյան, Ռ. Խաչատրյան/ համագործակցած աշխատանքը, որոնք կարողանում են սովորողների մեջ սեր առաջացնել առարկայի, ուսումնասիրվող հեղինակի, նրա ստեղծագործության հանդեպ, հասնել նրան, որ ընթերցեն: Մի շարք դպրոցներում /Խնապատի, Ստեփանակերտի հ. 10, Մարտունու հ. 2/ ուսուցիչները հաջողությամբ անց են կացնում համակարգչային դասեր:

Միաժամանակ հարկ է նշել, որ ուսուցիչների արդյունավոր աշխատանքին խոչընդոտում են մի շարք դպրոցներում /Մշենի, Չարեքտար, Թալիշ, Սարգսաշեն, Փառուխ և այլն/ շենքային անբավարար պայմաններից բացի, նաև մայրենիի ժամերի կրճատումը /երեխան ամեն օր պետք է ուսումնասիրի իր մայրենի լեզուն/, որոշ դասագրքերի խրթին լեզուն, գրականության դասագրքերում ընդգրկված երկարաշունչ գործերի ուսուցման աննպատակահարմարությունը և այլ թերություններ:

Աղքատիկ է գրադարանային ֆոնդը հատկապես Չարեքտարի, Հին Շենի, Մեծ Շենի, Նոր Էրքեջի դպրոցներում. շատ դպրոցներում չկան նույնիսկ գրականության քրեստոմատիաները՝ ուսումնասիրվող ծրագրային նյութին գոնե հատվածաբար ծանոթացնելու համար:

Մտահոգիչ է, որ տեսչավորված գյուղական դպրոցների մեծ մասում նկատվում է սովորողների թվակազմի նվազման միտում. առանձին դպրոցներում /Զրաղացներ, Հին Շեն, Մոշխմհատ, Փառուխ, Արմենակավան/ նրանց թիվը հաշվվում է միավորներով: Փոքր դպրոցները հաճախ են անտեսվում կրթության բաժինների կողմից. թույլ է կապը մերձակա դպրոցների հետ. այսպես՝ Փառուխի մասնաճյուղում դասավանդող ուսուցչուհին միայն մարտ ամսի վերապատրաստման օրերին է տեղեկացել, որ 8-րդում հայոց լեզուն և գրականությունն արդեն սեպտեմբերից ուսումնասիրվում են նոր դասագրքերով:

Թույլ է համագործակցությունը ուսուցիչների միջև: Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ: Շատ քիչ դպրոցներում են աշխատանքներ տարվում առարկայական կաբինետների ստեղծման ու կահավորման ուղղությամբ: Այս առումով ընդօրինակման արժանի աշխատանք են կատարում Հադրութի դպրոցի ուսուցիչները: Գործող կաբինետներ կան նաև Ակնաղբյուրի, Տումու միջակարգ, Ղուզե Ճարտարի հիմնական դպրոցներում: Մի շարք դպրոցներում դրանք կան, բայց շենքային պայմաններից ելնելով՝ չեն գործում և համալրման կարիք ունեն: Ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում դասավանդման արդյունավոր մեթոդներ, դասերն անցնում են ուսուցչակենտրոն մեթոդով. ավելի շատ խոսում են, քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի՝ ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացը կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, դասը բացատրելով հենց նրա միջոցով:

Այլ թերությունների շարքում հարկ է նշել, որ գրականության դասերն անցկացվում են առանց բնագրերի, ոչինչ չի արվում դասերը դիտողական դարձնելու համար: Կան մեթոդամանկավարժական բավարար պատրաստվածություն չունեցող ուսուցիչներ /Ն. Ղարամյան՝ Ակնաղբյուրի մ.դ., Ա. Դադաշյան՝ Հադրութի մ. դ. Գ. Գասպարյան՝ Սարուշենի մ. դ., Դ. Շիրինյան՝ Գետավանի մ. դ./, ոչ մասնագետ ուսուցիչներ /Հին Շեն, Մեծ Շեն/:

Ստուգումներից կարելի է մի շարք այլ եզրահանգումներ ևս կատարել: Այսպես՝ նույն ուսուցչուհու դասը /հատկապես Ստեփանակերտ քաղաքի և շրջկենտրոնների դպրոցներում/ ավելի արդյունավետ է անցնում միջին դասարաններում, քան բարձր դասարաններում, որտեղ սովորողները դասին ներկայանում են մեծ մասամբ անպատրաստ, անտարբեր են, անպատասխանատու:

Նման վիճակն ուսուցիչներին պետք է դրդի պրպտելու և գտնելու այս դասարաններում դասը հետաքրքիր դարձնելու, միօրինակությունից խուսափելու միջոցներ և հնարներ, ասենք՝ դասը սկսել «գրավիչ մուտքով», կիրառել համագործակցային ուսուցման տարրեր՝ ուսուցումը համապատասխանեցնելով այսօրվա բարձրդասարանցու հետաքրքրություններին, ապրած ժամանակին:

Ցավով պետք է նշել, որ աշակերտների մի ստվար մասը, հատկապես գյուղական սակավակազմ դպրոցներում, միջակ և ավելի ցածր կարողությունների տեր է: Նշված դպրոցներում աշակերտները դասագրքերի պակաս ունեն, ու նրանց մեծ մասը կրտսեր և միջին համակարգում չի յուրացնում լեզվական հիմնարար իրողությունները, չի տիրապետում պետական կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների նվազագույնին: Հարցերին պատասխանում են բարբառով, չգիտեն պարզագույն հարցերի պատասխանները:

Տեսչավորված դպրոցներից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում հայոց լեզվից հաջող են հանդես եկել Մարտակերտի հ. 1, Հադրութի, Ասկերանի շրջանի Խնապատի դպրոցների, գրականությունից՝ նաև Թալիշի միջնակարգ դպրոցի աշակերտները:

Ընդհանուր առմամբ՝ թույլ է սովորողների գրավոր խոսքը: Հաշվետվությանը կցվում են 5-12-րդ /հիմնական դպրոցներում՝ 5-9-րդ/ դասարաններում հայոց լեզվից տրված գրավոր աշխատանքների /թելադրություն/ արդյունքները, ըստ որոնց՝ 30 տոկոս և ավելի ցածր առաջադիմություն է գրանցվել Մադաթաշենի, Չարեքտարի, Փառուխի, Արմենակավանի դպրոցներում: Համեմատաբար բարձր ընդհանուր և որակական առաջադիմություն է գրանցվել Սզնեքի, Հադրութի, Մարտակերտի հ. 1, Մարտունու հ. 2, Թալիշի և Տումու դպրոցներում: Շատ դպրոցներում ուսման որակը ցածր էր 20 %-ից, իսկ Մադաթաշենի, Քարեգահի, Հոչանցի, Հին Շենի, Փառուխի, Արմենակավանի դպրոցներում 0 % էր:

Առարկայի դրվածքի բարելավման նպատակով ուսուցիչներին հանձնարարվել է՝

- մշտապես զբաղվել ինքնակրթությամբ, սերտորեն համագործակցել՝ աշխատանքի ընթացքում անընդհատ կատարելագործելով դասավանդման մեթոդները, ձգտելով առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնել աշակերտների մեջ. դասագործընթացում գործուն պահել յուրաքանչյուր աշակերտի՝ համատեղելով հարցումն ու ինքնուրույն աշխատանքը.

- բացառել բարբառը դասերի ընթացքում. մայրենիի ուսուցչի գերխնդիրը երեխային մաքուր հայերենով անկաշկանդ խոսք սովորեցնելն է.

- մայրենիի յուրաքանչյուր դաս անցկացնել որպես խոսքի զարգացման դաս՝ ծրագրային նյութը համատեղելով խոսքի զարգացման կիրառական առաջադրանքներով. բառը սովորեցնել խոսքային միջավայրում՝ հետևելով, որ այն աշակերտի բառապաշարի մաս դառնա.

- նկատի ունենալ, որ՝

ա/ աշակերտների գրավոր խոսքի սխալների մի մասը նրանց բանավոր սխալ խոսքի արտահայտությունն է, և աշխատանք տանել բանավորի լեզվական խոտոր գործադրումները բացառելու համար՝ հասկանալի բացատրելով ճիշտ և սխալ ձևերը.

բ/ գրավոր աշխատանքների սխալների մյուս մասը տնային աշխատանքների տետրերում անընդհատ հանդիպող սխալներն են, որոնք չուղղվելով կրկնվում են նրանց ստուգողական աշխատանքների տետրերում. ուստի պարբերաբար ստուգել տնային աշխատանքների տետրերն ու բառատետրերը, հետևել, որ դրանք չնմանվեն սևագրության տետրերի.

- կազմակերպել շերտավորված ուսուցում՝ նկատի ունենալով յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները.

- մեծ տեղ տալ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական վերլուծություններին՝ որպես անցածի կրկնության փայլուն միջոցների.

- դասարանական արտահայտիչ ընթերցանության և այլ միջոցներով աշակերտների մեջ դաստիարակել ընթերցասիրություն.

- գրողի յուրաքանչյուր ստեղծագործություն ուսումնասիրել որպես արվեստի գործ՝ մեծ տեղ հատկացնելով նաև լեզվաոճական առանձնահատկություններին.

- պատրաստել ինքնաշեն գծապատկերներ, բառադարաններ ու քարտադարաններ՝ դասերը դարձնելով հնարավորինս դիտողական. ըստ կարելվույն կազմակերպել համակարգչային դասեր. համացանցից վերցված տեղեկությունների օգտագործումը դասը դարձնում է հետաքրքիր ու տպավորիչ.

- հետևողական ու պահանջկոտ լինել տրված յուրաքանչյուր հանձնարարության կատարման հանդեպ.

- պահպանել գրավոր աշխատանքների ստուգման որակական կողմը, գնահատել ըստ չափանիշների:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ե. ՄԻՐԶՈՅԱՆ
ԿՊՏ տեսուչներ

ՏԵՍՉԱԿԱՆ

2012-2013 ուստարում տեսչավորված դպրոցների 5-12 /9/-րդ դասարաններում հայոց լեզվից տրված գրավոր աշխատանքների /թելադրություն/ արդյունքները

Հ/Հ	դպրոցը	աշակ. քանակը	գրավ. մասն. քանակը	ընդհ. առաջադիմությունը /%/	որակակ. առաջադիմությունը /%/
1.	Մադաթաշենի հիմն.	8	8	30	0
2.	Քարեգահի միջն.	26	21	43	0
3.	Հոչանցի միջն.	8	8	50	0
4.	Ակնաղբյուրի միջն.	52	51	53	16
5.	Մշենիի միջն.	16	15	47	14
6.	Արվականի հիմն.	3	3	67	0
7.	Չարեքտարի միջն.	27	19	26	5
8.	Գիշու միջն.	105	102	53	20
9.	Խնուշինակի միջն.			44	6
10.	Հին Շենի միջն.	4	4	50	0
11.	Մեծ Շենի միջն.	12	11	56	9
12.	Քարինտակի միջն.	74	70	43	11
13.	Խաչմաչի միջն.	24	23	61	30
14.	Սգնեքի միջն.	14	14	79	21
15.	Հերհերի միջն.	66	62	60	13
16.	Մաճկալաշենի միջն.	41	40	65	25
17.	Բերքաձորի հիմն.	17	17	65	52
18.	Խնասպատի միջն.	82	80	58	30
19.	Ստեփ.Հ. 10 հիմն.	314	289	56	23
20.	Առաջաձորի միջն.	79	79	51	18
21.	Հադրութի միջն.	331	276	69	34
22.	Մարտակերտի հ. 1	386	345	66	30
23.	Վ.Հոռաթաղի միջն.	46	41	47	17
24.	Մարտունու հ.2հիմն.	177	148	61	27
25.	Մատաղիսի միջն.	57	57	60	21
26.	Թալիշի միջն.	58	58	72	38
27.	Ն. Վերին շենի միջն.	33	27	52	30
28.	Ն. Սանասարի միջն.	13	13	42	30
29.	Տումու	70	61	62	41
30.	Մոխրենեսի միջն.	34	31	51	15
31.	Սարգսաշենի	33	33	45	12
32.	Սարուշենի միջն.	32	30	43	10
33.	Փառուխի	5	5	20	0
34.	Արմենակավանի	4	4	0	0
35.	Կոլխոզաշենի միջն.	25	25	60	20
36.	Գետավանի միջն.	25	23	30	13
37.	Նոր Էրքեջի միջն.	25	25	52	12

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

2012-2013 ուստարում հանրապետության 39 դպրոցներում տեսչավորվել է ռուսաց լեզվի դասավանդումը: 58 ուսուցիչների ցույց է տրվել մեթոդական օգնություն, գնահատվել է նրանց կատարած աշխատանքը:

Տեսչավորման առաջնահերթ նպատակն էր ուսուցչի ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի և սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի բարձրացումը:

Հանրապետության դպրոցներում սովորողների հիմնական մասն ունի գիտելիքների լավ մակարդակ: Խոսում են ռուսերեն, պատասխանում են հարցերին, կարողանում են վերարտադրել տեքստի բովանդակությունը, գիտեն քերականական նյութը, ինչի մասին վկայում են նաև անցկացված թեստային աշխատանքների արդյունքները:

Հատկանշական է Հադրութի միջնակարգ, Տումու միջնակարգ, Մարտունու հ. 2 հիմնական, Մարտունու շրջանի Հերհերի և Մաճկալաշենի միջնակարգ, Մարտակերտի հ. 1 միջնակարգ հոսքային, Ասկերանի շրջանի Խնապատի, Ակնաղբյուրի, Խաչմաչի միջնակարգ, Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցների ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների աշխատանքը: Ունենալով երկարամյա աշխատանքային փորձ՝ նրանք գտնում ու կիրառում են առարկայի դասավանդման առավել արդյունավետ ձևեր, միջոցներ, մեթոդներ և հնարներ, մշտապես զարգացնում են սովորողների նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործելու կարողությունները: Նշյալ ուսուցիչների անձնային որակները, առարկայի իմացությունը նրանց կողմից թույլ են տալիս դասագործընթացն անցկացնել ստեղծագործական մակարդակով, հետաքրքրություն առաջացնել սովորողների մեջ:

Տեսչավորումը ցույց տվեց նաև, որ կան դպրոցներ, որոնցում, աշակերտների գիտելիքները չեն համապատասխանում պետական կրթական չափորոշչի պահանջներին: Դժվարանում են խոսել ռուսերեն, առանց թարգմանության չեն հասկանում ռուսերեն խոսքը, քերականական նյութը պատշաճ կերպով չի ուսումնասիրվում: Նման դպրոցների թվում են Հադրութի շրջանի Մոխրենեսի, Ասկերանի շրջանի Փառուխի և Արմենակավանի, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի դպրոցները: Նշյալ դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչներն աշխատում են առանց ստեղծագործական մոտեցման, միօրինակ, չունեն ուսուցման մշակված համակարգ: Նրանք պետք է աշխատեն դասերը դարձնել հետաքրքիր, տարաբնույթ, որպեսզի աշակերտները ցանկանան պատրաստվել դասերին, անհամբերությամբ սպասեն դասին:

Ստուգումների ընթացքում ուսումնասիրելով աշակերտների կողմից տետրերի վարումը, դիտողություններ են արվել ուսուցիչներին, քանի որ դրանք ժամանակին չեն ստուգում: Կան տետրեր, որոնցում բացակայում են ամսաթվերը, չկան նոր նյութին վերաբերող գրառումներ:

Տետրերի վիճակից ելնելով՝ կարելի է անմիջապես տալ ուսուցչի, ինչպես և աշակերտի գնահատականը: Ուստի ուսուցիչներին հանձնարարվում է հանգամանորեն ծանոթանալ աշակերտական տետրերի վարման և նրանց ստուգման կարգին:

Այսօր հանրապետության շատ դպրոցներում աշխատում են առարկայի երիտասարդ ուսուցիչներ, որոնց աշխատանքում բացահայտված թերությունները բացատրվում են փորձի բացակայությամբ: Նրանք պետք է հաճախ լինեն առավել փորձառու ուսուցիչների դասերին, ինչը մեթոդական մեծ օգնություն է սկսնակ ուսուցչին:

Խորհուրդ է տրվում առարկայական մեթոդմիավորումներում ընդգրկված ուսուցիչներին անցկացնել ստեղծագործական հաշվետվություններ՝ սկսնակներին ծանոթացնելով ձեռք բերած փորձին:

Հանրապետության դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների գործունեության գլխավոր նպատակն է բացահայտել ռուսական մեծ մշակույթի աշխարհը, դաստիարակել հարգանք և սեր ռուսաց լեզվի հանդեպ: Մեր ուսուցիչները կարողանում են իրագործել այս նպատակը:

Հաշվետվությանը կցվում են նաև տեսչավորված դպրոցներում անցկացված թեստային աշխատանքների արդյունքները, որոնք վկայում են սովորողների թույլ գրավոր խոսքի մասին, հատկապես Մոշխմհատի, Մադաթաշենի, Քարեգահի, Չարեքտարի, Հին Շենի, Մոխրենեսի դպրոցներում:

N/N	Դպրոցը	Գրել են	Առաջադիմություն %	Որակ %
1.	Ասկ. շրջ. Մոշխմհատի	2	50	0
2.	Ասկ. շրջ. Մադաթաշենի	8	37	0
3.	Քաշաթաղի շրջ. Քարեգահի	24	37	0
4.	Քաշաթաղի շրջ. Հոչանցի	8	63	13
5.	Ասկ. շրջ.Ակնաղբյուրի	34	74	26
6.	Քաշաթաղի շրջ. Մշենիի	12	75	8
7.	Շահումյանի շրջ. Չարեքտարի	25	16	4
8.	Շահումյանի շրջ. Դաղիվանքի	10	40	10
9.	Մարտունու շրջ. Գիշու	116	76	13
10.	Մարտունու շրջ. Խնուշինակի	40	67	12
11.	Շուշիի շրջ. Հին Շենի	6	50	0
12.	Շուշիի շրջ. Մեծ Շենի	11	63	18
13.	Շուշիի շրջ. Քարինտակի	62	46	17
14.	Ասկ. շրջ. Սգնեքի	11	90	36
15.	Ասկ. շրջ. Խաչմաչի	22	81	18
16.	Մարտունու շրջ. Մաճկալաշենի	48	81	25
17.	Մարտունու շրջ. Հերհերի	48	77	31
18.	Ասկ. շրջ. Խնապատի	77	80	35
19.	Ասկ. շրջ. Բերքաձորի	18	77	16
20.	Ստեփ. հ. 10 հիմնական	398	80	42
21.	Հադրութի	192	89	54
22.	Մարտակերտի հ. 1	225	79	27
23.	Մարտակ. շրջ. Վ.Հոռաթաղի	32	65	12
24.	Մարտակ. շրջ. Հարգուների	15	53	26
25.	Մարտունու հ. 2	135	85	29
26.	Մարտակ. շրջ. Թալիշի	23	47	4
27.	Մարտակ. շրջ. Մատաղիսի	42	52	16
28.	Հադրութի շրջ. Տումու	72	71	31
29.	Հադրութի շրջ. Մոխրենեսի	13	69	0
30.	Ասկ. շրջ. Սարուշենի	27	66	14
31.	Մարտունու շրջ. Սարգսաշենի	26	53	7
32.	Մարտունու շրջ. Կոլխոզաշենի	29	68	17
33.	Շահումյանի շրջ. Նոր Էրքեջի	28	39	3
34.	Շահումյանի շրջ. Գետավանի	24	62	16

Ռ. ՕՍԻՊՈՎ
ԿՊՏ տեսուչ

ԱՆԳԼԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

2012թ. սեպտեմբերից 2013թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում տեսչության հանձնախմբի կազմում Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի և Ստեփանակերտի հ.10 դպրոցներում իրականացվել է անգլերենի դասավանդման դրվածքի ստուգում: Ամփոփելով կատարածը՝ նշենք, որ երկու դպրոցներում էլ դրվածքը համարվել է բավարար:

Դպրոցներում թույլ է բանավոր խոսքի հիմքը, ուսուցիչները դասին չեն խոսում անգլերեն, զարգացած չեն ուսուցիչների, հետևաբար և սովորողների հաղորդակցական հմտությունները: Ցածր են տրված գրավոր աշխատանքների արդյունքները, ինչն ապացուցում է, որ սովորողների գիտելիքները կայուն չեն: Այսպես, համեմատաբար բարձր արդյունքներ են ստացվել Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցի 7-րդ «ա» դասարանում / առաջադիմությունը՝ 86,6%, որակը՝ 26,6%. թեստային գրավոր աշխատանքների արդյունքները կցվում են/: Համեմատելով դասերի որակը տարրական, միջին և ավագ դասարաններում՝ կստանանք հետևյալ պատկերը. 3-4-րդ և 5-րդ դասարաններում սովորողների մոտ նկատվում է սովորելու ցանկություն, ուսուցիչը ակտիվ է, պատրաստ է ներկայանում դասին: Այստեղ հարկ է նշել Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցի ուսուցչուհի Ա. Պողոսյանի աշխատանքի մասին:

6-7-րդ դասարաններից սկսած՝ նկատվում է պասիվություն, ինչպես նաև որոշ ուսուցիչների մոտ, արդեն 9-րդ դասարանում, որտեղ սովորողին պետք է պատրաստեն ավագ դպրոցի համար, և 10 -12-րդ դասարաններում աչքից և ականջից հնարավոր չէ թաքցնել բազմաթիվ սխալները՝ և սովորողի, և ուսուցչի: Հետևություն. ուսուցիչը պետք է զբաղվի ինքնակրթությամբ, իսկ ինքնակրթություն ասելով չենք հասկանում ձևական գրված ռեֆերատները, այլ այն նյութը, որը նախատեսված է դասագրքերով և ծրագրով: Այստեղ պահանջվում են նաև ուսուցչի հետևողականությունը, ստեղծագործական աշխատանքը՝ ինչպես անել, որ սովորողի համար հետաքրքիր լինի և արդյունավետ:

Ուսուցիչները չեն կիրառում դասավանդման արդյունավետ մեթոդներ, դասերն անցնում են ուսուցչակենտրոն մեթոդներով. ավելի շատ խոսում են /այն էլ՝ հայերեն/, քան խոսեցնում, մինչդեռ ուսուցիչն այսօր, հրաժարվելով սովորեցնողի, ամեն ինչ պատրաստ մատուցելու իր դերից, պետք է դառնա ուսուցման գործընթացի կազմակերպող ու կողմնորոշող՝ չթողնելով, որ աշակերտը միայն անհաղորդ լսի, դասը բացատրելով հենց նրա միջոցով:

Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոցում երրորդ օտար լեզուներն են ֆրանսերենը և գերմաներենը: Դասավանդող երկու ուսուցիչներն էլ սկսնակ են, չունեն այդ առարկաները դասավանդելու փորձ, արդյունքների մասին դեռևս վաղ է խոսել: Նրանք շատ պետք է աշխատեն և՛ մասնագիտական գիտելիքների բարելավման, և՛ դասավանդման նոր մեթոդներ կիրառելու ուղղությամբ:

2012-2013 ուստարվա ապրիլ-մայիս ամիսներին կրթության տեսչության հանձնախմբի կազմում 5 միջնակարգ դպրոցներում իրականացվել է անգլերենի դասավանդման դրվածքի ստուգում: Ամփոփելով կատարածը՝ կարելի է նշել, որ տեսչավորված դպրոցներում, չնայած վերհանված թերություններին, բավարար է անգլերենի՝ որպես օտար լեզվի, դասավանդման դրվածքը: Դասավանդող ուսուցիչների մեծ մասը բարձրագույն կրթությամբ մասնագետներ են, ովքեր շարունակում են ուսումը նույն մասնագիտության գծով մագիստրատուրայում, սակայն փոխարինում են ֆիզիոլոգիական արձակուրդում գտնվող հիմնական մասնագետներին: Ստուգված դպրոցներից հարկ է նշել Շահումյանի շրջանի Նոր Վերինշենի միջնակարգ դպրոցի անգլերենի դրվածքի մասին /ուսուցչուհի՝ Յ. Հակոբյան, 10 տարվա աշխատանքային փորձով. տրված գրավոր աշխատանքների արդյունքները կցվում են/, քանի որ ուսուցչուհին, չունենալով համապատասխան կրթություն, տարիների աշխատանքային փորձով կարողանում է աշակերտներին օտար լեզու սովորեցնել. այդպիսով աշակերտները գոնե որոշ չափով տիրապետում են անգլերենին, և ընդհանուր առմամբ, գնահատվում է ուսուցչուհու կատարած աշխատանքը:

Նույն շրջանի Նոր Մանաշիդ, Մարտունու շրջանի Սարգսաշեն, Կոլխոզաշեն, Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում ունենք սկսնակ, բայց աշխատող մասնագետներ՝ բարձրագույն կրթությամբ և աշխատանքային ներուժով:

☞ 14

ՏԵՍՉԱԿԱՆ

Տրված գրավորների արդյունքները ցածր էին Կոլխոզաշենի (7 ամսվա աշխատանքային փորձով է. Սաղյան, փոխարինում է հիմնական մասնագետին), Սարուշենի (8 ամսվա աշխատանքային փորձով՝ Ա. Հարությունյան, փոխարինում է հիմնական մասնագետին. գրավորների արդյունքները կցվում են) դպրոցներում: Սակայն բոլոր դպրոցներում աշակերտները կարողանում են լավ կարդալ, ակտիվ են դասաժամերի ընթացքում, պատասխանում են տրված հարցերին, պատրաստ են ներկայանում դասերին՝ տնային առաջադրանքներով, բառապաշարի յուրացմամբ: Անգլերենի ուսուցումը նշված դպրոցներում ունի հիմք, բայց կատարվելիք աշխատանքներ դեռևս շատ կան՝ սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ուսուցիչները հիմնականում աշխատասեր են, զբաղվում են ինքնակրթությամբ, աշխատանքներ են տանում անգլերենի առարկայական կաբինետի ստեղծման ուղղությամբ, բայց անհրաժեշտ է հնարավորինս համագործակցել:

Նշված դպրոցների ուսուցիչներն ունեն գիտելիքներ, իսկ դասավանդման արդյունքի մասին դեռ վաղ է խոսել, նրանք հիմնականում երիտասարդ և դեռևս փորձ չունեցող մասնագետներ են:

Տեսչավորված գրեթե բոլոր դպրոցներում թույլ է և՛ դասավանդող ուսուցիչների, և՛ սովորողների բանավոր խոսքը, իսկ պատճառը պետք է փնտրել նրանում, որ ուսուցիչները շատ քիչ են օգտագործում կամ ընդհանրապես չեն օգտագործում անգլերենը դասագործընթացում: Այստեղից էլ պարզ է՝ սովորողը չի լսում և դժվարանում է խոսել: Քիչ է կատարվում աշխատանք ինքնակրթության ուղղությամբ, կամ էլ ուսուցիչն ընտրում է սխալ ուղղություն: Զբաղվելով ինքնակրթությամբ՝ ուսուցիչն աստիճանաբար պետք է վերացնի մասնագիտական թերությունները, սովորի չիմացածը:

Հադրութի շրջանի Տումու միջնակարգ, Ասկերանի շրջանի Խրամորթի միջնակարգ դպրոցների Փառուխ և Արմենակավան գյուղերի մասնաճյուղ դպրոցներում չկան համապատասխան մասնագետ-ուսուցիչներ:

<<	Դպրոցի անունը	Աշակերտների քանակը	Գրավորներին մասնակիցների քանակը	Առաջ. (%)	Որակ (%)
1.	Քարինտակ	37	34	29, 4	5,8
2.	Ստեփանակերտի հ.10 հիմն. դպրոց	139	124	30,6	4,6
3.	Նոր Վերինշեն	13	11	72,7	18,2
4.	Սարուշեն	8	8	38	0
5.	Կոլխոզաշեն	7	6	33	0

Կ. ՓԱՌՅԱՆ
ԿՊՏ տեսուչ
Թ. ՍԱՎԱԴՅԱՆ
ԿԳ վարչության գլխավոր մասնագետ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2012-2013 ուստարում համակողմանի ստուգումներ են կատարվել հանրապետության 40 դպրոցներում: Տեսչավորվել են Ստեփանակերտ քաղաքում՝ 1, Ասկերանի շրջանում՝ 10, Մարտակերտի շրջանում՝ 7, Մարտունու շրջանում՝ 8, Հադրութի շրջանում՝ 2, Շուշիի շրջանում՝ 3, Շահումյանի շրջանում՝ 5, Քաշաթաղի շրջանում՝ 5 դպրոցներ:

Այդ դպրոցներում աշխատում են առարկայի 104 ուսուցիչներ, որոնցից 100-ը ունեն բարձրագույն կրթություն, այդ թվում 91-ը՝ մասնագիտական: Ուսուցիչներն ապահովված են գործող ծրագրերին համապատասխան ուսուցչի ձեռնարկներով, ունեն օրինակելի թեմատիկ պլանավորումներ, ապահովում են ծրագրային նյութի կատարումը: Բոլոր ուսուցիչների մոտ կատարվել են 471 ժամ դասալսումներ՝ յուրաքանչյուրի մոտ 4-5 ժամ, տեսչավորված դպրոցների 249 դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ: Ստորև բերվում է տեսչավորված դպրոցներում տրված գրավոր աշխատանքների ամփոփ արդյունքների աղյուսակը:

Հհ	Դպրոցը	Աշակերտների քանակը	Գրավորներին մասնակցած աշակերտների քանակը	Առաջ. /%/	Որակ /%/
1.	Ստեփանակերտի հ. 10	317	285	41	13
	Ասկերանի շրջան				
2.	Մադաթաշենի	10	10	20	10
3.	Ակնաղբյուրի մ/դ	49	47	40	11
4.	Զրաղացներ /Ակնաղբյուրի մասնաճյուղ/	3	3	33	–
5.	Սգնեքի մ/դ	14	14	57	14
6.	Խաչմաչի մ/դ	24	24	21	–
7.	Բերքաձորի	11	11	18	–
8.	Խանապատի	82	80	54	29
9.	Սարուշենի	36	28	43	7
10.	Արմենակավանի	4	4	–	–
11.	Փառուխի	5	5	–	–
	Մարտակերտի շրջան				
12.	Մարտակերտի հ.1	214	190	44	18
13.	Հարգոների	43	42	23	2
14.	Վերին Հոռաթաղի	43	35	36	13
15.	Մատաղիսի	57	57	31	12
16.	Թալիշի	58	57	39	9
17.	Աստաշաձորի	79	79	32	9
18.	Գետավանի	25	24	38	8
	Մարտունու շրջան				
19.	Գիշու	107	100	37	7
20.	Խնուշինակի	57	55	44	9
21.	Մաճկալաշենի	44	43	28	9
22.	Հերհերի	66	63	41	14
23.	Մարտունու հ.2	177	148	38	9
24.	Սարգսաշենի	33	33	15	3
25.	Կոլխոզաշենի	25	25	41	8
	Հադրութի շրջան				
26.	Հադրութի	338	286	40	12
27.	Տումու	70	63	51	17
	Շուշիի շրջան				
28.	Հին Շենի	4	4	25	–
29.	Քարին տակի	73	70	25	3
30.	Մեծ Շենի	11	11	36	18
	Քաշաթաղի շրջան				
31.	Քարեգահի	25	21	29	10
32.	Հոչանցի	8	8	25	–
33.	Սոնասարի	10	10	–	–
34.	Մշենու	15	15	27	20
35.	Արվականի	4	2	–	–
	Շահումյանի շրջան				
36.	Դաղիվանքի	14	14	29	7
37.	Չարեքտարի	26	22	18	–
38.	Նոր Վերինշենի	31	29	4	–
38.	Նոր Մանաշիդի	13	13	38	–
39.	Նոր Էրքեջի	25	25	32	12
	Ընդամենը	2250	2057	37	11

Գրավոր աշխատանքները ցույց տվեցին, որ աշակերտների 63 տոկոսը մաթեմատիկա առարկայից ունի անբավարար գիտելիքներ, ցածր է ուսման որակը, ուսուցիչների կողմից նշանակված ընթացիկ և կիսամյակային գնահատականների մեծ մասը չի համապատասխանում աշակերտների փաստացի գիտելիքներին:

Նշված դպրոցների 5-12 /9/ -րդ դասարանների 2250 աշակերտներից գրավորներին մասնակցել են 2057-ը կամ 92 տոկոսը: 4-6 միավորներ են ստացել 534 աշակերտ կամ 26 տոկոսը, 7-10 միավորներ՝ 216-ը կամ 11 տոկոսը: Գրավորներից բացակայած 193 աշակերտներից /8 տոկոս/ ամենաշատը բաժին է ընկնում Հադրութի շրջկենտրոնի /52 աշակերտ/, Ստեփանակերտի հ.10 /32 աշակերտ/, Մարտունու հ.2 /29 աշակերտ/ և Մարտակերտի հ.1 /24 աշակերտ/ դպրոցներին:

Համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել /ընդհանուր՝ 37 % -ից բարձր / Ստեփանակերտի հ.10 /41%/, Ասկերանի շրջանի Սգնեքի /57%/, Խանաբադի /54%/, Սարուշենի /43%/, Ակնաղբյուրի / 40%/, Մարտունու շրջանի Խնուշինակի /44%/, Հերհերի /41%/, Կոլխոզաշենի /41%/, շրջկենտրոնի հ. 2 /38%/, Մարտակերտի հ. 1 /44%/, Թալիշի /39%/, Գետավանի /38%/, Հադրութի շրջկենտրոնի /40%/, Տումու /51%/, Շահումյանի շրջանի Նոր Մանաշիդի /38%/ դպրոցներում:

Ուսման որակը /7-10 միավորներ ստացած աշակերտներ/ համեմատաբար բարձր է եղել Ասկերանի շրջանի Խնապատի /29%/, Սգնեքի /13%/, Քաշաթաղի շրջանի Մշենու /20%/, Շուշիի շրջանի Մեծ Շենի /18%/, Հադրութի շրջկենտրոնի /12%/, Տումու /17 %/, Մարտունու շրջանի Հերհերի /14%/, Մարտակերտի հ.1 /18%/, Վերին Հոռաթաղի /13%/, Մատաղիսի /12%/, Ստեփանակերտի հ.10 /13%/ և Շահումյանի շրջանի Նոր Էրքեջի /12%/ դպրոցներում:

Ոչ մի աշակերտ 7-10 միավորներ չի ստացել, կամ զրո տոկոս ուսման որակ է գրանցվել Ասկերանի շրջանի Բերքաձորի, Արմենակավանի, Փառուխի, Մադաթաշենի, Զրաղացների, Խաչմաչի, Շահումյանի շրջանի Նոր Վերինշենի, Նոր Մանաշիդի, Չարեքտարի, Շուշիի շրջանի Հին Շենի, Քաշաթաղի շրջանի Հոչանցի, Սոնասարի, Արվականի դպրոցներում:

Սպասվածից ցածր առաջադիմություն և ուսման որակ է գրանցվել Մարտակերտի շրջանի Առաջաձորի /32% և 9%/, Մարտունու շրջանի Գիշու /37% և 7%/, Մաճկալաշենի /28% և 9%/ և Շուշիի շրջանի Քարինտակի /25% և 3 %/ դպրոցներում:

Կատարած դասալսումները ցույց են տվել, որ բարեխղճորեն և բավարար մակարդակի դասեր են վարում Զ. Բեգլարյանը, Ժ. Դավթյանը և Մ. Մելքումյանը /Ասկերանի շրջանի Խնապատի մ/դ/, Գ. Մարգարյանը և Ա. Ղարամյանը /Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի մ/դ/, Ս. Գրիգորյանը /Ասկերանի շրջանի Սարուշենի մ/դ/, Գ. Իսրայելյանը, Կ. Գրիգորյանը և Մ. Սարգսյանը /Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային դպրոց/, Ա. Ահարոնյանը /Մարտունու հ.2 հիմնական դպրոց/, Վ. Ամիրջանյանը /Հադրութի շրջանի Տումու մ/դ/, Ս. Գրիգորյանը և Վ. Գրիգորյանը /Մարտունու շրջանի Հերհերի մ/դ/, Մ. Սարգսյանը /Ստեփանակերտի հ.10/, Ա. Դավթյանը և Ս. Ավետիսյանը /Հադրութի միջնակարգ հոսքային դպրոց/:

Նրանք դասերը կազմակերպում են գիտական բարձր մակարդակով, զարգացնում են աշակերտների տրամաբանական մտածողությունը, ձգտում են, որ աշակերտներն իրենց տեսական գիտելիքները կիրառեն խնդիրների և վարժությունների լուծման ժամանակ, ապահովում են աշակերտների ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքները, սիստեմատիկաբար զբաղվում են իրենց մասնագիտական և մեթոդական պատրաստականության բարձրացմամբ, և պատահական չէ, որ այս դպրոցներում գրանցվել է համեմատաբար բարձր առաջադիմություն և ուսման որակ:

Միաժամանակ կատարած դասալսումներից պարզվել է, որ առարկայի դասավանդման դրվածքը ցածր հիմքի վրա է Շահումյանի շրջանի Նոր Վերինշենի, Քաշաթաղի շրջանի Սոնասարի, Արվականի, Չարեքտարի, Ասկերանի շրջանի Խաչմաչի, Արմենակավանի, Փառուխի, Բերքաձորի, Մարտունու շրջանի Սարգսաշենի դպրոցներում:

Ստուգումների ժամանակ անբավարար են գնահատվել առարկան դասավանդող ուսուցիչներ Գ. Գասպարյանի /Ասկերանի շրջանի Մադաթաշեն/, Ռ. Ղազարյանի /Ասկերանի շրջանի Արմենակավան/, Կ. Համբարձումյանի /Ասկերանի շրջանի Խաչմաչ/, Ա. Հովհաննիսյանի /Ասկերանի շրջանի Փառուխ/, Թ.Սարիբեկյանի /Քաշաթաղի շրջանի Սոնասար/, Է. Վարդանյանի /Քաշաթաղի շրջանի Հոչանց/, Հ. Սարգսյանի /Շահումյանի շրջանի Չարեքտար/, Ռ. Կիրակոսյանի /Շահումյանի շրջանի Նոր Վերինշեն/ աշխատանքները:

Այս ուսուցիչներն ամենայն լրջությամբ չեն նախապատրաստվում օրվա դասերին, դասավանդում են ավանդական մեթոդներով, չեն ապահովում աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքը, տնային աշխատանքների տետրերը չեն ստուգում, նպատակային չեն օգտագործում դասապրոցեսը, դասերին աշակերտներն ակտիվ և ուշադիր չեն:

Օ. ԱՍՐՅԱՆ
ԿԳՆ նախարարի խորհրդական
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ
ԿՊՏ բաժնի վարիչ

ՖԻԶԻԿԱ

2012/2013 ուստարվա ընթացքում, համաձայն կրթության պետական տեսչության աշխատանքային պլանի, իրականացվել են համակողմանի ստուգումներ հանրապետության մի շարք դպրոցներում, ընդ որում՝ 33-ում ստուգվել է ֆիզիկայի դասավանդման դրվածքը, որից 23-ում առարկայի դասավանդման դրվածքը գնահատվել է «բավարար», 2-ում՝ «միջինից ցածր», 6-ում՝ «անբավարար», 2-ում չի գնահատվել:

Տեսչավորված դպրոցներում առարկան դասավանդում են 50 ուսուցիչներ, որոնցից բարձրագույն մասնագիտական կրթություն ունեն 36-ը /2-ը՝ թերի բարձրագույն մասնագիտական կրթությամբ/, 14-ը՝ բարձրագույն ոչ մասնագիտական կրթությամբ, այդ թվում են՝ Բերքաձորի /Յ. Գասպարյան/, Առաջաձորի /Ա. Աբրահամյան/, Վերին Հոռաթաղի /Ա. Ղալլաքյան/, Հոչանցի /Է. Վարդանյան/, Սոնասարի /Թ. Սարիբեկյան/, Քարեգահի /Է. Ղազարյան/, Չարեքտարի /Հ. Սարգսյան/, Դաղիվանքի /Ռ. Պետրոսյան/, Նոր Էրքեջի /Օ. Թովմասյան/, Արմենակավանի /Ռ. Ղազարյան/, Փառուխի /Ա. Հովհաննիսյան/, Սարգսաշենի /Մ. Ասլանյան/, Կոլխոզաշենի /Պ. Հարությունյան, Ա. Աղաջանյան/ դպրոցների ուսուցիչները:

Ուսուցիչների մի մասը հիմնականում տիրապետում է առարկային ու նրա դասավանդման մեթոդներին: Նրանց թվում են Սուսաննա Շադյանը /Հադրութի միջնակարգ հոսքային դպրոց/, Կարինե Հայրապետյանը /Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոց/, Շահեն Մարգարյանը /Սգնեքի միջնակարգ դպրոց/, Իրինա Հայրապետյանը /Մարտունու միջնակարգ հոսքային դպրոց/, Էլլադա Աղասյանը /Մարտակերտի միջնակարգ հոսքային դպրոց/: Կան ուսուցիչներ, որոնք, ունենալով ոչ մասնագիտական կրթություն, դասավանդման գործընթացում հասնում են որոշակի հաջողությունների, քանի որ մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ: Նրանց թվում է Պոբեդիկ Հարությունյանը /Կոլխոզաշենի միջնակարգ դպրոց/: Ուրախալի է այն փաստը, որ կան նաև երիտասարդ մասնագետներ, որոնք չունեն դասավանդման անհրաժեշտ փորձ, բայց ունեն ձգտում և մշտապես կատարելագործվելով՝ կարող են դառնալ լավ մասնագետներ: Նրանց թվում են Մանուշ Գրիգորյանը /Գետավանի միջնակարգ դպրոց/, Միլետա Թադևոսյանը /Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոց/, Անահիտ Ներսիսյանը /Մարտակերտի միջնակարգ հոսքային դպրոց/: Մյուս մասը չի կարողանում յուրաքանչյուր թեմայի մեջ առանձնացնել գլխավորը երկրորդականից, չծանրաբեռնել երեխաներին ավելորդ, ոչ էական տվյալներով ու թվերով: Պահանջվող ուշադրություն չի դարձվում տնային աշխատանքների տրմանն ու ստուգմանը, նոր նյութի հաղորդման ժամանակ չի ապահովվում նախորդ ու նոր թեմաների, ինչպես նաև միջառարկայական կապը, քիչ տեղ է տրվում խնդրահարույց իրավիճակների ստեղծմանը:

Դասավանդման գործընթացում ուսուցիչների մի մասն ուշադրության կենտրոնում է պահում 2-3 համեմատաբար լավ սովորող աշակերտների՝ ուշադրությունից դուրս թողնելով դասարանը, ինչը բացասաբար է անդրադառնում ընդհանուր առաջադիմության վրա, քիչ ուշադրություն է դարձվում խնդիրների լուծմանը: Դա է պատճառը, որ աշակերտները դժվարանում են որոշել՝ որ բանաձևն է պետք օգտագործել խնդիրների լուծման ժամանակ, չեն կարողանում աշխատել տարբեր համակարգերում տրված չափման միավորներով, կառուցել գրաֆիկներ: Որոշ ուսուցիչներ ավելի շատ մատուցում են

ՏԵՍՉԱԿԱՆ

դասագրքային նյութը, քան խորանում երևույթների, հասկացությունների, օրենքների բուն էության, ֆիզիկական իմաստի բացատրության մեջ: Իրականում չի գործում ուսուցչի ինքնակրթության համակարգը: Ուսուցիչների մի մասը դասերին ներկայանում է առանց օրվա դասերի պլան-սեղմագրերի, իսկ մյուս մասի գրած պլան-սեղմագրերը կրում են ձևական բնույթ:

Ստուգումներից պարզվել է, որ բոլոր ուսուցիչների առաջնորդվում են գործող ծրագրերով ու ծրագրային նյութին համապատասխան դասագրքերով, խնդրագրքերով: Կարելի է ասել, որ նշված գործընթացը դպրոցների մեծ մասում բավարար է, կան թերություններ ու բացթողումներ: Տրվել են պահանջվող քանակությամբ թեմատիկ ու կիսամյակային գրավոր աշխատանքներ, որոնք ստուգվել ու մտցվել են դասամատյանները, ինչպես նաև կատարվել են նախատեսված գործնական ու ցուցադրական աշխատանքները: Ծրագրային նյութի կատարման գործում կան սխալներ Բերքածորի, Մադաթաշենի հիմնական և Մոշխմհատի մասնաճյուղի, Խրամորթի միջնակարգ դպրոցի Արմենակավանի և Փառուխի մասնաճյուղերի, Քարեգահի, Սոնասարի, Հոչանցի դպրոցներում /մեծ մասամբ՝ ոչ մասնագետ ուսուցիչների մոտ/, որոնք սկսվում են ուսուցիչների կողմից ոչ ճիշտ ձևով կազմված թեմատիկ պլանից: Նշված դպրոցների ուսուցիչների մոտ կան թերություններ, սխալներ նոր նյութի հաղորդման, խնդիրների լուծման, գրաֆիկների կառուցման, տնային աշխատանքների տրման ու ստուգման, թեմատիկ ու կիսամյակային գրավոր աշխատանքների տեքստերի կազմման /ըստ ծրագրի/, գրավորների ստուգման ու աշակերտների գնահատման գործում: Ուսուցիչների մեծ մասը ճիշտ չի ընտրում թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների տեքստերը, ինչպես նաև ստուգում, գնահատում է՝ առանց պահպանելու գնահատման չափանիշները և ընդհանրապես ճիշտ չի կիրառում գնահատման նոր համակարգը: Որոշ դպրոցներում դասամատյանների համապատասխան էջի գնահատականները չեն համապատասխանում վերջում նշանակված բաղադրիչ գնահատականներին: Պարզվել են նաև դեպքեր, երբ ուսուցչի կողմից չեն ստուգվել և գնահատվել մի շարք թեմատիկ ու կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ, սակայն դրանց դիմաց նշանակված են գնահատականներ, չեն կատարվել ծրագրով նախատեսված գործնական աշխատանքները: Հարկ է նշել, որ գործնական /լաբորատոր/ աշխատանքների կատարման հաճախությունը որոշվում է ծրագրով, ու լաբորատորիա չունենալու դեպքում նախատեսված դասաժամերին անհրաժեշտ է օգտագործել վիրտուալ լաբորատորիան կամ աշակերտներին հանձնարարել պատրաստել ռեֆերատներ կամ էլ դրանց հետ միասին՝ ինքնաշեն սարքեր, որոնց միջոցով կհարստացվի դպրոցի լաբորատորիան: Գնահատելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր աշակերտի մասնակցության աստիճանը աշխատանքին, փորձարարական հմտությունները, արդյունքները ներկայացնելու ու մեկնաբանելու կարողությունները:

Կատարած դասալսումներից պարզ դարձավ, որ աշակերտները հիմնականում ապահովված են դասագրքերով /բացառությամբ Չարեքտարի դպրոցի/: Նրանց զգալի մասը չունի խոր ու կայուն գիտելիքներ առարկայից, ցածր է նրանց մոտ տրամաբանական մտածողությունը, ավելի շատ անգիր են անում դասը /այն էլ՝ ոչ լրիվությամբ/, չեն կարողանում բացատրել հենց իրենց կողմից տրված սահմանումների, օրենքների բուն էությունը, տալ մեծությունների չափման միավորները ՄՀ-ում ու բացատրել նրանց ֆիզիկական իմաստը: Բավարար մակարդակի վրա չէ սովորողների բանավոր խոսքը, պատմելու ոճը, հաճախ խոսում են սխալներով, աղավաղում որոշ ֆիզիկական եզրույթներ, ճիշտ չեն կատարում օրենքների ձևակերպումը: Չեն կարողանում ինքնուրույն լուծել խնդիրներ, կառուցել գրաֆիկներ: Աշակերտների փաստացի գիտելիքները չեն համապատասխանում նրանց ընթացիկ ու կիսամյակային գնահատականներին: Ուսուցիչները թույլ են տալիս գնահատականների արհեստական բարձրացումներ:

Ստուգումներից պարզ դարձավ, որ բավարար կահավորվածությամբ ֆիզիկայի կաբինետ, լաբորատորիա ունեն Ստեփանակերտի հ.10, Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի, Խնապատի, Սզնեքի, Հադրութի շրջանի Տումու, Հադրութի միջնակարգ հոսքային, Մարտակերտի շրջանի Մատաղիսի, Մարտակերտի միջնակարգ հոսքային դպրոցները, ինչը հնարավորություն է տալիս ուսուցիչներին որոշակի տեղ տալ ֆիզիկական փորձերին ու լաբորատոր /գործնական/ պարապմունքներին, սակայն ոչ բոլոր դասերն են իրականացվում ֆիզիկայի կաբինետում: Իսկ Քաշաթաղի շրջանի Քարեգահի միջնակարգ դպրոցում չնայած առկա են բոլոր ցուցադրական ու գրեթե բոլոր գործնական աշխատանքների վերաբերյալ սարքավորումները, սակայն համապատասխան դասաժամերին աշակերտներն ընդամենը արտագրում են հանձնարարված աշխատանքը դասագրքից ու փորձում ինչ-որ չափով բացատրել: Շուշիի շրջանի Քարինտակի, Ասկերանի շրջանի Խնապատի, Սարուշենի, Մարտունու շրջանի Խնուշինակի, Սարգսաշենի, Մարտակերտի շրջանի Հարգամերի, Վերին Հոռաթաղի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի դպրոցներն ունեն խառը լաբորատորիաներ, որոնք ավելի շատ պահեստի են նման: Մի շարք դպրոցներում ուսումնանյութական բազան բավականին աղքատ է՝ լաբորատոր սարքավորումներն ու գործիքները հնարավորություն չեն տալիս կատարելու ֆիզիկայի ծրագրով նախատեսված լաբորատոր և գործնական աշխատանքների զգալի մասը, ցուցադրական փորձերը լաբորատորիայում հնարավոր չէ կատարել. կաբինետում առկա են ընդամենը մի քանի չափիչ սարքեր և պաստառներ, դրանք էլ դասագործընթացում համարյա չեն օգտագործվում: Նման պայմաններում ֆիզիկայի լիարժեք դասավանդումը բացառվում է:

Մի շարք դպրոցներում, օգտագործելով ընձեռված հնարավորությունները, տվել ենք նաև ցուցադրական դասեր: Լսված բոլոր դասերը քննարկվել են ուսուցիչների ու մեթոդմիավորման նախագահների կամ տնօրենության անդամների հետ: Տրվել են բազմաթիվ առաջարկություններ ու հանձնարարականներ՝ ուղղված առարկայի դասավանդման դրվածքի բարելավմանը, ինչը ցավոք, ընդհանուր առմամբ գտնվում է ցածր մակարդակի վրա:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

ՔԻՄԻԱ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում կրթության պետական տեսչության կողմից իրականացված պլանային ստուգումների մաս է կազմել նաև քիմիայի և կենսաբանության դասավանդման դրվածքի ստուգումը համակողմանի տեսչավորման ենթարկված համարյա բոլոր դպրոցներում:

Ստուգումների ընթացքում պարզվել է, որ տվյալ դպրոցներում դասավանդում են մասնագետ ուսուցիչներ՝ բացառությամբ Քաշաթաղի շրջանի Արվականի, Մշենիի, Շահումյանի շրջանի Դադիվանքի, Շուշիի շրջանի Մեծ Շենի, Հին Շենի, Ասկերանի շրջանի Սարուշենի (կենսաբանություն), Փառուխի, Արմենակավանի, Մարտունու շրջանի Կոլխոզաշենի (քիմիա) միջնակարգ դպրոցների:

Ուսուցիչներն առաջնորդվում են գործող ծրագրով, ունեն համապատասխան թեմատիկ պլանավորումներ, գրում են ամենօրյա պլան սեղմագիր, օգտվում են ուսումնաօժանդակ ձեռնարկներից, կատարում թեստային առաջադրանքներ, լուծում խնդիրներ, ինչպես նաև հնարավոր լաբորատոր ու գործնական առաջադրանքներ: Ուսուցիչների մեծ մասը տիրապետում է տեղեկատվական տեխնոլոգիաներին, դասապրոցեսում կատարում են վիրտուալ փորձեր:

Վիրտուալ միջավայրում սովորողը ծանոթանում է լաբորատոր փորձնական նյութերին և դրանց հատկություններին սովորում է օգտագործել լաբորատոր սարքավորումներն ու գործիքները. նման աշխատանքները հաջող են ստացվում մայրաքաղաքի դպրոցներում: Շրջանների որոշ դպրոցներում (հիմնականում Քաշաթաղի և Շահումյանի շրջանում) զգացվում է քիմիա և կենսաբանություն առարկաների դասագրքերի պակաս:

Կրթական բարեփոխումների ծրագրի պահանջներն իրականացնելու նպատակով ժամանակակից լաբորատոր սարքավորումներով, հայտանյութերով ապահովված են մայրաքաղաքի, շրջանների որոշ դպրոցներ. մնացած դպրոցները դրա կարիքն ունեն:

Դիդակտիկ նյութերով ապահովված դպրոցների ուսուցիչները հնարավորություն ունեն կատարելու առարկայական ծրագրով ամրագրված բոլոր լաբորատոր ու գործնական աշխատանքները, որը ժամանակի պահանջ է, նման դեպքում դասը կահավորված է, բարձր է դասի օ.գ.գ.-ն:

Ստուգված դպրոցներից կաբինետային համակարգով են աշխատում մայրաքաղաքի հ. 10, Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի, Խաչմաչի, Մարտունու շրջանի Հերհերի, Գիշու, Ղուզե Ճարտարի, Սարգսաշենի, Մարտակերտի Վ. Բալայանի անվան հ. 1, Մարտակերտի շրջանի Գետավանի (կենսաբանություն), Հադրութի շրջանի Հադրութի (հոսքային), Տումու միջնակարգ դպրոցները, մնացած դպրոցներում կատարվում են միայն պարզագույն ցուցադրական փորձեր, նկատելի է քարշիչ պահարանի բացակայությունը, ինչն անվտանգության տեխնիկայի կանոնների կոպիտ խախտում է: Որոշ դպրոցներում ծրագրով նախատեսված գործնական աշխատանքները փոխարինվում են փորձարարական խնդիրների լուծմամբ:

Ստուգված դպրոցներից առարկաների դասավանդման վիճակը համեմատաբար բարվոք է մայրաքաղաքի հ. 10 (Սուսաննա Մարության, Նելլի Հայրապետյան), Մարտակերտի հ.1 (Ժասմեն Դավթյան, Մարգարիտա Սանթրյան) Գետավանի (Արևիկ Սարգսյան), Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի (Գալյա Մարգարյան, Լենա Մարգարյան), Մարտունու շրջանի Գիշու (Ասյա Օհանջանյան, Ռիտա Ղարիբյան), Հերհերի (Արմենուհի Նարիմանյան), Մարտունու հ.2 (Ռիտա Եսայան), Ղուզե Ճարտարի (Լիլիթ Բալայան), Հադրութի շրջանի Տումու (Լյուդմիլա Ավագյան), Շուշիի շրջանի Քարինտակի (Աշոտ Հակոբյան) դպրոցներում:

Նշված դպրոցների ուսուցիչներն աշխատում են բարեխղճորեն, տիրապետում են առարկաների դասավանդման մեթոդներին, կազմակերպում ժամանակակից դասեր, կիրառում փոխներգործուն մեթոդներ՝ նպատակ ունենալով ստեղծելու մարդու ճանաչողական գործունեության զարգացման պայմաններ:

Ցավալի է, սակայն, որ այդ դպրոցների սովորողները, բացի Մարտունու շրջանի Գիշու, Հերհերի դպրոցներից, հաջողություններ չունեն առարկայական օլիմպիադաներում:

Որոշ դպրոցներում դպրոցական պարտադիր ժամաքանակից մեկ ժամ հատկացված է քիմիա առարկային՝ 7-րդ դասարանում, որը կարևոր է, քանի որ ուսումնական պլանով ժամաքանակը չի հերիքում ծրագրի պահանջի իրականացման համար:

Սովորողների գիտելիքների մակարդակը համեմատաբար ցածր է Քաշաթաղի շրջանի Արվականի, Մշենիի, Շահումյանի շրջանի Դադիվանքի, Ասկերանի շրջանի Փառուխի, Արմենակավանի, Սզնեքի, Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի, Մարտունու շրջանի Կոլխոզաշենի դպրոցներում:

Նշված դպրոցների ուսուցիչներն անելիքներ շատ ունեն. նրանք լրացուցիչ աշխատանք պետք է տանեն հաջողության հասնելու համար:

Սկսնակ ուսուցիչներ են աշխատում Քաշաթաղի շրջանի Հոչանցի, Ասկերանի շրջանի Բերքածորի, Սարուշենի, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Նոր Վերնիշենի, Նոր Էրքեջի, Մարտակերտի շրջանի Գետավանի, Վերին Հոռաթաղի, Առաջածորի, Մարտունու շրջանի Ղուզե Ճարտարի, Կոլխոզաշենի (կենսաբանություն) դպրոցներում: Նրանք շատ պետք է զբաղվեն ինքնակրթությամբ, զարգացնեն իրենց մեթոդամանկավարժական պատրաստականությունը, տիրապետեն դասավանդման նոր մեթոդներին, դրանք հաջողությամբ կիրառեն դասագործընթացում, որով կիրականացնեն ժամանակակից դասին ներկայացվող պահանջներն ու շոշափելի արդյունքների կհասնեն:

Տեսչավորված դպրոցներում քիմիա և կենսաբանություն առարկաների դասավանդման դրվածքը բավարար է գնահատվում, սակայն մտահոգության առիթ է սովորողների գիտելիքների որակի ոչ բարձր մակարդակը, հարց, որին ուշադրություն պետք է դարձնեն դասավանդող բոլոր ուսուցիչները և գալիք ուսումնական տարում աշխատեն նորովի:

Լ. ՍԱՐԳՍՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

2012-2013 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնաժողովների կազմում հանրապետության տարածքում գործող շուրջ 40 հանրակրթական դպրոցներում /Ստեփանակերտի հ. 10, Ասկերանի շրջանի Մադաթաշենի և նրա Մոշխմհատի մասնաճյուղի, Ակնաղբյուրի և նրա Ջրաղացների մասնաճյուղի, Սզնեքի, Խաչմաչի, Խնապատի, Բերքածորի, Սարուշենի, Խրամորթի դպրոցի Փառուխի և Արմենակավանի մասնաճյուղերի , Մարտունու շրջանի Ճարտարի, Գիշու, Խնուշինակի, Հերհերի, Մաճկալաշենի, Մարտունու հ. 2, Սարգսաշենի, Կոլխոզաշենի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի, Հոչանցի, Մշենիի, Մարտակերտի շրջանի Առաջածորի, Մարտակերտի հ. 1, Վերին Հոռաթաղի, Հարգամերի, Մատաղիսի, Թալիշի, Գետավանի,Հադրութի շրջանի Հադրութի, Տումու, Մոխրենեսի, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Դադիվանքի, Նոր Վերինշենի, Նոր Մանաշիդի, Նոր Էրքեջի, Շուշիի շրջանի Մեծ Շենի, Հին Շենի, Քարինտակի/ իրականացվել է ինֆորմատիկայի դասավանդման դրվածքի ստուգում:

Ամփոփելով առարկայի դասավանդման դրվածքի ստուգումները տեսչավորված հանրակրթական դպրոցներում՝ կարելի է եզրակացնել, որ այդ անհրաժեշտ և ժամանակակից առարկան նշված մի շարք դպրոցներում դասավանդող ուսուցիչներից կան փորձառու, աշխատասեր ուսուցիչներ, որոնք լիարժեք տիրապետում են առարկային ու նրա դասավանդման ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդներին, դասագործընթացում կազմակերպում են տարաբնույթ աշխատանքներ, նպատակային և արդյունավետ կատարում աշակերտների համընդհանուր հարցումները, ապահովում ներառարկայական և միջառարկայական կապերը, նոր նյութը մատուցում են՝ օգտագործելով մուլտիմեդիա տեխնոլոգիաների հնարավորությունները, հիմնականում համակարգչային ցուցադրումների միջոցով, մշտապես զբաղվում են ինքնակրթությամբ: Խրախուսելի է, որ նրանք չեն բավարարվում դասագրքի գործնական աշխատանքներով, կազմում են լրացուցիչ հետաքրքիր գործնական աշխատանքներ: Լավ հիմքերի վրա է առարկայի դասավանդման դրվածքը Ստեփանակերտի հ. 10 հիմնական /Արուսյակ Խուրշուդյան/, Հադրութի միջնակարգ հոսքային /Մարիետա Աղաբեկյան, Մարինե Հովհաննիսյան/, Մարտակերտի միջնակարգ հոսքային /Ռուզաննա Հարությունյան/, Մարտունու շրջանի Հերհերի միջնակարգ /Մարգարիտա Գյուրջյան/, Ասկերանի շրջանի Սարուշենի միջնակարգ /Նովելա Սարգսյան/ դպրոցներում: Կան նաև ոչ մասնագետ, սակայն բանիմաց, առարկային ու ուսումնասիրվող համակարգչային ծրագրերին բավարար տիրապետող ուսուցիչներ՝ Նարինե Տոնյան /Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոց/, Ալեքսանդր Ջալունց /Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոց/ և սկսնակ, ներուժ ունեցող ուսուցչուհի Սաթինե Քալանթարյան /Շահումյանի շրջանի Նոր Մանաշիդի միջնակարգ դպրոց/, որը զարգացնելով մեթոդական հմտությունները, կհասնի լավ արդյունքների:

☞16

ՏԵՍՉԱԿԱՆ

Սակայն, դեռևս ուսուցիչների մեծամասնությունը ոչ մասնագետներ են. հիմնականում ավարտել են կարճաժամկետ համակարգչային դասընթացներ, լիարժեք չեն տիրապետում ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր համակարգչային ծրագրերին, դժվարանում են ինքնուրույն ուսումնասիրել դրանք, կարիք ունեն վերապատրաստման: Ոչ բոլոր ուսուցիչներն են բարեխղճորեն ուսումնասիրում ուստարվա մեթոդական ցուցումները, տեղյակ չեն ծրագրային փոփոխություններին, ինչի պատճառով կան ծրագրերի խախտումներ, չի պահպանվել թեմատիկ, գործնական աշխատանքների նվազագույն քանակը, շատ դեպքերում ճիշտ չեն կազմում ու ստուգում թեմատիկ աշխատանքները, ինչը բացասաբար է անդրադառնում դասավանդման որակի վրա:

Թույլ է ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համագործակցությունը, հատկապես շրջաններում, գրեթե չեն կատարվում փոխադարձ դասալսումներ, ընդօրինակման տիպի դասեր, ոչ բոլոր դպրոցներում են կազմակերպվում արտադասարանական միջոցառումներ առարկայից:

Կան դպրոցներ, որտեղ ինֆորմատիկայի դասաժամերն օգտագործում են ուսուցիչների ծանրաբեռնվածությունը բավարարելու համար:

Ցածր է առարկայի դասավանդման դրվածքը Մարտակերտի շրջանի Մատաղիսի, Գետավանի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի, Ասկերանի շրջանի Մադաթաշենի և նրա Մոշխմհատի մասնաճյուղի, Խրամորթի դպրոցի Փառուխի և Արմենակավանի մասնաճյուղերում, Հադրութի շրջանի Մոխրենեսի, Շահումյանի շրջանի Չարեքտարի միջնակարգ դպրոցներում, որտեղ աշակերտների տեսական գիտելիքները և համակարգչային հմտությունները չեն բավարարում նրանց ներկայացվող նվազագույն պահանջները:

Հարկ է նշել նաև, որ տեսչավորված դպրոցների մեծամասնությունը չունի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական ապահովում՝ համակարգչային կաբինետ՝ ժամանակակից համակարգիչներով, որտեղ նաև ապահովվում են անվտանգության և առողջության պահպանման նորմերը, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում ուսուցման ժամանակ և թույլ չի տալիս լիարժեք կատարել ծրագրով նախատեսված բոլոր լաբորատոր ու գործնական աշխատանքները, բավարար չափով զարգացնել աշակերտների համակարգչային հմտությունները: Ուսուցիչներին առաջարկվել է լաբորատոր, գործնական աշխատանքների կազմակերպման ժամանակ հաշվի առնել, որ համակարգիչների քանակը թույլ չի տալիս կազմակերպել անհատական աշխատանք և խմբային աշխատանք կազմակերպելիս նախօրոք բաժանել խմբի յուրաքանչյուր անդամի անելիքը՝ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Ժամանակակից դպրոցներում համակարգիչները պետք է օգտագործվեն որպես դասագործընթացի բաղկացուցիչ մաս ոչ միայն ինֆորմատիկա առարկայի դասավանդման ժամանակ, այլև մյուս առարկաներն ուսուցանելիս՝ ուսումնական նյութը գրավիչ և մատչելի դարձնելու համար: Ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում համակարգչին, ինչի պատճառով այդպիսի դասեր դեռևս քիչ են անցկացվում, հատկապես շրջաններում:

Ք. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Առաջնորդվելով ԼՂՀ ԿԳ նախարարության և Կրթության պետական տեսչության 2012-2013 աշխատանքային պլանով՝ տեսչական հանձնախմբերի կազմում իրականացրել եմ ԼՂՀ 35 ներքոբերյալ հանրակրթական դպրոցների համակողմանի տեսչավորման և մեթոդական օգնության ցուցաբերման աշխատանքներ. Ստեփանակերտի հ. 10, Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային, Հադրութի միջնակարգ հոսքային,Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային, Մարտակերտի շրջանի Առաջածորի, Հարգոմերի, Մատաղիսի, Թալիշի, Գետավանի, Հադրութի շրջանի Տումու, Մոխրենեսի, Մարտունու շրջանի Խնուշինակի, Մաճկալաշենի, Կոլխոզաշենի միջնակարգ, Ղուզե Ճարտարի հիմնական, Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի, Խաչմաչի, Սզնեքի, Խնապատի, Սարուշենի միջնակարգ, Մադաթաշենի, և Բերքաձորի հիմնական, Խրամորթի դպրոցի, Փառուխի, Արմենակավանի մասնաճյուղերի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի, Սոնասարի, Մշենու միջնակարգ, Արվականի հիմնական, Շուշիի շրջանի Քարինտակի, Մեծ Շենի միջնակարգ, Հին Շենի հիմնական, Շահումյանի շրջանի Դադիվանքի, Նոր Վերինշենի, Նոր Մանաշիդի, Նոր Էրքեջի միջնակարգ դպրոցներում: Պատմություն առարկայի դասավանդման դրվածքի ստուգման հետ միաժամանակ մի շարք դպրոցներում /Դադիվանքի, Խնուշինակի, Քարինտակի, Նոր Վերինշենի, Սարուշենի, Հարգոմերի միջնակարգ, Ստեփանակերտի հ. 10, Արվականի հիմնական դպրոցներ/՝ որպես տեսչական հանձնախմբի ղեկավար՝ ստուգել եմ դպրոցավարության դասավանդման դրվածքը:

Տեսչավորված դպրոցներում գործավարության դրվածքն ընդհանուր առմամբ գնահատվել է բավարար: Իրականացված ստուգումների ընթացքում տրվել են համապատասխան մեթոդական ցուցումներ և ուղղություններ:

Ստուգվել է նաև պատմություն, հասարակագիտություն և ՀԵՊ առարկաների դասավանդման դրվածքը վերոնշյալ դպրոցներում: Ուսումնասիրությունից պարզվել է, որ դպրոցները հիմնականում ապահովված են ուսումնական ծրագրերով, ուսուցչի ձեռնարկներով, ուսուցիչները ծանոթ են առարկաների ծրագրային փոփոխություններին, ունեն հաստատված թեմատիկ պլաններ, որոնք համապատասխանում են առարկայական ծրագրերին և 2012թ. տեղեկագրերում առաջարկված փոփոխություններին, պահպանվել է հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների հոսքային ուսուցմանը համապատասխան բոլոր տեսակի գործնական և թեմատիկ աշխատանքների քանակը:

Ուսուցիչների մի մասը /չհաշված ավելի վաղ տարիներին անցած վերապատրաստումները/ վերջին երկու տարիների ընթացքում անցել է վերապատրաստման դասընթացներ, ստացել համապատասխան վկայագիր, իսկ 2011-2012 ուստարում վերապատրաստված ներքոբերյալ ուսուցիչները նաև ատեստավորվել են. Հակոբյան Անահիտ, Եղգիբարյան Սուսաննա /Ստեփանակերտի հ. 10 հ/դ/, Հայրապետյան Սուսաննա /Հադրութի միջնակարգ հոսքային դպրոց/, Շահրամանյան Օֆելյա /Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոց/, Հարությունյան Մասիս /Սզնեքի մ/դ/, Ջիվանշիրյան Աննա /Խաչմաչի մ/դ/, Մկրտչյան Սինարա /Առաջածորի մ/դ/, Սարգսյան Անահիտ /Գետավանի մ/դ/, Ավանեսյան Ստեփան /Մատաղիսի մ/դ/, Սայիյան Արմեն /Տումու մ/դ/, Ղուկասյան Արարատ /Մոխրենեսի մ/դ/: 2012-2013 ուսումնական տարում վերապատրաստված ուսուցիչները ստացել են վկայագրեր, բայց դեռ չեն ատեստավորվել. Փիրումյան Կարինե /Ստեփանակերտի հ. 10 հ/դ/, Մելքումյան Գոհար /Հադրութի միջնակարգ հոսքային դպրոց/, Գաբրիելյան Վեհանուշ /Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոց/, Ալավերդյան Գոհար /Առաջածորի մ/դ/, Հովհաննիսյան Արամայիս /Քարինտակի մ/դ/, Ավանեսյան Արթուր /Ակնաղբյուրի մ/դ/, Հայրապետյան Արմեն /Թալիշի մ/դ/, Հարությունյան Աշոտ /Կոլխոզաշենի մ/դ/, Պետրոսյան Արամ /Նոր Էրքեջի մ/դ/:

Տեսչավորված դպրոցներում, շենքային պայմաններից և հնարավորություններից ելնելով, ստեղծված են նաև պատմության կամ պատմության-աշխարհագրության համատեղ կաբինետներ, ընդ որում՝ կաբինետների ճնշող մեծամասնությունը կահավորված է ոչ միայն ԿԳ նախարարության կողմից տրված պաստառներով ու քարտեզներով, այլև ինքնաշեն պարագաներով, իսկ մի շարք դպրոցներում պահպանվել են դեռևս խորհրդային ժամանակներից մնացած քարտեզներ և պաստառներ: Չնայած վերոնշյալ դպրոցներում չի գործում կաբինետային համակարգ, բայց ուսուցիչները ձգտում են պատմության դասերն իրականացնել կաբինետում: Ստեղծված և կահավորված կաբինետներ կան Հադրութի միջնակարգ հոսքային, Առաջածորի, Թալիշի, Տումու, Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային, Ակնաղբյուրի, Խաչմաչի, Խնապատի միջնակարգ, Ստեփանակերտի հ.10, Ղուզե Ճարտարի հիմնական դպրոցներում: Ժամանակակից պայմաններին համապատասխան կահավորված կաբինետ է ստեղծված Ղուզե Ճարտարի հիմնական դպրոցում, որի ստեղծման գործում իր ներդրումն է ունեցել համագյուղացի բարերարը, ով նաև հովանավորել է դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադային վերոբերյալ դպրոցները տարբեր մասնակցություն են ունեցել: Դպրոցների հիմնական մասում աշակերտների մասնակցությունը կամ պասիվ է, կամ էլ սահմանափակվում է միայն շրջանային /քաղաքային/ փուլով /Կոլխոզաշենի, Խնապատի, Առաջածորի, Մատաղիսի, Տումու միջնակարգ դպրոցներ/: Սակայն կան դպրոցներ, որոնց աշակերտները մասնակցում են ոչ միայն հանրապետական, այլ նաև համահայկական փուլերին, և ոչ միայն մասնակցում են, այլև զբաղեցրել են մրցանակային տեղեր:

Այսպես, 2011-2012 ուսումնական տարում պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադայում Խաչմաչի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Էլլադա Հայրապետյանը գրավել է առաջին տեղը, մասնակցել ՀՀ-ում կազմակերպված եզրափակիչ փուլին և ստացել առաջին կարգի դիպլոմ, իսկ այս ուսումնականում պարգևատրվել է 3-րդ կարգի դիպլոմով /ուս.՝ Ա. Ջիվանշիրյան/: Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցից հանրապետական փուլին մասնակցել է երկու աշակերտ: Ժ. Հարությունյանը,գրավելով առաջին տեղը, մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված եզրափակիչ փուլին և զբաղեցրել երկրորդ հորիզոնականը: Այս ուսումնականում երեք աշակերտներ անցել են հանրապետական փուլ ու համապատասխանաբար զբաղեցրել՝ Ժենյա Հարությունյանը՝ առաջին տեղ, Ռուբեն Մարգարյանը՝ երրորդ տեղ, իսկ Գայանե Բաբաջանյանը պարգևատրվել է գովասանագրով /ուսուցիչ՝ Վ. Գաբրիելյան/: Ժ. Հարությունյանը մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված եզրափակիչ փուլին և ստացել առաջին կարգի դիպլոմ /ուսուցիչ՝ Լ. Սաֆարյան/: Այժմ նա պատրաստվում է մասնակցելու համահայկական փուլին: Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Էմմա Այդինյանը մասնակցել է բոլոր փուլերին, ստացել պատվոգրեր, իսկ ՀՀ-ում կազմակերպված եզրափակիչ փուլին ակտիվ մասնակցության համար պարգևատրվել է ՀՀ ԿԳ նախարարության գովասանագրով /ուսուցիչ՝ Ս. Թովմասյան/: Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին անցած ուստարում մասնակցել է մեկ հոգի՝ 10-րդ դասարանից, այս ուսումնականում՝ 3 հոգի, երկուսը՝ 11 հումանիտար, մեկը՝ 12 բնագիտական դասարաններից: Մ. Աբրահամյանը հանրապետական փուլին ակտիվ մասնակցության համար պարգևատրվել է պատվոգրով /ուսուցիչ՝ Ա. Գաբրիելյան/:

Թալիշի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Լիանա Իսախանյանը մասնակցել է 2011-2012 ուստարում պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադայի հանրապետական փուլին, իսկ այս ուսումնականում՝ միայն շրջանային փուլին: Ընդհանուր առմամբ, դպրոցի սաները նախորդ տարիներին հաջողություններ են ունեցել պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադաներում /ուս.՝ Տ. Մեժունց/:

Քարինտակ գյուղի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Գոռ Հովհաննիսյանը /ուսուցիչ՝ Ա. Հովհաննիսյան/ անցած և այս ուսումնական տարիներին մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին, սակայն նրան չի հաջողվել զբաղեցնել մրցանակային տեղ:

Հադրութի միջնակարգ հոսքային դպրոցից 2011-2012 ուստարում պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է մեկ աշակերտ /ուսուցիչ՝ Ս. Հայրապետյան/:

Ուսուցիչները դասերի ժամանակ օգտագործում են ձեռքի տակ ունեցած քարտեզներն ու թեմատիկ պաստառները: Քանի որ թեմատիկ քարտեզները քիչ են, ուսուցիչները հիմնականում օգտագործում են աշխարհի քաղաքական քարտեզ, ատլասներ, ինչպես նաև ինքնաստեղծ այլ դիտողական պարագաներ: Չնայած վերջին տարիներին ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից մի քանի անուն քարտեզներ ու պաստառներ են տրվել դպրոցներին, այնուամենայնիվ, դիտողական պարագաներով ապահովվածությունը դեռևս բավարար չէ: Բոլոր դպրոցներում էլ աշակերտները գրեթե ապահովված են դասագրքերով, պահում են պատմության տետրեր, որոշ դպրոցներում օգտագործում են նաև աշխատանքային տետրեր:

Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր դպրոցներն ապահովված են մասնագետ կամ էլ հեռակա բաժիններում սովորող ուսուցիչներով: Կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ հանրապետության մի շարք դպրոցներում կան փորձառու, իրենց գործին նվիրված և առարկային տիրապետող մասնագետներ. Հակոբյան Անահիտ, Եղգիբարյան Սուսաննա, Հակոբյան Մարինե, Գաբրիելյան Արշալույս, Հովհաննիսյան Արամայիս, Առստամյան Ռոմելա, Թովմասյան Սեդա, Ավանեսյան Արթուր, Ջիվանշիրյան Աննա, Գաբրիելյան Վեհանուշ, Սաֆարյան Լուսինե, Մեժունց Տանյա, Ավանեսյան Էրիկ, Գասպարյան Արսեն, Սարգսյան Անահիտ, որոնց կատարած աշխատանքը գնահատվել է լավ կամ թեքումով դեպի լավը:

Ըստ կատարված դասալսումների և համապատասխան վերլուծությունների, առկա դրական երևույթներով հանդերձ՝ ի հայտ են բերվել նաև որոշ բացթողումներ /դրանց վերացման ու շտկման ուղղությամբ տրվել են համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ/, որոնց մի մասն ունի օբյեկտիվ, մի մասն էլ՝ սուբյեկտիվ պատճառներ: Նախ նշենք, որ տեսչավորված դպրոցների հիմնական մասում աղքատ է նյութատեխնիկական բազան: Երկրորդ՝ մի քանի դպրոցներում պատմություն առարկան դասավանդող ուսուցիչների մի մասը ոչ մասնագետներ են. հավելենք նաև, որ դասերը չեն կազմակերպվում կաբինետային համակարգով:

Ընդհանուր առմամբ, առարկայի դասավանդման դրվածքը համակողմանի տեսչավորման ենթարկված դպրոցներում գնահատվել է բավարար:

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2012-2013 ուսումնական տարում կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում ստուգել ենք աշխարհագրություն առարկայի դասավանդման դրվածքը ԼՂՀ 41 դպրոցներում. Ստեփանակերտի հ.10, Ասկերանի շրջանի Մադաթաշենի, Մոշխմհատի, Ակնաղբյուրի, Խաչմաչի, Սզնեքի, Խնապատի, Բերքաձորի, Սարուշենի, Փառուխի, Արմենակավանի, Մարտունու շրջանի Խնուշինակի, Գիշու, Մաճկալաշենի, Հերհերի. Մարտունու հ.2, Ճարտարի հ.2, Սարգսաշենի, Կոլխոզաշենի, Մարտակերտի շրջանի Առաջածորի, Մարտակերտի հ.1, Հարգոմերի, Վերին Հոռաթաղի, Մատաղիսի, Թալիշի,Գետավանի, Հադրութի շրջանի Մոխրենեսի,Տումու, Հադրութի, Շուշիի շրջանի Հին Շենի, Մեծ Շենի, Քարինտակի, Քաշաթաղի շրջանի Քարեգահի, Հոչանցի, Մշենիի, Արվականի, Շահումյանի շրջանի Չարեքտարի. Դադիվանքի, Նոր Մանաշիդի, Նոր Վերինշենի, Նոր Էրքեջի: Նշյալ դպրոցների աշխարհագրության ուսուցիչներն առաջնորդվում են կազմված թեմատիկ պլաններով, գործող դասագրքերով և ուսումնաօժանդակ ձեռնարկներով,դասերին ներկայանում են օրվա դասի պլան-սեղմագրերով: Դպրոցական բաղադրիչ ժամաքանակից աշխարհագրությանը հատկացվել էր 13 դպրոցներում /Հադրութի, Մարտունու շրջանի Մաճկալաշենի, Հերհերի, Խնուշինակի, Մարտակերտի շրջանի Առաջածորի, Թալիշի, Ասկերանի շրջանի Խաչմաչի, Բերքաձորի, Սզնեքի, Շուշիի շրջանի Հին Շենի, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Նոր Վերինշենի, Քաշաթաղի շրջանի Հոչանցի/: Աշխարհագրության խմբակ գործում է 12 դպրոցներում /Հադրութի, Մարտունու շրջանի Հերհերի, Մաճկալաշենի, Մարտունու հ.2, Սարգսաշենի, Գիշու, Խնուշինակի, Ասկերանի շրջանի Խնապատի, Բերքաձորի, Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի, Առաջածորի, Քաշաթաղի շրջանի Նոր Վերինշենի/: Ստուգումները ցույց են տվել, որ 2012-2013թթ. ՀՀ ԿԱԻ Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից կազմակերպ-

ՏԵՍՉԱԿԱՆ

ված վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 13 ուսուցիչներ: Տեսչավորված 41 դպրոցների 49 աշխարհագրության ուսուցիչներից սկսնակ են /1-3 տարի/ 11-ը, 3-15 տարվա փորձ ունեն 16-ը, 15-ից ավելի՝ 22-ը: Կաբինետային համակարգ գործում է 4 դպրոցներում /Հադրութի, Ասկերանի շրջանի Խաչմաչի, Մարտունու շրջանի Գիշու, Շահումյանի շրջանի Նոր Վերինշենի/: Համեմատաբար լավ են կահավորված Հադրութի և Մարտունու շրջանի Գիշու դպրոցների կաբինետները:

Նշյալ 49 ուսուցիչներից 26-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, 20-ը՝ բարձրագույն ոչ մասնագիտական, 1-ը՝ թերի բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն /Աստղիկ Նազարյան, հեռակայում է Ստեփանակերտի ագրարային համալսարանի «Անասնաբուժություն և սանիտարական փորձաքննություն» բաժնի 4-րդ կուրսում, աշխատում է Քաշաթաղի շրջանի Արվականի դպրոցում /և 2-ը՝ միջին մասնագիտական կրթություն/ Ալեքսանդր Զալունց՝ Մարտակերտի շրջանի Թալիշի դպրոց և Սամվել Սաֆարյան՝ Ասկերանի շրջանի Մոշխմհատի դպրոց/:

Ոչ մասնագետներ են աշխատում Քաշաթաղի շրջանի Հոչանցի, Արվականի, Շահումյանի շրջանի Չարեքտարի, Նոր Մանաշիդի, Դադիվանքի, Նոր Էրքեջի, Ասկերանի շրջանի Խնապատի, Փառուխի, Արմենակավանի, Շուշիի շրջանի Մեծ Շենի, Հին Շենի, Քարինտակի, Մարտունու շրջանի Մարտունու հ 2, Մարտակերտի շրջանի Մատաղիսի, Հադրութի շրջանի Մոխրենեսի դպրոցներում:Կան ուսուցիչներ, որոնք ունենալով ոչ մասնագիտական կրթություն և երկար տարիներ դասավանդելով աշխարհագրություն առարկան, մշտապես զբաղվում են իրենց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությամբ և դասավանդման գործընթացում հասնում որոշակի հաջողությունների: Նրանց թվում են Ռամելա Առստամյանը /Շուշիի շրջանի Քարինտակի դպրոց/ և Հրանուշ Հարությունյանը /Ասկերանի շրջանի Խնապատի դպրոց/: Կատարված դասալսումներից պարզ դարձավ, որ աշխարհագրության մի շարք ուսուցիչներ տիրապետում են առարկային և նրա դասավանդման մեթոդներին, դասերին կիրառում են հարցման ու գնահատման տարբեր մեթոդներ, ապահովում միջառարկայական կապը, նոր դասը հաղորդում են պարզ, մատչելի, մեծ ուշադրություն են դարձնում քարտեզների օգտագործմանն ու յուրացմանը: Հետաքրքիր դասեր են անցկացնում հետևյալ մասնագետները. Արթուր Մինասյան, Մարինե Հովակիմյան, Հասմիկ Երվանդյան /Հադրութի դպրոց/, Նունե Գասյան /Մարտակերտի հ.1 դպրոց/, Արինա Պողոսյան /Ստեփանակերտի հ.10 դպրոց/, Լյուդմիլա Ղարիբյան /Մարտունու շրջանի Գիշու դպրոց/, Արմենուհի Գրիգորյան /Մարտունու շրջանի Հերհերի դպրոց/, Լենուշա Հովհաննիսյան /Մարտունու շրջանի Կոլխոզաշենի դպրոց/, Ալվինա Ավանեսյան /Մարտունու շրջանի Խնուշինակի դպրոց/, Նանե Գաբրիելյան /Մարտակերտի շրջանի Առաջածորի դպրոց/, Ալվինա Համբարձումյան /Ասկերանի շրջանի Խաչմաչի դպրոց/, Մարինե Պետոյան /Քաշաթաղի շրջանի Քարեգահի դպրոց/: Մասնավորապես արժե նշել Հադրութի և Մարտակերտի հ.1 դպրոցների աշխարհագրության դասավանդման դրվածքի մասին, որտեղ աշակերտները ցուցաբերեցին ծրագրային նյութի բավարար մակարդակ, ունեն քարտեզագրական գիտելիքներ /այդ դպրոցներում առարկայի դասավանդման դրվածքը գնահատվել է լավ/: Ուրախալի է այն փաստը, որ կան երիտասարդ մասնագետներ, որոնք չունեն դասավանդման անհրաժեշտ փորձ, բայց ունեն ձգտում և մշտապես կատարելագործվելով՝ կարող են դառնալ լավ մասնագետներ: Նրանց թվում են Մելանյա Ավանեսյանը /Ասկերանի շրջանի Մադաթաշենի դպրոց/, Նորա Ահարոնյանը /Ասկերանի շրջանի Սզնեքի դպրոց/:

Բոլոր դպրոցներում տեսչավորման ընթացքում ցույց է տրվել մեթոդական օգնություն, տրվել են ցուցումներ: Ելնելով ստուգման արդյունքներից՝ աշխարհագրության դասավանդման դրվածքը հանրապետությունում կարելի է համարել բավարար:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով 2012-2013 ուսումնական տարում կրթության պետական տեսչության՝ ԼՂՀ 29 հանրակրթական դպրոցներում երաժշտություն առարկայի դասավանդման դրվածքի ստուգման արդյունքները՝ կարելի է ասել, որ նախորդ տարիների համեմատությամբ արձանագրվել է դրական տեղաշարժ, սակայն առարկայի դրվածքը դեռևս հեռու է բավարար լինելուց:

Երաժշտություն առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է: Մեծ է նաև երաժշտության ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում: Երաժշտության դասն արվեստի դաս է: Այն կրում է համալիր բնույթ: Անհրաժեշտ է, որ աշակերտները մեկ ժամի ընթացքում ունկնդրեն, երգեն, կատարեն երաժշտառիթմիկ շարժումներ, նվագեն և այլն:

Հանրակրթական դպրոցներում երաժշտական դաստիարակության հիմնական նպատակն անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովումն է: Ուստի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն աշակերտների կողմից երաժշտական գիտելիքների յուրացմանը, այլև նրանց երաժշտական ունակությունների, կարողությունների, երևակայության զարգացմանը, անհատի ստեղծագործական շնորհների բացահայտմանը:

Տեսչավորման արդյունքները ցույց են տվել, որ այն դպրոցներում, որտեղ դասավանդում են մասնագետներ, կարելի է ասել, ակնհայտ են առարկայի դասավանդման բավարար դրվածքն ու արձանագրված արդյունքները:

Տեսչավորված դպրոցներում կան իրենց գործին տիրապետող ոչ մասնագետ ուսուցիչներ, ովքեր կարողանում են աշակերտներին հաղորդակից դարձնել ոչ միայն հայկական մշակույթին, բացատրել ժողովրդական երգերի գեղարվեստական արժեքներն ու հմայքը, այլև ծանոթացնել համաշխարհային երաժշտությանը, որն այսօրվա դպրոցի հիմնախնդիրներից է: Հարկ է առանձնացնել Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Էլմիրա Գասպարյանին, Գետավանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նագրաֆինա Ասրյանին, Ասկերանի շրջանի Խաչմաչի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Ալիետա Խաչատրյանի, Սարուշենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նարինե Աղաջանյանի անունները:

Ցավալի է, որ կան նաև ուսուցիչներ, որոնք առարկան դարձրել են հաստիք լրացնելու միջոց, անտեղյակ են առարկայի ծրագրից ու չափորոշչային պահանջներից, ավելին՝ տրված ցուցումներն էլ ի վիճակի չեն ընդունելու: Նշենք նաև նրանց անունները. Հադրութի շրջանի Տումու միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լյուդմիլա Աբրահամյան, Մարտակերտի շրջանի Մատաղիսի միջնակարգ դպրոցի ուսուցրուհի Կարինե Գևորգյան, Շահումյանի շրջանի Դադիվանքի և Չարեքտարի միջնակարգ դպրոցներում դասավանդող ուսուցիչները:

Տնօրենները ժամերը հատկացնելիս պետք է ստուգեն ուսուցիչների՝ առարկան դասավանդելու կարողությունները և հետևեն դասավանդման ընթացքին:

Այն տեսչավորված դպրոցներում, որտեղ երաժշտության դասավանդման դրվածքը գնահատվել է բավարար, նպատակահարմար ենք գտնում առարկայի դասավանդումը տրամադրել նույն ուսուցիչներին:

Առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով մեր կողմից ցուցաբերվել է համապատասխան մեթոդական ու գործնական օգնություն և տրվել ցուցադրական դասեր:

Ռ. ՎԵՐԴՅԱՆ
ԿՊՏ փեսուչ

Շնորհավորանք

ԱՆԽՈՆՋ ԱՐՑԱԽՑԻՆ

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Նելլի Կասպարովան Արցախ աշխարհում բարի համբավ ձեռք բերած մանկավարժներից է: Մարդ, որի անունը քաջածանոթ է արցախցիներին: Մարդ, որը թրծվել է Արցախյան գոյապայքարում, որն Արցախյան շարժման ակտիվիստներից է:

Մարդկային բարձր հատկանիշներով օժտված, դժվարություններից չընկրկող այդ կինը Գոյապայքարի օրերին արցախցիների հույսն ու հավատն էր: Քուն ու դադար մոռացած՝ նա նույնպես Շարժման կազմակերպիչների հետ մտահոգված էր Արցախի ճակատագրով: Արդարադատ, անաչառ, Արցախ աշխարհի իսկական զավակ:

Բնավորությամբ անհանգիստ, բայց հոգով պարզ ու շիտակ այդ անձնավորությունը անխոնջ սերմնացանի նման հոգու շռայլ լույսն ու կրակը, հարուստ գիտելիքները մեծագույն սիրով ու վարպետությամբ հաղորդում է իր սաներին՝ ռուս գրականության նկատմամբ պայծառ սեր ու հետաքրքրություն սերմանելով նրանց ուսումնատենչ հոգիներում:

Իր մասնագիտությանն անսահման նվիրված այս ուսուցչուհին ունի հարուստ մանկավարժական փորձ, նրա վարած յուրաքանչյուր դաս ինքնամոռաց նվիրում է: Դասերին նա հաճախ է գնում չտրորված ճանապարհներով ու հանձնարարում այնպիսի աշխատանքներ, որոնք նպաստում են աշակերտների ինքնուրույն մտածողության և գեղագիտական հայացքների ձևավորմանը, աշխարհայացքի ընդլայնմանը:

Ամեն անգամ դասը վարել խանդավառված՝ խանդավառելով նաև աշակերտներին, նրանց առջև բացել ռուս գրականության անբավ հարստությունները, սաներին կրթել, դաստիարակել՝ միշտ լինել ազնիվ, շիտակ, արդարադատ ու հայրենասեր, լինել իսկական արցախցներ՛: Ահա նրա հավատամքը:

Նելլի Աշոտովնան հետաքրքիր ու անկրկնելի միջոցառումների կազմակերպիչ է: Նրա կազմակերպած ու վարած յուրաքանչյուր ցերեկույթ, հանդիպում լի է անակնկալներով: Նա միշտ առաջին գծում է: Նրա համար երկրորդական աշխատանք չկա: Գործունյա է ու ձեռներեց: Նրան ընդօրինակում են, նրանից սովորում բոլորը՝ և՛ աճող սերունդը, և՛ երիտասարդները, և՛ աշխատանքի ու կյանքի բավականին փորձ ունեցողները:

Նվիրումով աշխատելը Նելլի Աշոտովնայի էությունն է, հաջողության գրավականը: Նա հանձնարարված գործի նկատմամբ ցուցաբերած պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումի, մարդկային շիտակ նկարագրի շնորհիվ նա արժանացել է բոլորի հարգանքին ու համակրանքին:

Նելլի Աշոտովնան բոլորել է իր իմաստալից կյանքի 6-րդ տասնամյակը: Պատեհ առիթով Հադրութի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվը շնորհավորում է Ձեզ, սիրելի Նելլի Աշոտովնա, ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ ցանկանալով աստղաբույլ երջանկություն, նորանոր հաջողություններ Ձեր սուրբ ու նվիրական աշխատանքում:

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ՄԵՐ ՌՈԶԱՆ

Պատմաբանի համար 50 թիվը մի ակնթարթ է տարիների գնացքի սահուն ընթացքի մեջ: Կենսաբանի համար այն 25-ամյակների գարունքներ են:

Սիրելի գործընկեր, լրանում է քո ծաղկունքի 50-րդ տարեդարձը: Թող այն լինի նոր ծաղկունքի առաջին ծաղիկը, որը նոր տասնամյակների ամենահաջող անկյունաքարերից մեկն է լինելու:

1963 թվական, հուլիսի 12: Սարդարաշենցի Նիկոլայի և Սեդայի ընտանիքում ծնվեց Ռոզան, մեր Ռոզան, եղբայրների հպարտությունն ու միակ քույրը: Մանկությունն անցավ հարազատ գյուղում, ուսումը շարունակեց Նորագյուղի միջնակարգ դպրոցում: Ավարտեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Խանաբադցի Հայրոյի հետ երջանիկ և կայուն ընտանիք կազմեց և ունեցավ երեք խելոք բալիկներ: Անցավ Արցախյան գոյամարտի բովով, քանզի ամուսինը և երեք եղբայրներն այդ պատերազմի առաջամարտիկներից էին: Բոլորիս հետ միասին զգաց հաղթանակի քաղցրությունը և անցավ խաղաղ կյանքի: Չնայած ասել «խաղաղ»՝ փոքր-ինչ ճիշտ չէ, քանզի ամուսինը՝ Հայրոն, դեռ ծառայում էր Արցախյան բանակի շարքերում: Ահա այդ օրերին էր, որ Ռոզան ընտանիքով տեղափոխվեց Իվանյան գյուղ և աշխատանքի անցավ մեր դպրոցում, մերվեց մեր կոլեկտիվի հետ՝ դառնալով նրա առաջատար մասնագետներից մեկը:

Երբեմն միայն մի հայացք կամ խոսք բավական է՝ կարծիք կազմելու տվյալ մարդու մասին: Առաջին իսկ հանդիպումից զգացինք, որ գործ ունենք բանիմաց, համեստ և շատ բարի անձնավորության հետ:

Սիրելի գործընկեր, շնորհավորում ենք քո ծննդյան 50-ամյակը: Լինես առողջ, երջանիկ և հաջողակ՝ ամեն ինչում: Այն սերն ու հարգանքը, որ վայելում ես թե՛ դպրոցում և թե՛ շրջանում, թող լինի մշտական: Դու դրան արժանի ես և այն ձեռք ես բերել քո քրտնաջան, բարեխիղճ աշխատանքով: Դու օրինակ ես քո գործընկերների համար քո զսպվածությամբ, մեծահոգությամբ և ներողամտությամբ: Լինելով դպրոցի փոխտնօրենը՝ դու օգնության ես հասնում սկսնակ ուսուցիչներին՝ նրանց ծանոթացնելով դպրոցի և դասավանդման դժվարին ուղուն: Չես անտեսում ոչ ոքի: Քո կողքին մեզ հանգիստ ենք զգում, քո հանդարտությունը, հանգիստ պահվածքը կաթիլ առ կաթիլ փոխանցվում է մեզ: Այն նաև զգաստացնում է մեզ:

Մարդ երջանիկ է իր աշխատանքով, իր ընտանիքով և իր նկատմամբ շրջապատի վերաբերմունքով: Այս երեք գործոնները քո կյանքում կան:

Ընտանիքդ օրինակ է շատ-շատերի համար: Հասմիկը կողք կողքի աշխատում է քեզ հետ: Հայկը գյուղատնեսության բնագավառում լավ մասնագետի համբավ ունի, իսկ Սրբուհին այս տարի գերազանց գնահատականներով ավարտեց մայր բուհի անգլո-ֆրանսերենի բաժինը և կշարունակի ուսումը մագիստրատուրայում:

Միշտ լինես այնպիսին, ինչպիսին հիմա կաս: Վերստին երջանկություն և առողջություն քեզ:

Իվանյանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2013 թվականի հուլիսի 19-ի N 167-Ն
հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական պետական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) ուսուցչի, դաստիարակի թափուր տեղը (այսուհետ՝ Թափուր տեղ) համալրելու մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթին մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ՝ Մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված՝ ուսուցչի (դաստիարակի) չզբաղեցրած պաշտոնը:

3. Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է նույն Հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող ուսուցչին, կարող է տրամադրել նաև համատեղությամբ աշխատող, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին:

4. Հաստատությունում մրցույթ հայտարարվում է, եթե տվյալ առարկան դասավանդող ուսուցիչն ունի մեկ դրույք ծանրաբեռնվածություն:

5. Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից, մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը՝ պահպանելով սույն կարգի պահանջները:

6. Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթի կայանալը, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի Հաստատություններում՝ նաև ուսուցչի որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները:

7. Թափուր տեղ առաջանալու մասին տնօրենը տեղեկացնում է լիազոր պետական մարմնին:

8. Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, սակայն տվյալ առարկան չդասավանդած կամ չդասավանդող մասնագետը Թափուր տեղը կարող է զբաղեցնել մրցութային կարգով:

9. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում),

2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 3-րդ կետի համաձայն.

3) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում.

4) առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու:

10.Սույն կարգի 9-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերով սահմանված դեպքերում աշխատողի հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

11. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար Նախարարության կողմից մշակվում է հարցաշար՝ կազմված 100 հարցից: Հարցաշարերը հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով և հրապարակվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am պաշտոնական կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Հաստատության տնօրենի ներկայացմամբ լիազոր մարմինը հրապարակում է «Լուսարար» պաշտոնաթերթում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կայքէջում (edu.nkr.am) և Արցախի հանրային հեռուստատեսությամբ, մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:

13. Հայտարարության տեքստում նշվում է.

1) Հաստատության անվանումը.

2) Թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,

3) սույն կարգի 11-րդ կետով սահմանված մրցույթի անցկացման ձևերը և բովանդակությանը վերաբերող դրույթները, պայմանագրի տեսակը,

4) սույն կարգի 17-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը՝ բնօրինակները և պատճենները,

5) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:

14. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Մրցույթի անցկացման օրը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

III. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

17. Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենին (այսուհետ՝ Տնօրեն) է ներկայացնում

1) դիմում (Ձև 1)

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

3) անձնագիր

4) աշխատանքային գրքույկ

5) ինքնակենսագրություն (Ձև 4)

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

7) այլ պետությունների քաղաքացիների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում)

18. Տնօրենը կամ նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

19. Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

20. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.

3) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.

4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն՝ արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

21. Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

22. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝

1) Տնօրեն (Տնօրենի պաշտոնակատար), Տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն 5 տարվա փորձ ունեցող).

2) եթե հաստատությունը չունի մասնագետ ուսուցիչ, այլ հաստատություն(ներ)ից ընդգրկվում են երկու ներկայացուցիչներ՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն 5 տարվա փորձ ունեցող):

23. Հանձնաժողովի նախագահը հաստատության տնօրենն է (տնօրենի պաշտոնակատարը):

24. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել 2 անգամ՝ մինչև 3 աշխատանքային օրով:

25. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են առնվազն 3 կողմ ձայնով:

26. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից (որը Հանձնաժողովի անդամներից մեկն է)՝ առանձին մատյանում և պահպանվում են դպրոցում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

27. Մրցույթին դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել, ըստ ենթակայության, լիազոր մարմնի ներկայացուցիչը:

28. Սույն Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում Հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (օրենսդրական կամ գերատեսչական ակտի անվանումը, դրույթը):

29. Եթե Հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա Հանձնաժողովի կողմից ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում և սույն կարգին համապատասխան 5-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է նոր Մրցույթ:

V. ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՓՈՒԼ

30. Մրցույթն անցկացվում է բացառապես Նախարարի հաստատած հարցաշարի (այսուհետ՝ Հարցաշար) հիման վրա:

31. Գրավոր փուլի համար յուրաքանչյուր դպրոց կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած Հարցաշարի 100 հարցից և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, որը նշված է Հարցաշարում:

32. Գրավոր փուլն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում:

33. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է Մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ: Մասնակիցների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց 10 րոպե առաջ:

34. Մասնակիցներին արգելվում է իրենց հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

35.Հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է մասնակիցների հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է բանավոր փուլի անցկացման ժամի մասին:

36.Հանձնաժողովի քարտուղարը Մասնակիցներին տալիս է թեստային առաջադրանքը (ոչ մի դեպքում մեկ այլ թեստային առաջադրանք չի տրվում), Մասնակիցը թեստային առաջադրանքի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և ստորագրում:

37. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո Մասնակիցը ծանոթանում է առաջադրանքին, յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրում է մեկ պատասխան և դրա դիմաց կատարում է համապատասխան նշում: Աշխատանքն ավարտելուց հետո առաջադրանքը հանձնում է հանձնաժողովի քարտուղարին:

38. Թեստավորման ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև դուրս գալ սենյակից: Եթե Մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

39. Մասնակիցը թեստավորման առաջադրանքների թերթիկում կարող է կատարել ցանկացած նշում:

Գրավոր փուլի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցներին նախազգուշացվում է:

40. Առաջադրանքի համար տրվում է 120 րոպե, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

41. Գրավոր փուլի անցումային շեմը համարվում է առաջադրանքի առնվազն 90 % ճիշտ պատասխանը:

42. Սխալ պատասխաններ են համարվում՝

1) ոչ ճիշտ պատասխան նշելը

2) մեկից ավելի պատասխաններ նշելը

3) ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը:

Արգելվում է որևէ հարցի ենթադրյալ պատասխաններից մեկի դիմաց առանց նշումների թեստը հանձնել:

43. Գրավոր փուլն ավարտելուց հետո թեստային առաջադրանքների ստուգման համար տրվում է 1 ժամ:

44. Ստուգված առաջադրանքի միավորի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, անհամաձայնության

ԿԱՐԳ

դեպքում կցվում է Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը:

45. Հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ՝ գրավոր փուլի արդյունքները և մրցույթի բանավոր փուլ անցած Մասնակից(ների) անունները հրապարակելու համար:

46. Գրավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, դրանք կարող են բողոքարկվել Հանձնաժողովին՝ ժամվա ընթացքում:

47. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

48. Առաջադրանքների պատճենները, ցանկության դեպքում, կարող են տրամադրվել Մասնակիցներին:

VI. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

49. Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ բանավոր առաջադրանքների հարցաշարից ընտրում է 5 հարց:

50. Յուրաքանչյուր Մասնակցի տրվում է մինչև 15 րոպե՝ բանավոր փուլին պատրաստվելու համար:

51. Մասնակցի կողմից հարցազրույցի հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ կամ սխալ՝ Հանձնաժողովի մասնագետ անդամի կողմից:

52. Եթե Մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ, ապա Հանձնաժողովի՝ գնահատականը տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ պատասխանը:

53. Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ է պատասխանել հարցազրույցի հարցատոմսի 5 հարցերից առնվազն երեքին և հարակից հարցերի (այդպիսիք լինելու դեպքում) գերակշիռ մասին:

54. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն արձանագրվում է Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

55. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ Մասնակցի տված պատասխանը, Հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ կամ սխալ), իսկ սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցրած ճիշտ պատասխանը:

56. Արձանագրությունն ստորագրվում է Հանձնաժողովի քարտուղարի, Մասնակցի և Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

57. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է փակ քվեարկություն՝ Հանձնաժողովի նախագահի կողմից կնքված և ստորագրված քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի վրա նշվում է Մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը (Չև 3):

58. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

59. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույց անցկացնելուց հետո Հանձնաժողովի նախագահը բացում է քվեաթերթիկները և բարձրաձայն հայտարարում Մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը և տրված ձայների «կողմ» կամ «դեմ» լինելը: Մեկից ավելի նշում պարունակող կամ ոչ մի նշում չպարունակող քվեաթերթիկը համարվում է անվավեր:

60. Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

61. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն Մասնակիցը, ով քվեարկության արդյունքում հավաքել է Հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Ձայների հավասարության դեպքում Մրցույթի տվյալ Մասնակիցը հաղթող չի ճանաչվում:

62. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, այն կարող է բողոքարկվել Հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

63. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

VII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

64. Մրցույթի արդյունքները հրապարակվում են Մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում է (Չև 2).

1) Մրցույթի անցկացման վայրը
2) Հաստատության լրիվ անվանումը
3) Թափուր տեղի անվանումը
4) Թափուր տեղերի քանակը
5) Մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը
6) Մրցույթին թույլատրված Մասնակիցների թիվը
7) գրավորի արդյունքը՝ Մասնակիցների հավաքած միավորների կամ բալերի նշումով
8) հաղթող ճանաչվածների անվանացանկը, հավաքած «կողմ» ձայների քանակը
9) Հանձնաժողովի անդամների ստորագրությունները
10) Մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

65. Ամփոփիչ արձանագրությանը կից տրվում են.

1) անհատական քվեաթերթերը՝ (քվեարկված և չմարված (առկայության դեպքում)
2) քվեաթերթերի խոտանման արձանագրությունը (առկայության դեպքում)
3) Հանձնաժողովի անդամների հատուկ կարծիք(ներ)ը (առկայության դեպքում):

VIII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

66. Մրցույթում հաղթող ճանաչված Մասնակից(ներ)ը Տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է (են) դիմում՝ աշխատանքի ընդունվելու համար: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է դիմումը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

67. Եթե Մրցույթում հաղթող են ճանաչվել մեկից ավելի Մասնակիցներ, իսկ ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան Թափուր տեղը, Մասնակցի ընտրությունը կատարում է Տնօրենը:

Չև 1
Դիմումի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ուսումնական հաստատության
(նշվում է հաստատության լրիվ անվանումը)

(նշվում է առարկայի անվանումը) ----------
ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթին
մասնակցելու նպատակով հաստատության տնօրեն
պարոն/տիկին _____ -ին
_____ -ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը
_____
(դիմողի բնակության վայրը)
_____
(դիմողի հեռ. աշխատանքային, բնակ., բջջ.)
_____
անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծնված՝ _____
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ

գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 15-ի N 301-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ
տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) _____
Համակարգչային գրագիտությունը _____
_____
(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ .....
«.....»..... 20..... թ.

Չև 2

Ամփոփիչ արձանագրություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի (Ստեփանակերտ քաղաքի) _____
_____
(ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի) ուսուցչի թափուր աշխատատեղի (լրացվում է մասնագիտության անվանումը) _____ համար հայտարարված մրցույթի.

1. թափուր աշխատատեղի քանակը _____
2. մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը _____
3. մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը _____
4.գրավոր փուլի ձևը _____.
5. գրավորի արդյունքը (մասնակիցների անուն-ազգանունները, հավաքած միավորները կամ բալերը)՝
1)
2)
3)

6. փակ քվեարկության արդյունքը (լրացվում են բոլոր մասնակիցների հավաքած ձայները)՝
1)
2)
3)

7. հաղթող ճանաչված մասնակիցների անվանացանկը, հավաքած ձայների քանակը՝
1)
2)
3)

8. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը՝
1) Հանձնաժողովի նախագահ՝_____ /_____/
2) Հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/
3) Հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/
4) Հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ /_____/

Չև 3

Անհատական քվեաթերթիկ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը _____
2. Առարկան _____
3.Հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը _____
4.Մասնակցի անուն-ազգանունը_____
5. Տոմսի համարը_____
6. Հարցերի գնահատականները (0-ից մինչև 10 բալ)
1) _____
2) _____
3) _____
4) _____
5) _____
7. Հարակից հարցերի գնահատականները՝
1) _____
2) _____
3) _____
4) _____
5) _____
8. Միջին գնահատականը _____

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԼՐԱՑՎՈՒՄ Է ՍԵՎ ԳՈՒՅՆԻ ԳՐԻՉՈՎ, ԱԶԱՏ ՎԱՆԴԱԿՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՇՈՒՄԸ՝ «V»)՝

ԿՈՂՄ
ԴԵՄ

Հանձնաժողովի նախագահ՝_____

Կ.Տ.

Չև 4

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեությունը (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)

2. կրթությունը, մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը (դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ)

3. կոչումները
4. որակավորման տարակարգը
5. հրատարակած հոդվածները
6. լեզուների իմացությունը
7. համակարգչային իմացությունը
8. այլ տվյալներ

ԻՄ ՓՈՐՁԻՑ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

Գերիշխող առարկա՝ Մայրենի
Ինտեգրված առարկաներ՝ Ես և շրջակա աշխարհը
Կերպարվեստ
Երաժշտություն
Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման դաս
Դասի պլանը
Թեման՝ Հրաչյա Մաթևոսյան «Այ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հայ-րե-նիք է»
ա) ***Ուսուցանող՝*** 1. Ճիշտ, սահուն, արտահայտիչ, հասկանալով և արագ ընթերցանության կարողության կատարելագործում
2.Նոր բառերի ու բառակապակցությունների գործածության ամրակայում, բառապաշարի հարստացում դարձվածքներով
3. սեփական կարծիքների և մտքերի արտահայտման հնարավորության ապահովում:
Բ) ***Դաստիարակչական և զարգացնող՝*** 1. Հայրենի երկրի պատմության, ազգային նկարագրի վերաբերյալ գիտելիքների հաղորդում,
2. հայրենիքի նկատմամբ սիրո զգացմունքի դաստիարակում
3.բարոյական արժեքների վերաբերյալ ճիշտ պատկերացման կազմում:
Խնդիրները 1.Զարգացնել խոսքը նոր բառերով, դարձվածքներով:
2. Խոսքն օգտագործել իբրև մտածողությունն ակտիվացնող միջոց՝ հայրենիքի, նրա բնության նկատմամբ հոգատարության դաստիարակման և բարի, քնքուշ վարվելակերպի ձևավորման համար:

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ

Ընթերցանության տեքստը (դասագրքում)

Լր. ընթ. համար Գ.Գաբրիելյան «Էս հինչ զարմանք յերկիր վըղըս» բանաստեղծությունը

Հայաստանի Հանրապետության և Արցախյան բնանկարներ, եկեղեցիների, խաչքարերի նկարներ

Զոհված հերոսների պաստառներով նկարներ

Հայնասկավառակներ՝ Գ. Գաբրիելյան «Հորովել»

ՀՀ և ԼՂՀ օրհներգերը

Ա.Գրիգորյան «10 միլիոն հայ ենք»

Մաքուր թերթիկներ աշակերտների քանակով (31)

Դասի ընթացքը

Ի փուլ

Խթանում

Ի քայլ

Աշակերտներին առաջարկում եմ թվարկել այն բառերը, որոնք հիշում են հայրենիք ասելիս: Գրատախտակի կենտրոնում շրջանակ է ճառագայթներով և մտագրոհի միջոցով յուրաքանչյուր ճառագայթի վրա հայրենիքը բնութագրող գոյական կամ հատկանիշ ենք գրում:



II քայլ

ԳՈՒՍ աղյուսակի Ի և II սյուներում աշակերտները գրում են այն, ինչ գիտեն նյութի մասին:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
Իմ հայրենիքը Արցախն ու Հայաստանն է: Տարածքը փոքր է, լեռներով հարուստ: (Այստեղ գրում են բոլոր այն տեղեկությունները, որ ստացել են, գիտեն <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի <<Հայաստանն իմ հայրենիքն է>> թեմայից:)	Իմ հայրենիքի անցյալի, նրա անվանի մարդկանց, հերոսների մասին: Ինչու է թշնամին ուզում գավթել մեր հողերը, տիրանալ մեր հայրենիքին:	Այս սյունակը լրացնում ենք դասի ամփոփման փուլում:

Արտասանում եմ նախ Սուրեն Մուրադյանի հայտնի տողերը. («Ես և շրջակա աշխարհը»)

Հայը դարերով սիրով է պահել
Յոթ թանկ սրբություն՝
Գիրքը, Մասիսը, շինարար ոգին,
Հավատը, լեզուն.
Սուրբ անուններ են եղել դարերով
Հայ ընտանիքը,
Եվ ամենից վեր, ամենից լուսե՝ մայր հայրենիքը:

Մուտքի դռնակի քառատողը կարդում է աշակերտներից մեկը

Աջ եմ նայում՝ հայրենիք է,
Ձախ եմ նայում՝ հայրենիք է,
Մոտ եմ նայում՝ հայրենիք է,
Հեռուներում հայրենիք է:

Աշակերտներին հանձնարարում եմ կատարել կանխագուշակություն (ըստ բանաստեղծությունների, վերնագրի և նկարի) թեմայի վերաբերյալ:

Գրատախտակին փակցնում եմ գրքում զետեղված նկարը և նախօրոք տպագիր գրված հենակետային բառերը, բառակապակցություններ, դարձվածքներ: Իսկ աշակերտներին նույն բառերը տալիս եմ՝ զույգերով ծանոթանալու և աշխատելու համար.

Քառատողեր,
Քարաթմբեր,
Մանուշակներ,
Երկինքների կապույտներ,
Արցունքի կաթիլներ,
Մեր ծմակի երկինքը,
Մանուշակներ,
Հոր քթից է ընկել,
Աչքերս չռված են, լեզուս թառ եմ տվել,
Զոհվում են հանուն հայրենիքի,
Ամեն ինչի դասատու,
Կռիվն ահավոր բան է,
Ամեն ինչը՝ հայրս էլ հետը, հայրենիք է:

Աշակերտները դրանք ընթերցում են սկզբում լուռ, իսկ հետո՝ բարձրաձայն: Ապա զույգերով փոքրիկ տեքստ են կազմում (տրված թեմայով):

Ահա հաջողվածներից մեկը.

«Արան սիրում էր խաղալ մանուշակներով առատ քարաթմբերի մոտ: Բոլորն ասում էին, որ նա հորը շատ նման է՝ հոր քթից է ընկել: Նա շատ ուրախ էր դրա համար և անհամբեր սպասում էր հոր վերադարձին:

Եվ մի պայծառ օր հայրը կռվից տուն է վերադառնում ու հանդիպում տղային: Փոքրիկն ուրախությունից լեզուն թառ էր տվել: Հոր աչքերից արցունքի կաթիլներ էին գլորվում, երբ պատմում էր հանուն հայրենիքի զոհված ընկերների մասին:

Կռիվն ահավոր բան է, բայց վտանգի պահին պետք է պաշտպանել հայրենիքը»:

II փուլ

Իմաստի ընկալում

Ի քայլ

«Ուղղորդված ընթերցանություն» մեթոդի կիրառություն:

Բնագիրը բաժանում եմ 3 հատվածի: Ի հատվածն ընթերցելուց հետո ուղղում եմ հետևյալ հարցերը.

1.Ե՞րբ և ինչո՞ւ էր տղան նայում հորը:

2.Բացատրեք դարձվածքի իմաստը՝ հոր քթից է ընկել:

3.Ասացեք մեկ բառով:

4.Դրեք նոր վերնագիր հատվածին: (Հատվածի վերնագիրը որպես բնագրի պլանի առաջին կետ գրում եմ գրատախտակին):

II հատվածը կարդալուց հետո պատասխանում են հարցերին.

1.Որտեղի՞ց էր վերադարձել տղայի հայրը, ինչո՞ւ էր ուշացել:

2.Ինչի՞ մասին է զրույցը շարունակվելու:

3.Ինչպե՞ս էին բացատրում «Հանուն հայրենիքի» արտահայտությունը:

4.Ամեն ինչի դասատուն:

5.Հայրիկը:

6.Ինչո՞ւ էր «բանակ գնացածը, կռվածը, բարով-խերով եկածը» լացում:

Վերնագրում ենք, որը կլինի պլանի 2-րդ կետը:

III հատված

Մինչ ընթերցանությունը առաջարկում եմ.

Մտքում պատկերացրեք հոր ձեռքը բռնած տղային և կարդալիս մատիտով նշեք այն մասը, երբ կզգաք, որ ինչ-որ բան է փոխվել:

Համեմատեք տղայի հորը ձեր հայրիկների հետ: Նշեք նմանություն-ներն ու տարբերությունները: Ինչո՞ւ եք այդպես կարծում:

Վերհիշեք, թե երբ են ձեր ծնողները անկեղծ զրույց ունեցել ձեզ հետ, ինչի մասին:

Ընթերցանություն: Վերնագիր. պլանի 3-րդ կետը:

Հանձնարարում եմ աշակերտներին գրատախտակին գրված պլանի կետերով բնագրի բովանդակությանը հոգեհարազար կազմել նախադասություններ, և դա կլինի բնագրի համառոտ վերարտադրումը:

Այնուհետև հարցերով վեր եմ հանում պատմվածքի հիմնական միտքը.

Հայրենիքն անփոխարինելի է և անհրաժեշտության դեպքում պետք է այն պաշտպանել: Այսօր էլ մենք շրջապատված ենք թշնամիներով, բայց ունենք ուժեղ բանակ և թույլ չենք տա, որ գրավեն մեր հողերը:

Վերլուծում ենք *տուն-հայրենի տուն* բառ-բառակապակցությունը, և ես ուղղում եմ աշակերտներին ընդհանուր հարցեր.

1.Ի՞նչ էիք մտածում, երբ կարդում էիք:

2.Ի՞նչ էիք զգում:

3.Ինչպե՞ս կշարունակեիք պատմվածքը, եթե դուք լինեիք հեղինակը:

4.Ինչպիսի՞ բառերով կբնութագրեք պատմվածքը և հեղինակին:

Կարդում ենք գրատախտակին փակցված Հր. Մաթևոսյանի հետևյալ տողերը.

Դու քո երկրին սրտից նայիր,
Սիրո ծոցից, ձորից նայիր,
Արագածի լույս գագաթից,
Սրտիդ միջից նորից նայիր:
Եվ դու կզգաս, ով էլ լինես,
Որ մեծ է մեր Հայաստանը,
Ուր էլ լինես՝ քո սրտի մեջ
Քեզ հետ է միշտ Հայաստանը:

III փուլ

Կշռադատում

«3 բանալի և 1 կողպեք» մեթոդով ամրապնդում եմ բնագրի հիմնական միտքը

1.- Ես եկել եմ, տղաս, չեմ ուշացել: Ուշացել են նրանք, ովքեր զոհվեցին…

2. Մեր ամեն ինչի դասատուն ասում է՝ կռվում են հանուն հայրենիքի, զոհվում են հանուն հայրենիքի, զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար:

3. Ամեն, ամեն ինչ, ինչ տեսնում ու չես տեսնում, հայրենիք է, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հայ-րե-նիք է:

Կողպեքը

Մենք պետք է ճանաչենք, սիրենք մեր մայր հողը, հայրենիքը և անհրաժեշտության դեպքում պաշտպանենք այն բոլոր տեսակի թշնամիներից:

Այնուհետև Գ.Գաբրիելյանի «Հորովել» երգի հնչյունների ներքո դասարանը բաժանում եմ խմբերի (5 խումբ):

Ի խումբը ընտրում է տեքստի դարձվածքները և բացատրում:

II խումբը պատրաստվում է բեմականացնելու պատմվածքը:

III խումբը ընտրում է նորածանոթ բառերն ու գրում հոմանիշները:

IV խումբը գրում է աքրոստիկոս-շարադրություն «Հայրենիք» բառով:

V խումբը նկարում է պատմվածքի դուր եկած հատվածը:

IV խմբի աշխատանքը ներկայացնում եմ ստորև.

Հ- Հայաստանն է քո անունը,
Ա- Ազատասեր իմ երկիր,
Յ- Յուրաքանչյուր քո լուռ քարը,
Ր- Ռաֆֆին լավ է ճանաչում,
Ե- Եթե հանկարծ չար թշնամին,
Ն- Նորից փորձի հարձակվել,
Ի- Ինձ ոչինչ, ոչինչ չի մնա,
Ք- Քան սրտանց քեզ պաշտպանել:

V խումբը նկարը փակցնում է գրատախտակին և ներկայացնում բոլորին:

Որպես լրացուցիչ նյութ ընթերցում կամ արտասանում եմ Գ.Գաբրիելյանի «Էս հինչ զարմանք յերգիր վըղըս...» բանաստեղծությունը երաժշտության ներքո:

Ի, III և IV խմբերի աշխատանքները քննարկելուց հետո դիտում ենք բեմականացում՝

Հանձնարարում եմ տնային աշխատանքը՝ արտահայտիչ, սահուն ընթերցել նյութը, խորհել գաղափարի շուրջ: Կապել այսօրվա մեր կյանքին: Հրաշք-տետրերում նկարել բնագրից որևէ հատված, վերնագրել:

Դասն ավարտում ենք ՀՀ պետական օրհներգով:

Մայիլա ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Ստեփ. Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմն. դպրոցի 4-րդ «ա» դասարանի դասվար

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աշխարհագրության դասերն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է տիրապետել այնպիսի մեթոդիկայի, որի կիրառմամբ հնարավոր է արթնացնել երեխայի հետաքրքրասիրությունը աշխարհագրության հանդեպ: Այս հարցի առաջ են կանգնած հատկապես սկսնակ աշխարհագետ մանկավարժները: Այսօր դպրոցում նրանք հետամուտ են հետևյալ հարցի լուծմանը. «Ինչ և ինչպես սովորեցնել» աշակերտներին: Սակայն ավելի արդյունավետ կլինի բարձրացնել «Ինչով և ինչպես հրապուրել սովորողին» հարցը, ինչը շատ հաճախ անտեսվում է:

Բնագիտական առարկաներից աշխարհագրությունը թերևս ամենադինամիկն է և արագ փոփոխվողը, ինչը պայմանավորված է մի կողմից բնական երևույթների ու պրոցեսների արագ փոփոխմամբ, մյուս կողմից՝ հասարակական աշխարհագրության գլոբալ փոփոխություններով և տարբեր ճյուղերի արագ զարգացմամբ: Բնական էկոհամակարգերի հավասարակշռության խախտումները, փոթորիկները, անտառածածկ տարածքների կրճատումը, անապատացումը, կլիմայի գլոբալ տաքացումը, նոր համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը, տնտեսական աճից դեպի կայուն զարգացում բնապահպանական ոլորտի այն խնդիրներից են, որոնք ծառացել են մարդկության առջև:

Աշխարհագրության դասավանդման նպատակը սովորողների մոտ նաև այս հարցերի վերաբերյալ արժեքային համակարգի ձևավորումն է: Վերջինս համաձայն հանրակրթական դպրոցի չափորոշչի, կազմում է աշխարհագրություն առարկայի ուսուցման նպատակը՝ հմտությունների, կարողությունների և ճանաչողական մեթոդների տիրապետման հետ միասին:

Սովորողների մոտ կարողությունների և հմտությունների, ինչպես նաև ինքնուրույն, անհատական մտածելակերպի ձևավորումն ու զարգացումը պահանջում են ուսուցման ժամանակակից միջոցների կիրառում: Մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նոր հնարավորություններ է ընձեռում գիտելիքներն ամրապնդելու, ստեղծագործ մտածելակերպ զարգացնելու, բնության տարբեր պրոցեսները և երևույթները մոդելավորելու համար, որ լայն կիրառություն ունի բնագիտական տարբեր ոլորտներում: Հանրակրթական դպրոցներում ինֆորմատիկայի դասընթացից աշակերտները ծանոթանում են ստորակարգային համակարգերի հիերարխիկ կառուցվածքին, տարբեր պատկերացումներ ստանում օբյեկտի մոդելի և մոդելավորման մասին: Ինտեգրացված ուսուցումն ապահովելու համար այդ գիտելիքները նպատակահարմար է կիրառել աշխարհագրության դասավանդման ընթացքում: Անցած նյութն ամրապնդելու համար խիստ կարևոր է նաև գծագրական աշխատանքների կատարումը: Դասավանդող ուսուցիչներից շատերը կլինեն ինձ հետ համամիտ, որ աշխարհագրական մի շարք թեմաներ, որոնք ընդգրկում են երևույթների ու գործընթացների պարզեցում, դրանց փոփոխությունները ժամանակի ու տարածության մեջ, ակնկալվող ու կանխատեսելի միտումները տեքստային շարադրանքով մատուցելը արդյունավետ չէ, միգուցե նաև որոշ առումով ձանձրալի: Այլ կլինի պատկերը, եթե նույնը մատուցվի մոդելավորման գրաֆիկական կորերի տեսքով:

Հիմնական դպրոցում համակարգչային մոդելավորման կիրառմամբ կարելի է ստեղծել առավել պարզ, այդ տարիքի երեխաների համար մատչելի մոդելներ, որոնք կօգնեն զարգացնելու տրամաբանական մտածողությունը, բացահայտելու աշխարհագրական երևույթների պատճառահետևանքային կապերը, ընկալելու աշխարհը որպես մեկ ամբողջություն, ինչպես նաև արթնացնելու կամ ակտիվացնելու հետաքրքրությունը առարկայի հանդեպ: Օրինակ՝ էլեկտրոնային աղյուսակների օգտագործումը գրաֆիկներ ստեղծելու համար առավել կիրառելի է վիճակագրական տվյալներ ընդգրկող թեմաները դասավանդելու ժամանակ: Որոշ տեսական մոդելավորման ժամանակ, որտեղ ավելի կարևոր է տրամաբանական մտածողությունը, ոչ այնքան կարևոր են մաթեմատիկական գիտելիքները: Նման խնդիրը կարելի է լուծել նախօրոք տրված թվային տվյալների վերլուծումով՝ խմբային աշխատանքի համագործակցային մեթոդը կիրառելով: Աշակերտներին բաժանելով փոքր խմբերի՝ կարելի է ստանալ փորձնական անհատական տվյալներ յուրաքանչյուր խմբում: Հանձնարարել կառուցել գրաֆիկներ՝ օգտագործելով գործնականում ստացած գիտելիքները (տվյալները): Առաջադրանքներ կարող են ծառայել հետևյալ նմուշները անկյուն կազմելու միջոցով՝ գծագրով ցույց տալ Արեգակի դիրքը հորիզոնի հարթության նկատմամբ գիշերահավասարի, ամառային և ձմեռային արևակայության օրերին: Կազմել և հաշվարկել որևէ օբյեկտի ազիմուտը մեկ այլ օբյեկտի նկատմամբ: Կազմել օդի ջերմաստիճանի օրական ընթացքի կորը տարբեր ժամերի չափումներից ստացված տվյալներով: Կազմել որևէ երկրի բնակչության թվաքանակի շարժի կորը, ուրբանիզացման մակարդակի շարժի դիագրամը, տարբեր արտադրանքների փոփոխությունների դիագրամն ըստ տարիների, երկաթուղային ցանցի փոփոխությունների դիագրամն ըստ տարիների, որևէ գետի ջրահավաք ավազանի բաշխվածության շրջանաձև դիագրամ, հողային ֆոնդի, գյուղատնտեսական հանդակների շրջանաձև դիագրամ և այլն: Միաժամանակ ուսուցիչը հնարավորություն է ստանում լրացուցիչ տվյալներ հաղորդել դասավանդվող թեմաների վերաբերյալ:

Այսպիսով, համակարգչային մոդելավորման կիրառումը աշխարհագրության դասավանդման գործընթացում կնպաստի միջառարկայական կապերի ստեղծմանը, աշխարհագրական երևույթների ճիշտ և խորը ընկալմանը:

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԿԱԻ մասնագետ

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ

Կյանքի մասին.- Կյանքը շարժվող գնացք է, վարորդը՝ ճակատագիր:

Ոգին կյանքի վահանն է:

Կյանքը իմաստ է, որ փնտրում և չեն գտնում բոլորը:

Ամենալավ աղոթքը կյանքն է, որ Աստված շնորհել է մարդուն, իսկ սատանան ձգտում է առևանգել ամեն վայրկյան:

Կյանքը փորձության բեռ է, որ կրում են ցավակիր մարդիկ:

Սիրո մասին.- Սերը դրամ չէ, որ մանրես:

Սիրո մասին երկար խոսելուց լավը սիրելն է:

Սիրել՝ նշանակում է մոռանալ ինքն իրեն:

Բացառիկ սեր չկա, կա միայն սեր, որ բոլորինը չէ:

Սիրո խոստովանությունը խախտումն է այն սահմանների, որ խաղաղություն է պահպանում սրտերում:

Մենության մասին .- Մենությունը նման է մթության:

Խորհիր, մտածիր ու գործիր մենության աշխարհում, բայց ոչ հանձնվիր նրա քմահաճույքներին:

Մենությունը կամքի և ինքնահաստատման դասամիջոց է:

Խոսքի մասին.- Խոսքը կատարյալի հասցնելու համար պետք է իմանալ ու խոր պեղել մտածողության իմաստուն ընդերքը:

Բոլոր արվեստներից ամենանուրբը խոսքի արվեստն է: Այն անմիջական կապ ունի մտքի և զգացմունքի հետ:

Մահվան մասին .- Մահը հավասարություն է բոլոր խավերի մարդկանց համար:

Ով վախենում է մահից, նա վախենում է ճշմարտությունից:

Ծնվեցինք, և մահը ծնվեց մեզ հետ:

Երաժշտության մասին.- Երաժշտությունը փրկության կանչ է բոլոր նեղվածների համար:

Երաժշտությունը զգացմունքների պոռթկում է:

Երաժշտությունը չասված խոսքերի, բանտված զգացմունքների և հույզերի երկունքն է:

Երաժշտությունը կյանքն է ձայնագրված:

Գրողների մասին.- Ոճը գրողի ինքնաճանաչման ճանապարհն է դեպի ընթերցողը:

Գրողը ժամանակի լեզուն է:

Ապրումը, հույզը և խոհը գրողի զենքերն են:

Ամեն ժամանակ տալիս է իր գրողին:

Գրողը պետք է լինի ոչ միայն խոսքի, այլև մտքի արվեստագետ:

Գրողի աշխարհը տեսանելի է իր ստեղծածով:

Ժամանակի մասին.- Ժամանակը ամենադաժան դատավորն է:

Ամեն ինչ սպասում է ժամանակին, ժամանակը՝ ոչ ոքի:

Ժամանակը կաշառք չի վերցնում:

Ժամանակը հեղինակն է պատմության:

Ժամանակը չաշխատողին բեռ է, աշխատողի համար՝ ակնթարթ:

Ամեն ժամանակի թերթերը թերթվում են ժամանակով:

Ջոյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ՝ ՄԵԾ ՀՈՒՄԱՆԻՍՏ

Երդվել եմ ապրել ու մեռնել հայրենիքիս համար:

Խ. Աբովյան

Խաչատուր Աբովյանը գրական ասպարեզ իջավ 19-րդ դարի 30-40-ական թվականներին: Նրա կյանքն ու ստեղծագործությունը զուգադիպում են մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ հայ ժողովուրդը հեծում էր պարսկական բռնապետության ծանր լծի տակ:

«Վերք Հայաստանի» պատմավեպը հեղինակը գրել է մեծ կրքով, խիստ լարվածությամբ, ասես շունչը պահած, կուտակելով նրա մեջ պայթուցիկ մի ուժ, ընթերցողի միտքն ու հույզը բոցավառող ներքին մի անհանգչելի կրակ: Այս վեպը պատկերացնել առանց հեղինակի տանջանքների՝ կնշանակի պատկերացնել մարդ՝ առանց սրտի և ուղեղի: «Վերք»-ի բովանդակության էությունը հեղինակի վառ ու անկեղծ հայրենասիրությունն է և ժողովրդասիրությունը: Շատերն են կարդացել ու ներշնչվել նրանով:

«Բայց ինչո՞ւ այսքան երկար կանգ առա այս գրքի վրա, որովհետև այս վերջին օրերս շատ եմ ներշնչվում նրանով», - մի առիթով «Վերք»-ի մասին ասել է Ստեփան Շահումյանը:

Աբովյանի հարուստ ու բազմաժանր ստեղծագործությունների մեջ ուշագրավ տեղ է գրավում «Թուրքի աղջիկը» պատմվածքը ևս, որը գրաբարամոլների կողմից հռչակվեց որպես տհաս մտքի արդյունք: Հումանիզմի բարձր գաղափարներով շնչող և ինքնակենսագրական տարրեր պարունակող մի ստեղծագործություն է, որն իրական դեպք է՝ գեղարվեստական վերակառուցումով: Գրվածքը սկսվում է դաժան ամառվա նկարագրումով: Ամառվա նկարագիրը պատմվածքում տրված է այնպիսի վարպետությամբ, որ ընթերցողի մոտ շոգից շնչահեղձ լինելու պատրանք է ստեղծում. «Քաղաքի շոգն ու կրակը շունչս բերանս էր հասցրել… մեկ օր էլ էս կրակը ջանս էր ընկել, սիրտս էրում էր, ու ես որոշեցի տնից դուրս գալ, մի քիչ զովանալ»: Սրան հաջորդում է թագավորական բաղնիսների հետևի թաղի գայթակղեցնող խաղողով ծանրաբեռնված վազերի նկարագրությունը: Բաղի կանաչագեղ թմբերից մեկի վրա փոքր-ինչ հանգստանալու ժամանակ է, որ թուրքի գերեզմանոցի կողմից լսելի է դառնում սրտակեղեք լացուկոծ: Թուրքերը մոլլաների ուղեկցությամբ մեռել էին տանում դեպի գերեզմանատունը: Աբովյանը կարեկցանքի խոսքեր է մրմնջում հանգուցյալի հասցեին. «Խաղաղություն հոգուդ՝ հանգուցյալ մարմին, այ իմ պատկերակից հողածին: Հավատներս մեկ չի, սրտներս հո մեկա, լեզուդ իմիցը չի, պատկերքդ հո իմիցնա»: Այս տողերի մեջ Աբովյանը երևան է բերել յուր բովանդակ հումանիզմը մի այլակրոն, այլազգի հանգուցյալի նկատմամբ, հանգամանք, որը և բացահայտում է նրա «ամենքի քշտին» բաժանորդ լինելու, ամենքի համար թախծել ու կարեկցել իմացողի էությունը: «Ինսանորդուն պետք է օգնել, թեկուզ և յուր անձը վտանգի ենթարկելով»,- ասում է Աբովյանը:

Աբովյանը մարդուն ամեն ինչից բարձր է դասում: Նա հմայում է իր ստեղծած բնության անզուգական պատկերներով, շոշափելի կենդանությամբ և իր էության էությունը կազմող բյուրեղյա ժողովրդասիրությամբ: Հայ ժողովուրդը՝ իբրև արտահայտության ամենաբարձր գնահատական, Աբովյանին համարում է իր առաջին սերը, որովհետև նա առաջինն էր, որ իր երկրում աննախընթաց ուժով բացահայտեց բուն հայկականը, ազգայինը՝ իր ստեղծագործությունը դարձնելով հայ ժողովրդի կյանքի հանրագիտարանը՝ հայկական գրականությունը վերածելով ազգային գրականության, ինչպես ինքն է ասում, դարձրեց «հարիր հազարին» հասկանալի լեզու՝ ազատագրելով այն օտար ազդեցություններից: Նա հանդիսանում է հայ հասարակական մտքի ամենաբարձր գագաթը, մի պայծառ անուն, որ հավերժ կմնա ժողովրդի սրտում:

Լիանա ՆԵՐՍԵՍՅԱՆ
Սպեփ. Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի ուսուցչուհի

ԳՐԱԴԱՐԱԿ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՎԻ ՃԻՉ Է, ՀՈԳՍ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔ

Օրերս Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցավ ճանաչված արձակագիր Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» և «Իրիկնային աղջամուղջ» գրքերի շնորհանդեսը, որը կազմակերպել էր ԼՂՀ գրողների միությունը: Լևոն Ադյանը մեր հայրենակիցն է, ծնվել ու մանկությունն անց է կացրել Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: Բարձրագույն ուսումը ստանալով Բաքվում և այնուհետև Երևանում, նա երկար տարիներ աշխատել է «Գրական Ադրբեջան» հանդեսում՝ նպաստելով հայաշատ Բաքվում հայ գրականության և առհասարակ, մշակույթի զարգացմանը:

Շնորհանդեսին ներկա էին Արցախի գրական ընտանիքի անդամներ, մշակույթի բնագավառի ներկայացուցիչներ, գրողի երկերի երկրպագուներ: Ելույթ ունեցողները ոչ միայն արժևորեցին նորահրատարակ գրքերի գեղագիտական նշանակությունը, այլև սիրով ներկայացրին Լևոն Ադյանի գրական-հասարակական գործունեությունը՝ արժևորելով նրա անցած հարուստ կենսուղին:

Ամփոփ ներկայացնում ենք շնորհանդեսին հնչած ելույթները:

Վարդան Հակոբյան *(ԼՂՀ գրողների միության նախագահ, գրականագետ)* - Բոլոր այն նվիրական զգացումները, որոնք հարազատ էին մեր մեծերին, և որոնցով առաջնորդվում են մեր արցախյան հողի զավակները, այսօր դրանցով առաջնորդվում է Լևոն Ադյանը, անկախ այն բանից՝ ապրում է Երևանում, Ստեփանակերտում, թե այլուր: Նա հիմա բնակվում է Սանկտ Պետերբուրգում և հայ համայնքի հետ մեծ գործունեություն է ծավալում մեր ազգապահպանության գործում: Ադյանի ստեղծագործությունները քաջ հայտնի են յուրաքանչյուրիս: Նա հեղինակ է շատ վեպերի, վիպակների ու պատմվածքների, որոնք լայն ճանաչում են բերել գրողին: Ուշագրավ են հատկապես Ադյանի «Այն հեռավոր ամռանը», «Կորսված բարդիներ», «Հեռու լեռներում», «Մեր գյուղի մարդիկ», «Տունը գյուղի ծայրին» գրքերը: Ստեղծագործական առաջին իսկ քայլերից նա արժանացավ ոչ միայն Արցախի, այլև այն ժամանակվա Ադրբեջանի հայության, ընդհանրապես հայ ընթերցողի ջերմ ուշադրությանը: Նա այն եզակի գրողներից էր, ով չնայած ապրում էր Ադրբեջանում, սակայն կարողանում էր իր ստեղծագործություններով ներկայանալ նաև Հայաստանում, և սա խոսում է Լևոն Ադյանի ստեղծած երկերի որակի ու մակարդակի մասին: Ադյանը Բաքվում մեզ համար մի փոքրիկ Հայաստան էր, կարելի է ասել՝ նրա միջոցով էինք հաղորդակցվում հին պատմամշակութային Բաքվին: Այս իմաստով Լևոնն իսկապես անփոխարինելի էր:

Գրողը դարձավ նաև Արցախյան շարժման տարեգիրը, որովհետև Գոյապայքարի սկզբնական շրջանում դեռևս ապրելով Բաքվում, ականատեսը լինելով Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձություններին, իր հետագա ստեղծագործություններում արտացոլեց այդ ամենը: Դրանցից ամենահիշարժանը վերջերս ԼՂՀ գրողների միության կողմից տպագրված «Հեռացող եզերք» վեպն է: Այդ վեպում ոչ մի գունավորում չկա, այնտեղ դաժան իրականությունն է, որն էլ դաժան ազնվությամբ նա շարադրել է: Այս երկու գրքերը գալիս են վերահաստատելու Ադյան-գրողի ստեղծագործական տաղանդը:

Սոկրատ Խանյան *(բանաստեղծ, գրականագետ)* - «Հեռացող եզերք»-ին մենք բոլորս սպասում էինք: Այս վեպը, որը վավերագրական-գեղարվեստական երկ է, իսկապես նորություն է հայ գրականության մեջ՝ ադրբեջանական հայաշատ վայրերում տեղի ունեցած հայկական ջարդերի փաստագրման առումով: Վավերագրական ստեղծագործություն գրելիս գրողը սովորաբար կաշկանդվում է, որովհետև իրական մարդկանց անուններ է տալիս, նրանց է բնութագրում: Լևոնի տաղանդը հնարավորություն է ընձեռել, որպեսզի որոշ փաստերի, մարդկանց բնութագրությունները ներկայացնելիս խոսքը հասցնի գեղարվեստական պատկերի: Ուշագրավն այն է, որ ինքը գրքում ներկայացված բոլոր դեպքերի ականատեսն է: Ստեղծագործելու ինքնատիպ շնորհք ունեցող գրողը ներկայացրել է Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցած իրադարձությունները: Գլխավոր սյուժետային գիծը ադրբեջանուհի Ռենայի և ազգությամբ հայ Լեոյի սերն է: Բայց դա սովորական սիրո պատմություն չէ: Այս գրքում ամբողջ բաքվահայության կյանքն է երևում, և գիրքը կարդալիս՝ շատ ծանոթ մարդկանց ես տեսնում, ծանոթանում Բաքվի գրողների սոցիալական վիճակին, նրանց ապրումներին:

Անցում է կատարվում ազերի գործիչների քաղաքական ստոր նկրտումներին՝ հետ գնալով մինչև 1905 թվականի դեպքերը: Գրողն անդրադառնում է նաև 1918-1920 թվականների իրադարձություններին: Ադյանի այս գիրքն իրոք սկզբնաղբյուր է ծառայելու ոչ միայն փաստերի առումով:

Շեշտված են հային հատուկ հումանիստական բնութագրումները թուրքերի հանդեպ: Հայի վեհանձնությունն է արտահայտվում գրքում: Եթե որևէ մեկը հետաքրքրվի, թե ինչ է տեղի ունեցել Սումգայիթում, ինչու Բաքվի հայերը հեռացան ու ինչ կորուստներ կրեցին, ապա միայն վերջաբանը բավական է, որպեսզի պատկերացում կազմի գաղթի ճամփան բռնած հայության վիճակի մասին:

Նվարդ ԱՎԱԳՅԱՆ (բանաստեղծ, արձակագիր) - Ադյանը բաքվաբնակ այն մտավորականներից է, որոնք իրենցով նշանավորել են գրական թարմ հոսանքի մուտքը: Նա գրում է հետաքրքիր և հետաքրքիր էլ ընթերցվում է: «Գրական Ադրբեջանում» աշխատելու ժամանակ նա մեծ ազդեցություն ունեցավ, ամենից առաջ, գրական պարզունակության դեմ իր պայքարով: Վերջին անգամ մենք հանդիպել ենք 1988թ. փետրվարի 22-ին, երբ լսել էր այստեղ կատարվող իրադարձությունների մասին և իսկույն շտապել Ստեփանակերտ: Դա նշանակում է, որ եթե այստեղ էր,՝ ուրեմն՝ մեզ հետ էր: Գալով «Հեռացող եզերք» գրքին, ասենք, որ սերը համամարդկային արժեք է, սերը հաշվի չի նստում ոչ քաղաքականության, ոչ կրոնի հետ, սերը երկու մարդու գործ է, և այն կոխկրտելը սրբապղծություն է: Բայց գրքում երկու երիտասարդների սիրո պատմությունը չէ միայն: Այստեղ Բաքվի հայ մտավորականության կերպարներն են՝ իրենց լավ ու վատ բնավորությամբ: Ամբողջության մեջ վերցրած այդ գիրքը ես համարում եմ ժամանակի ամենակարևոր հարցադրումների պատասխանները տալու փորձ, որը հաջողվել է:

Ակամա հայտնվելով հեռավոր եզերքում՝ Լևոն Ադյանը միշտ էլ հոգով մեզ հետ է, իր սիրելի Արցախում:

Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *(արձակագիր)* - Երևի թե ամենից շատ ուրախացողներից մեկը ես էի, երբ տեսա Լևոնի գիրքը: Ինձ թվացել էր, թե Լևոնն այդպես էլ կորավ մեր գրականության համար: Տաղանդավոր գործ է գրել: Ընդհանրապես, գրականությունը ցավի ճիչ է, հոգս է, տառապանք է: Մյուս բոլոր գրականությունները սուտ են և գրականության աղբանոցը պետք է նետվեն: Բոլոր մեծ գրողներն էլ՝ Հոմերոսից սկսած մինչև այսօր, իրենց ժամանակի տառապանքն են կրել ու դա արտացոլել գրականության մեջ: Լևոնը մեր օրերի տառապանքն արտահայտեց տաղանդավոր ձևով: Նրա տառապանքը մի այնպիսի պայծառ սիրո ֆոնի վրա է խարսխված, որ երբեմն թվում է, թե վերադարձել ես միջնադարյան այն զուլալ ու անկեղծ նվիրական ժամանակները, երբ կար մարդ, և այդ բառն արտահայտում էր իր իսկական իմաստը: Հերոսի և հերոսուհու կենսագրությունն ուղղակի ցնցող է: Մյուս բոլոր մտորումները, որ կան գրքում, երբեմն թվում է՝ ավելորդ են: Հետո, երբ կարդում ես, զգում ես, որ եթե դրանք չլինեն՝ ինչ-որ բան կպակասի: Նույնիսկ թուրք պատմաբանի երկար ու բարակ ճամարտակությունը, որն անհամոզիչ է, այնուամենայնիվ, ինչ-որ տեղ պետք է:

Կիմ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ *(արձակագիր)* - Այսօր Լևոն Ադյանի մասին խոսելու առիթը նորահրատարակ երկու գրքերն են, որոնց մասին գրականագիտությունը դեռ իր խոսքը կասի: Բայց ես ներկա դեպքում միայն «Հեռացող եզերքի» մասին եմ ուզում շատ համառոտ խոսել: Այս ահագնացող ազգային թշնամանքի ֆոնին, որ պարբերաբար հրահրվում և իրականացվում է ազերիների կողմից, «Հեռացող եզերքն» իսկական ապտակ է ադրբեջանցի մտավորականներին: Ադյանը տևական ժամանակով ապրել է Բաքվում, լավ գիտի այդ ազգին բնորոշ հատկանիշները, և երբ համատարած թշնամանք է այդ երկրում, ինքը փորձել է այդ թշնամանքը մեղմել սիրո հետաքրքիր պատմությամբ... Կարծում եմ, որ սա ընդամենը սկիզբն է, որովհետև Լևոն Ադյանը եղել է իրադարձությունների կիզակետում և անպայման նոր գրքեր կգրի այն ծանր իրականության մասին:

Հարկ եմ համարում նշել նաև, որ մեր սերնդի համար Ադյանը եղել է գրական չափանիշ: Ես ավելի քան համոզված եմ՝ ժամանակին նրա «Այն հեռավոր ամռանը» գիրքը ամենակարդացված գրքերից է եղել: Այն բոլորի սեղանի գիրքն էր իր ժամանակին: Ես ինքս Ադյանին սկսել եմ ճանաչել այդ գրքով և հետագայում եղել եմ նրա նվիրյալ ընթերցողը: Վերջերս գրողի հետ շփվում եմ նաև Facebook-ի միջոցով, միշտ կարդում եմ նրա «Քանդակները», տարբեր առիթներով արված մեկնաբանությունները և ուղղակի իմաստով մեծ հայտնություն եմ համարում նրա երևալը, առավել ևս՝ Ղարաբաղում, որը գրողի հայրենիքն է:

Լևոն ԱԴՅԱՆ - Դպրոցական տարիներից հետո, կես դարից ավելի, ապրում եմ դրսում, բայց երբեք չեմ մոռացել իմ սիրելի Ղարաբաղը: Ես երջանիկ եմ, որ 25 տարուց հետո վերադարձել եմ իմ հայրենի երկիրը: Մի հարցազրույցի ժամանակ, երբ ինձ հարցրին, թե երբ կգամ Ղարաբաղ, ես ասացի, որ իմ սիրտը ճամփին է, պարզապես դեռ տեղ չի հասել: Բնությունը, տարիքն իրենցն են անում: Բայց իմ բոլոր ընկերներն իմ հիշողության մեջ մնում են այնպիսին, ինչպիսին եղել են 25 տարի առաջ՝ ջահել, գեղեցիկ, կենսախինդ: Նրանցից շատերը չկան այլևս՝ Շահեն Օհանջանյանը, Վաղարշակ Գաբրիելյանը, Ալբերտ Շահնազարյանը, Գուրգեն Գաբրիելյանը... Բայց նրանց հիշատակն ապրում է իմ հիշողության մեջ:

Ես խորին շնորհակալություն եմ հայտնում Վարդան Հակոբյանին, այս հանդիպմանը եկած անձանց: Շնորհակալ եմ բոլոր նրանց, ում աջակցությամբ լույս տեսավ իմ գիրքը: Շատ կուզենայի հաճախակի գալ, տեսնել իմ ընկերներին, ապրել նրանցով...

Սեփ. լրատվություն

ԳԻՐՔԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՎԵՐ

Արդեն մեկ տարի է, ինչ գործում է «Զորակն» գիտակրթական երիտասարդական հիմնադրամը, որն ստեղծել են Միքայել Յալանդուզյանը, Վահագն Մխոյանը և Կարեն Վրթանեսյանը: Հիմնադրամը սահմանամերձ և ազատագրված տարածքների՝ հատկապես գյուղական համայնքների դպրոցների համար, ֆեյսբուքյան «Հայք» նախաձեռնության հետ, տարբեր տեսակի գրքեր՝ գեղարվեստական, հանրագիտարաններ, դասագրքեր, բառարաններ, գիտահանրամատչելի և այլն, հավաքում և հասցնում է տեղեր: Հուլիսի 18-ին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Կարեն Վրթանեսյանը և գործադիր տնօրեն Հովհաննես Հարությունյանն այցելել էին Քաշաթաղի շրջան և նշված գրքերից(նաև գնդակներ) տրամադրեցին Սուսի Սերոբ Հանեյանի, Աղանուսի Արսեն Հակոբյանի և Աղավնատան Սամվել Ալեքսանյանի անունները կրող միջնակարգ դպրոցներին: Աղանուսի համայնքի ղեկավար Արտակ Աբրահամյանի և դպրոցի տնօրեն Ռուբիկ Ներսիսյանի հետ հյուրերին ուղեկցեցինք կրթօջախ: Գրքերը՝ «Հայկական սովետական հանրագիտարան»-ի բոլոր 13 հատորները, գեղարվեստական, բառարաններ, գիտահանրամատչելի և այլն, գրադարանին հանձնելուց հետո զրուցեցի «Զորակն»-ի ներկայացուցիչների հետ: Գործադիր տնօրեն Հովհաննես Հարությունյանը վերջերս է զորացրվել հայոց բանակից, որտեղ ճանաչվել է լավագույն սերժանտ: Տեղեկացնում է, որ իրենց կազմակերպությունն արդեն մոտ 10 սահմանամերձ դպրոցների՝ հիմնականում Տավուշի մարզում, տրամադրել է նման գրքեր: Կարեն Վրթանեսյանը, խոսելով գրքերի հավաքագրման աշխատանքների մասին, ասաց. «Գեղարվեստական գրքերը հավաքվում են բնակչության կողմից, իսկ հանրագիտարանները ձեռք ենք բերում մենք և մեր ընկերներն ու համակիրները՝ անձնական միջոցներով: Մի շարք գրքերի ձեռքբերման համար աջակցել է «Բիլայն» կապի ծառայությունը»: Ասաց նաև, որ ծրագիրը լինելու է շարունակական, և նախատեսված է ընդլայնել աշխարհագրությունը: Բացի նման ձեռնարկից, «Զորակն»-ը տարբեր համայնքներում ստեղծել է մարզական և ռազմահայրենասիրական խմբակներ: Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում գործում է ֆուտբոլի խմբակ, սեպտեմբերին Երևանում նախատեսված է բացել նախաբանակային խմբակ: Մեր շրջանում «Զորակն»-ը գրքեր է հատկացրել նաև Բերձորի արվեստի և սպորտի դպրոցին: «Զորակն»-ի ներկայացուցիչներին շրջանում ուղեկցում էր Բերձորցի, ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետի շրջանավարտ Արմեն Մխիթարյանը:



Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ԹՕՕ-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՆՈՐԻՑ ՇԻՐԱԶԻ ՀԵՏ

Դո՞ւ ես, արքա,
Հապա ո՞ւր է թագդ ոսկյա
(«Պատրանք», Հ. Շ.):

Գարունը, արդեն ութ տասնամյակից ավելին է, թվում է՝ Շիրազով նորովի է գալիս: Նա յուրատիպ միտք, թարմ շնչառություն ուներ իր ժամանակի համար:

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ…
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք…
Տեսա ուրիշ մի աշխարհ, գարուն տեսա նորաբույր…
(«Գարնանամուտ»)

Գարնան կենսունակության վերընձյուղման այլաբերական բովանդակության լավագույն առհավատչյան Շիրազի «Անապատս ապատվեց» բանաստեղծությունն է: Դրա յուրաքանչյուր տող փայլում է պատկերային շռայլությամբ, յուրաքանչյուր բառ շիրազյան հարստությամբ է շնչում, ժողովրդական հավատի, բառ ու բանի շքեղությամբ է առանձնանում: Որպես ոճ՝ դա արդի ժամանակահատվածում սպառված է համարվում: Բայց ճշմարտությունն այն է, որ թումանյանական պարզ ու զուլալ ժողովրդականին շրջանցած այդ նոր ձևը դեռ գերազանցող չի եղել: Շիրազը մնում է յուրատիպ, ինքնին ու առանձնահատուկ: Այդ անմրցակից շնորհը ժողովրդականի բնագավառում պաշտվում է առայսօր: Բայց նրա անզուգական բանարվեստը դեռ առինքնող է ու սպառված չէ: Կենսալից կյանքի ու համով-հոտով շռայլանքի այդ հանրագումարը մանուկներով փթթող կյանքն է:

Գարուն չեկած՝ հալվեց ձյունս,
Գարուններով լցվեց տունս:
Տունս լցվեց ծաղիկներով՝
Քաղցրահնչյուն շաղիկներով,
Հանվեց աչքը քար լռության…

Բանաստեղծը մանրամասնում է առանց մանկան՝ կենսունակության, ընտանիքի, մարդ արարածի կյանքի դառնությունը, սին ու դատարկ էությունը (Ս. Կապուտիկյանից ծնված Արա Շիրազից հետո իրականում երկու տասնամյակի ընդմիջում է եղել, որը բանաստեղծորեն «յոթ տարվա» բաժանում է ներկայացվում): Ընտանեկան փոքրիկ մեղվափեթակը՝ կենցաղայինը, հեղինակը փոխարկում է քաղաքականի՝ ՇԻՐԱԶՅԱՆ մի թփաթաքույց բառով՝ հնչեղ հատուկ անունով՝ ԱՆԻ, որով և հասարակ թումանյանականը նոր լիցք ստացած է դառնում, անմահական ոճ է ճանաչվում.

Վեր քաշեցին հոնքերն իմ տան՝
Յոթը տարի կախած հոնքեր,
Գիտե՞ս, արդյոք, ինչով, իմ սեր:
Ավեր տունս մեկից շինվեց,
Հույսս սև էր, ծիածանվեց,
Թիթեռներով ճիչ ու ձայնի
Անիս փոխվեց Երևանի:

Բանաստեղծի հոգին հրճվում է… Արբշիռ զգացմունքներով առավել է աստիճանավորվում ընտանեկան բերկրանքը: Խտացված հույզը մարդու սիրտ է ջերմացնում: Կարծես հավերժանում է ազգի լինելությունը, հայի մշտահոգ ու մշտանորոգ ցավը: Կամրջվում է երազանքը…

Լռությունը ծնեց փեթակ՝
Մեղվածայնեց իմ հարկի տակ:
Ճիչ ու լացով ուրախ գժվեց,
Ցնդեց մահը, կյանքն հավերժվեց,
Գիտե՞ս ինչով, ո՛վ իմ գալիք,
Բալիկ ծնվեց, ինձ նոր բալիկ…

Վարակիչ է հեղինակային հրճվանքը… Ամեն հայի փափագն է լիքը տուն մանուկ ունենալ… Բազմանալ, զորանալ…

Տունս լցվեց վաղվա հույսով՝
Աստղիկ, Սիփան ու Մասիսով,
Որոնք, ազգ ի՛մ, երբ մեծանան,
Քեզ հետ Մասիս կբարձրանան:

Հեղինակը չի մոռանում համաշխարհային մշտագո վտանգը: Իր մարդասիրական մոտեցմամբ փոքր ազգերի ծովացման գործընթացն է երազում՝ «Եվ կաղոթեմ ես ի սեր փոքր ազգերի ծովացման…»: «Անապատս ապատվեց» բանաստեղծության վերջնատողերը վերընձյուղվում են հաջորդող զավակասիրական «Պատարագ» բանաստեղծության նախավերջին տնում՝ …Եվ իմ տնակն այս մի բուռ փեթակվում է անսահման… Դա յուրաքանչյուր ընտանիքի երազանքն ու հրճվանքն է:

Հովհ. Շիրազի «Անապատս ապատվեց» գործն առլեցուն է բանաստեղծական պատկերավորման ու արտահայտչական միջոցներով, ուր լեզվական գեղագիտական հնարավորությունները շատ են: Գերիշխող են ավանդական բարեհնչյունական տարաբնույթ հանգավորումները և բառային իմաստաբանական մեծ հարստություն կազմող փոխաբերությունները: Դրանց զուգահեռ գործադրում է տարաբնույթ հնարքներ՝ աստիճանավորում, հակադրություն, անձնավորում, բացթողում, չափազանցություն և այլն, որոնք գեղագիտական անսահման հաճույք են պատճառում ընթերցողին պարզությամբ, բարեհունչ ու ախորժալուր ժողովրդական հայերենի հմուտ գործառությամբ: Օրինակ՝ «Մարված թոնիր տունս անձայն» առաջին տողը, ուր ՏՈՒՆ-ը փոխանունություն է և ընտանիք է նշանակում, որպես կապակցություն՝ չի ամբողջանում (թերի նախադասություն է՝ օժանդակ բայը զեղչված է): Այն աստիճանավորվում է հաջորդ տողում, և այդ ծավալուն խոսքերը երրորդ, չորրորդ տողերում՝ արտահայտիչ ու սրընթաց կարճ են: Հավելվում է նմանության հիման վրա կառուցված փոխաբերությունը (փշրվեց՝ փոխարինվեց, տեղի տվեց):

Մարված թոնիր տունս անձայն՝
Լռությունը խուփ էր վրան,
Որ փշրվեց,
Վիշտս ցրվեց…

Մարված/մարած թոնիր-ը նաև դարձված է (լուռ, չաշխատող, անկենդան), որը դարձվածաբանական ծավալուն բառարանում չկա:

ԱՆ- ժխտական նախածանցը վերնագրում ու վերջում հակադրության կերտման հոյակապ ու հանրամատչելի օրինակ է դառնում նույնարմատ բառերի համադրությամբ՝ «անապատս ապատվեց, ամպած տունս զնգաց անամպ»: Առաջին օրինակի գոյական - բայ խոսքային հականիշը շարահյուսական մակարդակում է հարթվում՝ ենթակա, ստորոգյալ, այսինքն՝ հնչեղ հակադրություն է: *Ապատ* պահլավական արմատն արդի հայերենում առանձին չի գործածվում և նշանակում է՝ շեն տեղ: Հիմա ոչ գործուն ածանց է՝ Վաղարշապատ, Սարդարապատ և այլն. Շիրազն այդ արմատից նոր բայ է կերտում՝ *ապատվել՝ շենանալ:* Ցավոք, որոշ լեզվաբաններ այդպիսի նորաբանության հիմքը ածանցից նոր բառակերտում են համարում, նույնը կրկնելով դպրոցական մասնագիտական դասագրքում՝ *համույթ* բառը (տե՛ս Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, «Հայոց լեզու», 10 հումանիտար հոսք, Եր., 2010, էջ 129): Այդ գրքում ծուլական գիտաբառն էլ է անհաջող գործածություն, իսկական բարդության փոխարեն. իսկական և անիսկականը ընկալելի և ոչ ընկալելի գիտաբառերով պիտի փոխարինել):

Պատկերավորությամբ ու արտահայտչականությամբ առանձնացող «Անապատս ապատվեց» բանաստեղծությունը հարուստ է լեզվաբանական ոճական բոլոր մակարդակներով՝ հնչյունական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական: Նույնիսկ հնչերանգում կետադրական նշանները երբեմն հնչողություն են ստանում: Օրինակ՝ հեղինակը շատ նրբանկատ էր կետադրության՝ հատկապես բութի նկատմամբ: Նա առանձնացնում էր բանաստեղծական բացահայտումները կետադրական այդ նշանով: Ահա՝ Լռությունը ծնեց փեթակ՝ //Մեղվածայնեց իմ հարկի տակ:

Փեթակ-ի վրա դրված բութն ընդգծում է հաջորդ տողի միավորական համադասական նախադասության բացահայտչային էությունը (բանաստեղծը կենդանության օրոք էլ հակադրվում էր խմբագիրներին և ստիպում պահպանել իր կետադրությունը) կամ վերջում՝ Որոնք, ազգ իմ, երբ մեծանան՝ // Քեզ հետ Մասիս կբարձրանան…, Ամպած տունս զնգաց անամպ՝ // Տունս լցվեց անմահությամբ…, Մանուկներս հույս դառնում՝ իրար մրցում են, կարծես և այլն:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ.գ.թ., շիրազագետ

Արմինե ԱՊՐԵՍՅԱՆ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիշողություն

1. Դու հիշո՞ւ մ ես ինձ:
Հորձանուտները թաց հայացքների
Գահավիժում են ակնթարթն ի վեր,
Անցյալը սոսկ հո՞ւշ, թե պատմություն է…
Միտքը զորեղ է արհավիրքներից,
Երբ վախը մահվան հաղթահարված է:
Մեզ կարելի էր համարել ուժեղ…
Վերապահումով,
Որովհետև մենք միմյանց ունեինք…
Դարանակալ է խղճի թագուհին
Վեհանձն մտքի վայրէջքից առաջ,
Կամ մի քիչ հետո…
Դա թեական է:
Քնած դշխուհու մարմինը գրկած,
Հանճարը սիրո քո բաց աքերում՝
Անհետանում ես ստվերների մեջ…
Մի՞թե մենք ոչինչ բնավ չենք հիշում:
Ես հիշում եմ մի բարի երեկո,
Ես հիշում եմ մի ալեհեր կասկած՝
Իմ տղամարդու անհուն աչքերում-
Դու ինձ չե՞ս հիշում…

2. Նեանդերթալյան մարդուց ժառանգած
Բնազդների մեջ ապրող սարսուռը
Ահաբեկում է անմեղությունս՝
Հանցավոր ու գիժ անմեղությունս՝
Եղելությունս՝
Հիշողությունս…
Դու ինձ չես հիշում,
Ավելին՝ դու ինձ ապրել չես հուշում:

3. Մարմինդ հաշտ է քո կրքերի հետ,
Աչքերդ միայն բերկրանք են լացում,
Ձեռքերդ խաղաղ ու մերկ են դողից.
Երանություն է,
Կամ… երջանկություն,
Դա կարևոր չէ,
Կարևորն այլ է՝
Առկայությունը ներդաշնակության.
Դու հիշում ես այն…

4. Ես հիշում եմ մի խրախճանք ու երգ,
Տարտարոս մտքի ու ծորո՜ւն հեքիաթ
Եվ հերոսներին բարի հեքիաթի…
Ես ճանաչում եմ աչքերը նրանց՝
Աչքերը բոլոր-բոլոր այն մարդկանց,
Ում կարոտում է հիշողությունս՝
Արտասվելու չափ…
Եվ արտասվում են դրախտը կորցրած
Իմ բազուկները…
Մարմինս ներսից հարստանում է վարարուն խինդով.
Հայացքս կրկին հղի է սիրո երկվորյակ ցավով՝
Նրանք են երկյուղն ու հավատամքը:

Դու հիշո՞ւմ ես ինձ ու իմ վախերը…

Քեզ ունենա՞լը, թե չունենալն է բախտավորություն…

Ձախորդ օրերի հռչակը դեմքիս՝
Ճանապարհում եմ
Ուղևորներին
Հույսի գնացքի…

Գարունը հեռվից նման է կյանքի
Խիտ արտահոսքի
Սուղ ժամանակից,
Իսկ իրականում…
Ամեն ինչ այլ է:
Իսկ իրականում ամեն ինչ մի քիչ հակասական է
Ու կախարդական,
Որովհետև մենք բոլորս հոգով կախարդ ենք մի քիչ…

Քեզ ունենա՞լը, թե չունենալն է բախտավորություն,
Ձախորդ օրերի հռչակը դեմքիս՝
Դիմավորում եմ
Ուղևորներին
Հույսի գնացքի…

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ԻՆՔԸ, ԹԵՐԵՎՍ, ԱՅՍՊԵՍ ԷՐ ԿԱՄԵՆՈՒՄ

Լսել էի, որ հիվանդանոցում է ու մի քանի օր պիտի պառկի: Գնացի տեսության: Ամեն օրվա Նորայրն էր. միայն մի քիչ թույլ էր ու գունատ:

- Էդ քեզ սազո՞ւմ է:

Իմ կատակ հարցին պատասխանեց կատակով.

- Բա էսօր-էգուց գնալու եմ, մի անգամ չգա՞մ մեր քաղաքի հիվանդանոցի նոր սարքավորումները տեսնեմ, իմպորտնի դեղերից մի քանիսը խմեմ, էս լավ տղաների հետ մի քիչ զրույց անեմ...

Կողքի երկու հիվանդները ծիծաղեցին, իսկ ինքը, ասես, կամենալով փոխել խոսքի հունը, շարունակեց.

- Նստի՛ր, էդ աթոռին նստի՛ր: Պատմիր տեսնեմ՝ դու ինչպես ես, գյուղո՞ւմ ես լինում, թե՞ Ստեփանակերտում, էն օրը «Լուսարարում» հոդվածդ կարդացի, վերնագիրը ի՞նչ է..., մոռացել եմ... Լավ էր...

Խոսեցինք դեսից-դենից, ավելի քան կեսդարյա վաղեմություն ունեցող մեր ծանոթության, ընկերության, բարեկամության առաջին տարիները հիշեցինք, մեր ջահելությունից զվարճալի բաներ պատմեցինք, ժպտացինք, տխրեցինք, ափսոսացինք, առաջվա մարդկանց նվիրվածության մասին ճառեցինք, ինքներս մեզ գովեցինք (համեստության սահմաններում, իհարկե), ինչոր տեղ ուրախացանք, հպարտացանք մեր արածով ու թողածով, բայց ավելի շատ՝ դառնացանք չարածի, չհասցրածի համար, իրար հույս տվինք, հուսադրեցինք, որ ամեն ինչ լավ կլինի, ու մենք էլ դեռ մի քանի տարի աշխարհին ու ոչ մեկին «հրաժեշտի խոսք» չենք ասի: Պայմանավորվեցինք, որոշեցինք և օդում կայացրած մեր որոշման վրա մի լավ ծիծաղեցինք...

Այսպես՝ մոտ 40-50 րոպե:

Ու երբ ձեռքը սեղմելով և «դե լա՛վ, ես գնամ» ասելով՝ ուզում էի դուրս գալ սենյակից, հայացքով հասկացրեց, որ մի րոպե սպասեմ: Կոշիկները հագավ, ինձ ուղեկցեց մինչև միջանցքի դուռը: Հետո, բաժանման պահին, թևս բռնեց ու՝

- Տե՛ս ինչ եմ ասում...

Մի պահ լռեց, ապա նկատելի տխուր տոնով շարունակեց.

- Ես որ մեռնեմ, անպայման կգաս ու երկու խոսք կասես գերեզմանիս...

Սկզբում հանկարծակիի եկա, հետո ինձ հավաքելով ու ձեռքս ուսին դնելով՝ մեղմ ժպիտով ասացի.

- Լա՛վ, աչքիս վրա... Դե որ խնդրում ես, կանեմ, միայն թե մի քիչ արագացրու, որովհետև մի երկուերեք շաբթից գնալու եմ Երևան՝ բուժման... Իսկ ընդհանրապես, լավ կլինի, որ ինձ վրա հույս չդնես...

Ծիծաղի նմանվող մի բան նկատեցի դեմքին և շատ զարմացա, երբ սկսեց «խնդրանքը» հիմնավորել:

- Գիտե՞ս, Միշա՛, էս անտեր հիվանդությունը պինդ է կպել ինձ... Որտեղ գնում եմ, նստում, քայլում եմ՝ պոկ չի գալիս ինձանից: Գիշեր լինի, թե ցերեկ: Մի հիմար միտք է ընկել գլուխս, վախենում եմ, թե...

Ես չուզեցի լսել, ընդհատեցի.

- Ա՛յ մարդ, մի կարգին բան ասա, փոքր երեխա ե՞ս...

- Չէ՛, չէ՛, մեռնելուց չեմ վախենում,- շարունակեց,- ուղղակի վախենում եմ, թե ութսունամյակս խանգարեմ, ամեն ինչ իրար խառնեմ: Բժիշկներին լսում, խորհուրդները կատարում եմ, բայց իմ ներսում մի վիատ, հուսահատ ձայն հանգիստ չի տալիս ինձ...

- Է՜, դատարկ բաներ մի ասա, էդ ներսի ձայնիդ էլ սաստիր՝ թող էլ ծպտուն չհանի...

Նորից կատակի տվի և կամացկամաց իջա աստիճաններով: Սա մեր վերջին հանդիպումն էր, վերջին զրույցը, վերջին տեսակցությունը հանրապետական հիվանդանոցում:

Երբ կազդուրվեց ու գնաց գյուղ, այլևս իրար չտեսանք: Մեկ-մեկ ես կամ ինքը զանգում, մեզ հուզող, հետաքրքրող հարցերի մասին կարծիքներ էինք փոխանակում, տպագրության հանձնված նոր գրքի («Սրտի կայծերը») շնորհանդեսի անցկացման մասին խոսում, պլաններ մշակում, ծրագրեր կազմում:

- Հաշված օրեր են մնացել,- ասում էր,- հենց գիրքս լույս տեսնի, հավաքվելու ենք, մի լավ քեֆ անենք:

- Որոշել եմ գյուղում, Հաղորտում անցկացնել, լավ չի՞ լինի,- հարցնում ու առանց պատասխանի սպասելու՝ ոգևորված շարունակում էր,- շատ մարդ չեմ հրավիրելու: Բայց ով էլ ինի՝ դու նստած ես լինելու սեղանի գլխին...

- Աթոռը հիմիկվանից պատրաստիր,- ասում, գոհունակությամբ ժպտում էի ես, իսկ նա իր միտքն էր առաջ տանում.

- Նշելու ենք և՛ իմ 80-ամյա հոբելյանը, և՛ գրքիս աշխարհ գալը: Միաժամանակ: Ուզում եմ ասել՝ լինելու է ուրախ, տոնական հանդես՝ նվիրված իմ ծննդյան օրվան և գրքի շնորհավորման: Այնպես որ՝ մի որոշ ժամանակ էլ համբերիր մինչև... հունիսի վերջը:

Զգացվում էր, որ շտապում է ու անհամբեր սպասում գալիք բաղձալի օրվան: Հիվանդության մասին ասես մոռացել էր, չէր էլ ակնարկում:

Ու իմ մտքով անգամ չէր անցնում, որ նրա բոլոր խոստումները սուտ պիտի դուրս գան: Եվ բնական է, մազաչափ անգամ չէի կասկածում, որ նա կարող է այդքան շուտ ու այդքան դյուրին ձևով մահվան իր ուղին հարթել: Ախր տակավին առույգ էր: Ախր քայլվածքը, նայվածքը վատ բան չէին հուշում: Սակայն եղավ այն, ինչ սովորաբար լինում է մեծ մարդկանց, լավ մարդկանց հետ: Ու նա հարազատներին, ճանաչողներին հորդորեց, ստիպեց մտաբերելու, կրկնելու Թումանյանի բառերը.

Բայց ուժեղից ուժեղը կա,
Եվ ամենից ուժեղը - մահ:

Ի դեպ, խորհրդաստ այս տողերը շատ եմ լսել նրանից: Պատեհ, անպատեհ առիթներով: Ընդհանրապես, զրուցելիս սիրում էր շեղումներ անել, տարիների փոշու տակ մնացած ուշագրավ դեպքեր, եղելություններ երևան հանել, մեծերից՝ մասնավորապես Սևակից, Շիրազից, Իսահակյանից, Կապուտիկյանից, Համո Սահյանից, մյուսներից մեջբերումներ կատարել, ասելիքը հարստացնել, հավաստի ու հետաքրքիր դարձնել: Այո՛, հաճելի զրուցակից էր՝ օժտված հումորի խորը զգացումով («Երբ մարդ կատակը չի հասկանում, կորած մարդ է». - Չեխով), համով, հոտով պատմելու ակնհայտ շնորհքով:

Ես չեմ հիշում մի օր, մի դեպք, որ նրա հետ զրուցելիս նայած լինենք ժամացույցին: Հոգնածության, ձանձրույթի մասին խոսք լինել չէր կարող: Ու ամեն անգամ հեռանալիս՝ պահի ազդեցության տակ Մեծն Լոռեցու տողերն էի հիշում. «Մինչև հիմա մեր ինտելիգենցիան չհասկացավ, թե ինչ բան է զրույցը. սա էլ մի տեսակ ստեղծագործություն է»:

Իրո՛ք, զրույցը նույնպես մեծ շնորհք է, որ բոլորը չունեն: Նորայրին այս շնորհքից շատ էր տրված, շա՜տ: Իսկ թե ինչքան անեկդոտներ, առածներ, զվարճալի պատմություններ գիտեր ու թե ինչպես էր պատմում... Մոտիկ մարդիկ, ծանոթ մարդիկ լավ են իմանում: Այսպիսին էր իմ անմոռաց ընկերը. շնորհալի բանաստեղծ, արձակագիր, լրագրող ու, որ կարևորն է, մայրենիի հիանալի մասնագետ, դարի լավագույն մանկավարժ, հայրենի գյուղի առօրյայով ապրող մարդ-քաղաքացի:

Իսկական հաղորդեցի: Ես չգիտեմ ուրիշ մեկին, որ այդքան սիրեր իր գյուղը, իր հողը: Նրա համար Հաղորտին լոկ ծննդավայր չէր: Սրբավայր էր, դրախտավայր, քաղաքամայր:

- Հաղորտին աշխարհի ամենասիրուն տեղն է, ամենասիրուն անկյունը,- ասում էր շատ հաճախակի ու շատ լուրջ տոնով, անուն հանած, բազում համագյուղացիների, հայրենի եզերքի համար իրենց կյանքը նվիրաբերած արծիվ տղաների անունները պարծանքով հիշելով, հիշատակելով: Ահա թե ով էր Նորայր Ավետիսյանը, որն ապրեց տքնանքով ու տաք քրտինքով, իր գրչի ու բրչի ազնիվ վաստակով, առանց փառքի ետևից վազելու, առանց շահի մասին մտածելու ու աշխարհից հեռացավ խոնարհ մանկան պես, առանց մի ճիչ արձակելու, առանց տնեցիների քունը խանգարելու: Մի օրում, մի քանի ժամում:

Ինքը, թերևս, այսպես էր կամենում, հավատացեք, իր գնալը չէր ափսոսում:

- Ութսուն տարի ապրել եմ, դեռ մի բան էլ ավելի, ու եթե վաղը, մյուս օրը Գաբրիել հրեշտակը գա, հլուհնազանդ իր կամքն եմ կատարելու,- այս վերջին ամիսներին ասում էր նա և հավելում.

- Դե, համ էլ մեր ձեռքին ի՞նչ կա. մի օր եկել, մի օր էլ պիտի գնանք: Հիշո՞ւմ ես Համո Սահյանի «Ինձ բաց թողեք, ես գնամ» բանաստեղծությունը.

Իմ առնելիքը առա,
Եվ իմ տալիքը տվի...
Իմ բախտից գոհ եմ այնպես,
Ինձ բաց թողեք, ես գնամ:

Այսպես խաղաղ, այսպես անվրդով, այսպես հանգիստ ու գոհ նա գնաց աշխարհից՝ թողնելով մի բարի, մի պայծառ անուն, որ բոլորի համար թանկ հարստություն է համարվում, ուրախություն, երջանկություն:

Ինչքա՜ն հուշեր, հիշողություններ կան՝ կապված նրա հետ, բայց հասկանալի է, բոլորը պատմել չի լինի: Ցավում եմ, շատ եմ ցավում, որ այսօր նա չկա: Շատ ավելի տխրում, վշտանում եմ, որ գոնե հնարավորություն չեմ ունեցել մասնակցելու հուղարկավորությանը (այդ օրերին Երևանում էի, «Շենգավիթ» բուժական կենտրոնում) և ունկերս դեռ վառվում են թոռնուհու՝ Մանուշի դողացող ձայնից. «Պապին մեռել է...»:

Օրեր, շաբաթներ են անցել: Ու էլի շատ օրեր, տարիներ կանցնեն, բայց անունը նրա չի իջնի ի՛մ, քո՛, նրա, շատ-շատերի շուրթերից: Նա մեր բոլորիս հիշողության մեջ կմնա իբրև ակտիվ կենսադիրքի տեր մտավորական, իբրև ուսուցիչ ու շինական ու, որ գլխավորն է, իբրև հայ մարդ, որ օրինակ էր ծառայում իր խոսքով ու գործով, ամեն ինչով: Ասելիքն իմ ուզում եմ ավարտել Թումանյանի գեղեցիկ տողերով, որ նա անգիր գիտեր ու պատեհ առիթներով կրկնում, հիշեցնում էր դիմացինին.

«Աշխարհքում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝ մարդ լինելը: Դրա համար է, որ Համլետը երբ ուզում է գովել իր հորը, ասում է՝ մարդ էր նա: Հեշտ բան հո՞ չի մարդ լինելը»:

Միքայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ
գ. Մեծ Թաղեր

ՀԵՐԹԱՓՈԽ ՈՒՆԻ ԹՈՂԱԾ

Բովանդակալից կյանքի 66-րդ տարիքում իր մահկանացուն կնքեց մեր մանկավարժական ոլորտի վաստակաշատ ու հարգարժան ներկայացուցիչներից մեկը՝ Օֆելյա Հարությունյանը:

Մտքի, հոգևոր անդաստանի անխոնջ ու նվիրյալ այդ սերմնացանը իր լուսավոր կյանքի նպատակը տեսնում էր մատաղ սերնդի մաքրամաքուր ու հմայիչ աշխարհում: Այդ աշխարհում էլ նա մանկավարժական աշխատանքի գրեթե չորս տասնամյակի ընթացքում հյուսեց իր գործունեության իրապատումը: Հոգու լույսն ու ջերմությունն անմնացորդ նվիրաբերեց հարազատ Գյուլեն Ճարտարի Ա. Հայրապետյանի անվան հ. 3 հիմնական դպրոցի տասնյակ սերունդների, նրանց շրջապատում միշտ ապրելով ամենօրյա սեր ու երջանկություն, խինդ ու բերկրանք: Իսկ այդ սաներից շատերն ընտրել են իրենց մաթեմատիկայի սիրելի ուսուցչուհու մասնագիտությունը:

Նա՝ ընկեր Օֆելյան, սերված լինելով բազմազավակ ընտանիքից (յոթ զավակների առաջնեկն էր), Ճարտարի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընտրեց մաթեմատիկայի բազմափորձ ուսուցիչ, հոր՝ Կարապետ Հայրապետյանի մասնագիտությունը:

1968-1969 ուստարում ավարտելով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը՝ երիտասարդ մասնագետն սկսեց աշխատել Գյուլեն Ճարտարի ութամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Ասենք, որ հետագայում ավագ քրոջ ճանապարհով գնացին նաև Ռոմիկ և Ռոբերտ եղբայրները: Երբ սկսվեց Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, Հարությունյան եղբայրներն էլ սրտի մղումով անմիջապես զինվորագրվեցին մեր ազատագրական պայքարին, դարձան խիզախ ազատամարտիկներ (Ռոմիկը՝ Ստեփանակերտում՝ տանկիստ, Ռոբերտը՝ Ճարտարում, Մարտունու հետևակային զորամասում): Ցավոք, Ռոբերտը, որ նաև հայրենի Գյուլեն Ճարտարի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի տնօրենն էր, պատերազմական մարտերի թեժ բովով անցած ազատամարտիկը խաղաղ պայմաններում, զորացրվելուց հետո զոհ գնաց մի դժբախտ պատահարի:

Ճարտար գյուղում մանկավարժների գերդաստան համարվող Հարությունյանների ընտանիքում մանկավարժի մասնագիտություն ընտրելու իսկական հերթափոխի երթ է: Կարապետ Հարությունյանի դուստրերից Լաուրան Գիշի գյուղի միջնակարգ դպրոցում երկար տարիներ եղել է տարրական դասարանի դասավար (այժմ թոշակառու է):

Այսօր գործող ուսուցիչներ են ընտանիքի երկու հարսները՝ Ուլյանան և Դոնարան: Մանկավարժի մասնագիտություն են ընտրել Կարապետ Հարությունյանի ութ թոռները, որոնցից դստեր՝ Օֆելյայի միակուճար որդին՝ Զավադ Հակոբյանը, քիմիա և կենսաբանություն է դասավանդում Ճարտարի երկու՝ հիմնական և ավագ դպրոցներում և շնորհալի ուսուցչի անուն ու համբավ ունի: Այս ուսումնականում նրա սաները շրջանային և հանրապետական մրցույթներում գրավել են առաջնակարգ տեղեր և արժանացել պարգևների:

Անգլերենի ուսուցչուհի է նրա կյանքի ընկերուհին՝ էլմիրա Բազիյանը:

Օֆելյա Հարությունյանը մեծ բանաստեղծ Բայրոնի նման կարող էր ասել. «Մեռնեմ էլ՝ ցավ չէ, հերթափոխ ունեմ թողած»:

Այս նույն նշանաբանով է կյանքում առաջնորդվում նաև Հարությունյանների ընտանիքի նոր սերունդը, որ շարունակում է ավագների գործը: Վաղն էլ, ով գիտե, ուսուցչուհի տատի՝ Օֆելյա Հարությունյանի գործը շարունակեն դեռ գարնանաբույր տարիք ունեցող թոռները՝ Արփինեն, Անին, և այդպես սերնդեսերունդ կշարունակվի այս մանկավարժական ընտանիքի մասնագիտական էստաֆետը:

Այո, Օֆելյա Հարությունյանը միշտ կապրի, կմնա իր հիշատակը հարգողների սրտերում ու հուշերում:

Տողերիս հեղինակը ևս, որպես նրա կրտսեր գործընկեր, գլուխ է խոնարհում նրա հիշատակի առջև:

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝ ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 6 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.07.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: